



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

4 (80)

ԵՐԵՎԱՆ

2018

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

4 (80), 2018

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.

Արամ Սաֆարյան

«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, ք.գ.թ.

Բաբկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն,

ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր

Հրանտիկ Հակոբյան

Իրավաբանության դոկտոր

Միհրան Դաբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Միջուկի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Ջորջ Կոստոպուլու

Կիրենանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)

Մամվել Մանուկյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, տ.գ.թ.

Սերգեյ Գրիգորյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

Տնտեսագիտության թեկնածու

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 4 (80), 2018թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒՆ
<p>Գլխավոր խմբագիր Գագիկ Հարությունյան</p>	<p>Գագիկ Հարությունյան Ապագային պատրաստ լինելու խնդիրը 4</p>
<p>Գլխավոր խմբագրի տեղակալ Արա Մարջանյան</p>	<p>Կարեն Վերանյան Հայաստանը և տարածաշրջանային վերջին զարգացումները 13</p>
<p>Պատասխանատու խմբագիր Խոնարհիկ Քարաուղլանյան</p>	<p>Վահե Մարգսյան Հարավօսական հիմնահարցի մասին 27</p>
<p>Պատասխանատու քարտուղար Լուսինե Բաղրամյան</p>	<p>Անժելա Մնացականյան ՀԱՊԿ-ը ՀՀ արտաքին ուսումնական քաղաքականության համատեքստում 40</p>
<p>Արեստակես Միմավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Սամվել Մանուկյան Վահագն Ազյան Վահրամ Հովյան</p>	<p>Աշոտ Մարկոսյան, Էյլանորա Մաթևոսյան Ազգային հարստություն ստեղծելու տնտեսության ներուժը 51</p> <p>Համլետ Ջաքարյան Օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում 62</p> <p>Վահրամ Հովյան Հայրենիք-սփյուռք համագործակցության մոդելների շուրջ 72</p>
	<p>Սամվել Մանուկյան Հայաստանի լրատվական կայքերի ազդեցության ուսումնասիրություն 84</p>
	<p>Նվարդ Մելքոնյան, Էլինա Ասրիյան Հայաստանյան «թավշյա» հեղափոխության բրենդինգի առանձնահատկությունները 97</p>
	<p>Վաչիկ Բրուսյան Էթնոմանկավարժության իրավադաստիարակչական ներուժը 114</p>
	<p>Վահե Պողոսյան ԱԺ պատգամավորի կարծրատիպերը ՀՀ-ում և ներկայիս իրավիճակը 121</p>

ԱՊԱԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Գազիկ Հարությունյան՝

Բանալի բառեր՝ ժամանակային տրիադա, ուղեղային կենտրոններ, ապագային պատրաստ լինելու ցուցիչ, արդի հիբրիդային իրողություններ, քաղաքակրթական ընդհանրություն:

Ինչպես հայտնի է, արդի ոչ գծային բնույթի գործընթացների ադեկվատ ըմբռնումը և դրանց համապատասխանորեն արձագանքելը հնարավոր են միայն ժամանակային գործոնը կամ, այլ խոսքերով՝ «ժամանակային տրիադայի» կանոնները հաշվի առնելու պարագայում [1, 2]: Նման մոտեցումը ենթադրում է, որպեսզի ծագած հիմնախնդիրներին լուծում տալն ուղեկցվի հետևյալ քայլերով.

1. Ելնելով ներկայի իրողություններից՝ ըմբռնել և գնահատել հիմնախնդրի (կամ հիմնախնդիրների համախումբը) կարևորությունը, կիրառելով համալիր և միջդիսցիպլինար բնույթի վերլուծությունների մեթոդաբանությունը;
2. Ստացված արդյունքները համադրել և համեմատել անցյալում տեղի ունեցած նման նախադեպերի հետ;
3. Վերոնշյալ երկու փուլում կատարած վերլուծություններից բխող տեսակետները դիտարկել ապագայի վերաբերյալ կատարված և հնարավորինս հիմնավորված կանխատեսումների համատեքստում;
4. Հիմնախնդրի առնչությամբ անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ ձևավորված տեսանկյունների ու պատկերացումների հիման վրա մշակել խնդրի լուծմանն ուղղված գործողությունների ալգորիթմը:

Ակնհայտ է, որ ներկայացված մոտեցումը հայտնությունն չէ, և այդ ոճով են գործում այն երկրներում, որոնք ունեն գիտակրթական և մտավոր

¹ «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

կապիտալի անհրաժեշտ մակարդակ ու այդ ռեսուրսների հիման վրա ձևավորված համապատասխան «ուղեղային կենտրոնների» (ՈւԿ) համակարգ (*տե՛ս, օրինակ*, [3]): Նկատենք, որ նման մեթոդաբանությամբ գործելու փորձեր են կատարվում նաև զարգացող երկրներում: Օրինակ, Ադրբեյջանի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնում իրագործվում են ուսումնասիրություններ պատմական հիշողության ինստիտուցիոնալացման ուղղությամբ¹, իսկ այդ երկրի Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը կից գործում է «Ֆուտուրոլոգների ընկերակցությունը»², որտեղ ներկայի զարգացումների միտումների, ինչպես նաև ապագայում սպասվող տարբեր սցենարների և ռիսկերի վերլուծության հիման վրա մշակվում են դրանց նախապատրաստվելու անհրաժեշտ գործողությունները [4]:

Որոշ սցենարներ և «ներկայի ու ապագայի անորոշությունները». Վերը բերված նկատառումների համատեքստում մեկ անգամ ևս արձանագրենք, որ արդի աշխարհակարգը ներկայում ենթարկվում է լրջագույն՝ որակական վերափոխումների³, և այդ համատեքստում փորձենք առանձնացնել ու դիտարկել դրանցից մի քանիսը: Մասնավորապես, առանձնահատուկ մտահոգություն է պատճառում այն հանգամանքը, որ արևմտյան մենատիրական լիբերալ գաղափարախոսությունն այսօր ցուցաբերում է այն նշանները, որոնք հատուկ էին ԽՍՀՄ-ում մենատիրական գաղափարախոսության կազմալուծման և դրան հետևած փլուզման ժամանակաշրջանին: Նման զարգացումը, թերևս, սպասելի էր. հիշենք Դանիել Բելի խոսքերն այն մասին, որ «շուկայի տոտալ հաղթանակն ավելի վտանգավոր է, քան մենատիրական սոցիալիստական գաղափարախոսության հաստատումը» [5]: Տպավորությունն այնպիսին է, որ Բելի կանխատեսած վտանգներն այսօր նյութականացման փուլում են գտնվում: Միննույն ժամանակ, պետք է ենթադրել, որ «գաղափարախոսական դրդապատճառներով» արդի որևէ տերության փլուզումը, անշուշտ, դժվար թե նույնությամբ կրկնի ԽՍՀՄ փլուզման նախադեպը: Սակայն, եթե ընդունենք Մեծ Բրիտանիայի հայտարարած «բրեքսիթը» կամ Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի

¹ Տե՛ս, օրինակ, *Garagezov P.*, Коллективная память: Как создаются, сохраняются и воспроизводятся коллективные представления о прошлом, 2013г., <http://kniga.seluk.ru/k-istoriya/832190-9-rauf-garagezov-kollektivnaya-pamyat-kak-sozdayutsya-sohranyayutsya-vosproizvodiyatsya-kollektivnie-predstavleniya-proshl.php>

² Azerbaijan Future Studies Society (AFSS), www.futerstudies.az.

³ *Арутюнян Г.*, Фрагментированный или «довестфальский» миропорядок, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=16546.

(NAFTA) չեղարկումը որպես մասնատման գործընթացներ, ապա կարելի է արձանագրել, որ դրանց հետևանքները կարող են զգալիորեն փոխել աշխարհի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական «լանդշաֆտը»:

Բոլոր պարագաներում կարելի է փաստել, որ լիբերալ գաղափարախոսության մաս կազմող գլոբալացման գործընթացն այսօր սկսել է դանդաղել և, ենթարկվելով «առևտրական պատերազմների» տրամաբանությանը, երբեմն փոխարինվում է մեկուսացման երևույթներով: Սակայն իրական հարթությունում դեգլոբալացմանը զուգահեռ այսօր, չնայած որոշ երկրների դիմադրությանը, արագացված ընթանում է գլոբալացում վիրտուալ տարածքում: Այդ համատեքստում չի կարելի բացառել, որ զուգահեռ «վիրտուալ աշխարհի» և նրա բնակիչ *«homo virtualicus»-ի* ձևավորումը կարող է արմատապես փոխել մարդկության պատկերացումները աշխարհակարգի, գաղափարախոսության և քաղաքակրթության վերաբերյալ [6]: Բացառված չէ նաև, որ այդ իրողություններում *«homo virtualicus»-ների* միանան ռոբոտները, և եթե փորձենք մի փոքր հումորով էքստրապոլացնել արդի միտումները, ապա ապագա աշխարհի սոցցանցերում, անշուշտ, որոշ վիրտուալ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ, սկիզբ կառնի լայն շարժում ի պաշտպանություն «ռոբոտների քաղաքացիական իրավունքների», որի ընթացքում չեն մոռացվի նաև վերջիններիս գենդերային փոխհարաբերությունների հարցերը և դրանք օրենսդրական դաշտ տեղափոխելու անհրաժեշտությունը:

Սակայն, եթե վիրտուալ հնարավոր իրողություններից վերադառնանք ավելի նյութականացված թեմաների, ապա կարելի է փաստել, որ վերլուծաբանական հանրությունում հասունանում է անհանգստությունը՝ պայմանավորված տրանսազգային ֆինանսական ընկերությունների, ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների և մասնավոր ռազմական զինված ուժերի ազդեցության կտրուկ աճով: Համաձայն որոշ սցենարների, տեսանելի ապագայում ազգային պետությունները կարող են վերածվել ուղղակի վարչական միավորների, որոնց կառավարումը, ղեկավարվելով սեփական կորպորատիվ շահերով, կիրականացնեն նման կազմակերպությունները¹: Ընդհանրական ներկայացված նման զարգացումների առանձնահատկություններից է դրանցում պարունակվող «անորոշու-

¹ *Переслегин С.*, Прогнозируемое будущее, http://www.noravank.am/rus/video/detail.php?ELEMENT_ID=17547, *Переслегин С.*, «Новая регионализация», <https://www.youtube.com/watch?v=IqVcpFKLsmA>, *Тьерри Мейсан*, Открытое письмо президенту Трампу о последствиях событий 11 сентября, <http://www.voltairenet.org/article202671.html>.

թյունների» մեծ բաժինը, ինչը արդի հիբրիդային պատերազմների հիմնական բնութագրիչներից է¹ [7]:

Վերը դիտարկված խնդիրներն ակտուալացնում են քանակական այնպիսի ցուցանիշների ստեղծումը, որոնք կարտացոլեին այս կամ այն երկրի պատրաստվածության չափն ապագայում սպասվող զարգացումների դեպքում:

«Ապագային պատրաստ լինելու ցուցիչ»². Այսօր տեղեկատվական շրջանառության մեջ են գտնվում մի քանի տասնյակ, եթե ոչ հարյուրավոր վարկանիշային աղյուսակներ և ցուցիչներ, որոնք այս կամ այն չափով բնութագրում են երկրների ու հասարակությունների անվտանգության, տնտեսության, ժողովրդավարության, մամուլի ազատության և այլ ոլորտներում տիրող իրավիճակը: Հայտնի է նաև, որ նման վարկանիշները միշտ չէ, որ կրում են օբյեկտիվ բնույթ և երբեմն արտահայտում են դրանք հաշվարկող կազմակերպությունների ազգային կամ կորպորատիվ շահերը:

Համաձայն Վալդայի ակումբի և Հասարակական կարծիքի ուսումնասիրության համառուսական կենտրոնի (*ВЦИОМ*) փորձագետների հիմնավորված մոտեցումների, այդ բոլոր ցուցանիշները և վարկանիշներն ունեն մի կարևոր թերացում՝ դրանցում *զարգացում* հասկացությունն ընդունվում է որպես լոկ քանակական աճ, բայց ոչ որակական անցում մի վիճակից մյուսը³: Այդ իսկ պատճառով վերոնշյալ կազմակերպությունների փորձագետները սկսել են աշխատել մի նոր՝ «Ապագային պատրաստ լինելու ցուցիչ» նախագծի վրա, որտեղ փորձել են զերծ մնալ վերոնշյալ թերացումից: Ըստ այդ նորարարական նախագծի հեղինակների, ապագայի կերպարը պարունակում է տեխնոլոգիական «ճեղքումներ», մշակույթի վերափոխում, հասարակական հարաբերությունների էական վերափոխումներ, կառավարման նոր համակարգերի ներմուծում և այլ փոփոխություններ, որոնք կարող են որակական փոփոխությունների հանգեցնել առաջիկա 15-20 տարում: Ելնելով այդ միանգամայն հիմնավորված նկատառումներից՝ խնդիր է

¹ Այս առիթով նկատենք, որ ժամանակին դասական ֆիզիկայի օրենքներին չենթարկվող քվանտային ֆիզիկայի օրինաչափությունները բացատրելու նպատակով ֆիզիկոս Էռնեստ Շրյոդինգերն առաջարկել էր իր հայտնի «անորոշությունների տեսությունը»: Ելնելով այդ հանգամանքից՝ չի կարելի բացառել, որ արդի հիբրիդային իրողություններն ըմբռնելու համար ապագայում շրջանառության մեջ կմտնի, օրինակ, «քվանտային քաղաքագիտություն» եզրը, քանի որ ներկայի օրինաչափությունները, մասնավորապես հաշվի առնելով «անորոշությունների» աճի հանգամանքը՝ արդեն չեն ենթարկվում դասական քաղաքագիտության պատկերացումներին:

² *Индекс готовности к будущему.*

³ <http://ru.valdaiclub.com/a/highlights/indeks-gotovnosti-k-budushchemu/>

դրվել պարբերաբար վերլուծել տարբեր երկրների պատրաստվածությունը՝ պատասխանելու վաղվա օրվա մարտահրավերներին, նրանց դերակատարումն ապագայի սցենարներում և մրցունակությունը մի շարք քաղաքական, տնտեսական չափանիշների տեսանկյունից: Վիճակագրական տվյալների վերլուծության և փորձագետների գնահատականների հիման վրա դիտարկվել են հետևյալ ոլորտները.

1. *Տեխնոլոգիաներ* (ըստ «թվային գրագիտության» և «պետության կողմնորոշումը բարձրտեխնոլոգիական արտադրությունների հանդեպ» ցուցանիշների);
2. *Տնտեսություն* (ըստ «աշխատանքի բարձր արտադրողականության» և «կայուն զարգացման» ցուցանիշների);
3. *Կրթություն* (ըստ «կրթական ծառայությունների ազգային շուկայի ծավալի» և «տաղանդների ներգրավման և պահպանման» ցուցանիշների);
4. *Գիտություն* (ըստ «գիտական ներուժի» և «գիտական արդյունքներն արտադրությունում ներդնելու» ցուցանիշների);
5. *Հասարակություն* (ըստ «բժշկական ծառայությունների որակի», «մեզապոլիսների քանակի» և «բնակչության ներգրավվածությունը ցանցային բնույթի ծառայություններում» ցուցանիշների);
6. *Մշակույթ և կոմունիկացիաներ* (ըստ «ոլորտի ենթակառուցվածքների զարգացման» և «կոմունիկացիաների հասանելիության» ցուցանիշների);
7. *Ռեսուրսներ և բնապահպանություն* (ըստ «այլընտրանքային էներգետիկայի օգտագործման» և «աղբի ուտիլիզացիայի համակարգի ներդրման» ցուցանիշների);
8. *Ինքնիշխանություն* (ըստ «երկրի և քաղաքացիներին պաշտպանելու նպատակով իշխանությունների ուժ կիրառելու կարողության» ցուցանիշի);
9. *Կառավարման համակարգ* (ըստ «պետհամակարգի կառավարման ճկունության» և «բնակչությունն ու ռեսուրսները պետության կողմից մոբիլիզացնելու ունակության» ցուցանիշների);
10. *Միջազգային ազդեցություն* (ըստ «երկրի միջազգային ազդեցության» և «ազգային բիզնեսի գործունեության ազդեցության» ցուցանիշների):

Հատկանշական է, որ նախագծի հեղինակները հարցումների առաջին տեղում տեղադրել են երկրի տեխնոլոգիական հնարավորությունները, իսկ 3-րդ և 4-րդ տեղերում՝ կրթության և գիտության չափանիշները՝ դրանով

իսկ ընդգծելով այդ ոլորտների կարևորությունն ապագային պատրաստ լինելու խնդրում: Կատարված հետազոտության արդյունքում 20 երկրների համար ստացված ցուցիչները, ըստ իրենց հավաքած միավորների (բարձրագույն ցուցանիշը՝ 1 միավոր), ներկայացված են *Աղյուսակում*:

Աղյուսակ

«Ապագային պատրաստ լինելու ցուցիչը»¹

	Երկիր	միավոր		Երկիր	միավոր
1	Գերմանիա	1.00	11	Իտալիա	0.43
2	ԱՄՆ	0.96	12	Ռուսաստան	0.34
3	Մեծ Բրիտանիա	0.92	13	Հնդկաստան	0.19
4	Ճապոնիա	0.90	14	Մեքսիկա	0.15
5	Ֆրանսիա	0.74	15	Թուրքիա	0.13
6	Կանադա	0.69	16	Սաուդ. Արաբիա	0.11
7	Կորեայի Հանրապետություն	0.68	17	Արգենտինա	0.11
8	ԵՄ	0.67	18	Բրազիլիա	0.1
9	Ավստրալիա	0.60	19	Հարավաֆրիկյան Հանրապետություն	0.07
10	Չինաստան	0.60	20	Ինդոնեզիա	0.00

Գերմանիայի գտնվելն աղյուսակի առաջին հորիզոնականում պայմանավորված է, մասնավորապես, նրա տնտեսական բարձր ցուցանիշներով (այդ ոլորտում այդ երկիրը գրավել է առաջին տեղը ոլորտային հարցումներում) և նրա «կայուն 2-րդ տեղով» տեխնոլոգիական, գիտական ու կրթական ոլորտներում: Առաջատար հնգյակում Ճապոնիայի տեղ զբաղեցնելը հիմնականում պայմանավորված է նրա տեխնոլոգիական գերազանցությամբ (առաջին տեղը ոլորտում):

Աղյուսակից հետևում է նաև, որ քաղաքակրթական ընդհանրության տեսանկյունից առաջատար դիրք են գրավում անգլոսաքսոնյան հանրության երկրները (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա և Ավստրալիա): Նկատենք, որ գիտական և կրթական ոլորտներում կատարված վերլուծությունների արդյունքներով Միացյալ Նահանգները գրավել է առաջին տեղը: Այս առիթով նշենք, որ անգլոսաքսոնյան հանրությունն առանձնանում է

¹ <https://wciom.ru/index.php?id=236&uid=116462>

մյուսներից նաև «Ժամանակային տրիադայի» սկզբունքներին հավատարիմ լինելու հանգամանքով: Բրիտանացիները կարողացել են իրենց պատմության ընթացքում խուսափել ներքաղաքական ցնցումներից, մինչդեռ այլ երկրների փորձից հայտնի է, որ հեղափոխություններին բնորոշ են ուտոպիստական մոտեցումներ ապագայի հանդեպ և ժխտողական վերաբերմունք այն ամենի հանդեպ, ինչը կապված է անցյալի հետ: Այս վերջինի կապակցությամբ տեղին է մեջբերել Մաքսիմ Կանտորի խորհմաստ միտքն այն մասին, որ *«քանդված հյուղակի քարերից կարելի է կառուցել ևս մեկ հյուղակ, բայց այդ քարերից տաճար կառուցել անհնար է»* [8]: Հիշենք, որ բրիտանական միակ հեղափոխությունը տեղի է ունեցել 17-րդ դարում, և անգամ Կարլոս 1-ինին 1649թ. մահապատժի ենթարկելուց հետո անգլիացիները կարողացան փոքր-ինչ խմբագրված տարբերակով վերականգնել թագավորական իշխանության ինստիտուտը, և այսօր այդ մոտեցումներն այս կամ այն չափով են կիրառվում անգլոսաքսոնյան հանրությունում: Դրան զուգահեռ՝ անգլոսաքսոնյան հանրությունում խիստ կարևորվում են կանխատեսման տեխնոլոգիաները, և, օրինակ, ԱՄՆ-ում, գործում են դրանց տիրապետող ամենահեղինակավոր կազմակերպությունները:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Թուրքիան նույնպես ընդգրկված է ապագային պատրաստ առաջատարների ցանկում (15-րդ տեղ), ինչը հետևանք է այն իրողության, որ այդ երկրում, հատկապես վերջին տարիներին, մեծ ուշադրություն է դարձվում տեխնոլոգիական և գիտակրթական ոլորտներին: Նման քաղաքականության ձևավորումը, թերևս, պայմանավորված է նաև թուրքական մոտ 100 «ուղեղային կենտրոնների» գործունեությամբ, որոնց ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացի վրա բավական մեծ է [4]:

Վարկանիշային աղյուսակի ձևավորման մեթոդաբանական առանձնահատկությունների պատճառով ներկայացված ցուցակում բացակայում է Հայաստանը: Մինչդեռ ապագային պատրաստ լինելու խնդիրն ավելի քան ակտուալ է, և պետք է ձգտել նման տիպի հետազոտությունները կատարել նաև մեր հանրության շրջանակներում: Կարծում ենք նաև, որ այդ հետազոտությունները պետք է ներառեն ոչ միայն հայաստանյան խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է ողջ տարածաշրջանն «անորոշությունների մատախուղի» (*համաձայն Ալեքսանդր Բարտոշի եզրաբանության*) մեջ պահող Ադրբեջանին [7]:

Սեպտեմբեր, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Հարությունյան Գ.*, «Բարդությունների» աղեկվատ ընկալման ակտուալությունը, «Գլոբուս», #6(95), էջ 4, 2018:
2. *Бартош А.*, Агрессия нового типа, НВО, #18(996), 2018.
3. *Арутюнян Г.*, Распад «системы» и формирование будущего, Ер., НОФ «Нораванк», с. 90, 2011, «Информационная безопасность» (гл. ред. Арутюнян Г.), Ер., НОФ «Нораванк», с. 176, 2017.
4. Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա), Երևան, «Նորավանք» ԳԿՀ և «Ամբերդ» ՀՊՏՀ հետազոտական կենտրոն, 2015:
5. *Белл Д.*, Грядущее постиндустриальное общество, М., Академия, 1999.
6. *Harutyunyan G.*, «Homo virtualicus» in the context of postdemocracy and information security, 21-st Century, #1(9), p. 3, 2011.
7. *Бартош А.*, Туман гибридной войны, НВО, #33(1011), 2018.
8. *Максим Кантор*, Лисенок и черепаха, STORY, # 9 (116), с. 81, 2018.

ԱՊԱԳԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Փագիկ Հարությունյան

Ամփոփագիր

Ներկայում ընթացող աշխարհակարգի փոփոխությունն ուղեկցվում է ոչ գծային օրինաչափությունների ենթարկվող և անորոշությունների մեծ ծավալ պարունակող գործընթացներով: Նշված հանգամանքներն էապես բարդացնում են արդի իրողությունների աղեկվատ գնահատումը և սահմանափակում ապագայի վերաբերյալ հիմնավորված կանխատեսումներ կատարելու կարողությունները: Այս ամենն իր հերթին դժվարացնում է ծագած քաղաքական խնդիրների առնչությամբ քաղաքական ընտրանիների կողմից օպտիմալ որոշումներ ընդունելու հնարավորությունները: Ստեղծված իրադրությունն ակտուալացնում է վերլուծաբանական արդյունավետ մեթոդների ընտրության խնդիրը, և այդ համատեքստում հոդվածում նաև դիտարկվել են տարբեր երկրների «ապագային պատրաստ լինելու» հատկանիշով «Վալդայի ակումբի» կողմից մշակված վարկանիշային մոտեցումները:

ПРОБЛЕМА ГОТОВНОСТИ К БУДУЩЕМУ*Գագիկ Արությունյան*

Резюме

Нынешние изменения мироустройства сопровождаются процессами, подчиняющимися нелинейной логике и содержащими значительную долю неопределенности. Эти обстоятельства существенно усложняют адекватную оценку современных реалий и ограничивают возможности обоснованного прогнозирования будущего. Все это, в свою очередь, затрудняет для политических элит принятие оптимальных решений относительно возникающих политических проблем. Сложившаяся ситуация актуализирует задачу выбора эффективных аналитических методов, и в этом контексте в статье рассматриваются также разработанные «Валдайским клубом» рейтинги стран по степени их «готовности к будущему».

THE PROBLEM OF READINESS FOR THE FUTURE*Gagik Harutyunyan*

Resume

The currently ongoing change of the world order is accompanied by processes that occur non-linearly and contain many uncertainties. These circumstances significantly complicate the adequate assessment of the modern realities and restrict the ability to forecast the future in a substantiated manner. In turn, all of this makes it harder for the political elites to make optimal decisions about the political problems. Such situation turns the issue of effective analytical methods selection into an urgent matter. In this context, the article also reviews the rating approaches developed by the Valdai Club for assessing various countries in terms their “readiness for future”.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Կարեն Վերանյան՝

Բանալի բաներ՝ սահմանային խախտումներ, նախիջևանյան սահման, ՀԱՊԿ, պատժամիջոցներ, Կասպյան համաձայնագիր, Մերկել, ՆԱՏՕ:

Հայաստանյան զարգացումներ. անվտանգային հարցեր

Հայ-թուրքական սահմանային խախտումների հաճախակիացում. Վերջին մի քանի ամիսների ընթացքում ականատես ենք լինում հայ-թուրքական սահմանի խախտումների հաճախակիացման միտումների, ինչն իսկապես մտահոգիչ է: Նախորդ տարիների կտրվածքով նույնպես հայ-թուրքական սահմանը զերծ չի եղել Թուրքիայի կողմից սահմանախախտման միջադեպերից, սակայն, որպես կանոն, դրանք չեն առանձնացել այնպիսի հաճախակիությամբ, ինչ տեղի է ունենում ներկայում: Հայաստանյան փորձագիտական հանրության մի մասը սահմանային խախտումների հաճախակիացման միտումները պայմանավորում է նրանով, որ Հայաստանում իշխանափոխությունից հետո Թուրքիան փորձում է ստուգել հայ-թուրքական սահմանը վերահսկող ՌԴ սահմանապահ ծառայության զգոնությունը, խոցելիությունը: Հիշեցնենք, որ սահմանային խախտման դեպքերից մեկի ժամանակ Հայաստանում Ռուսաստանի ԱԴԾ Սահմանապահ վարչության աշխատակիցների կողմից հայտնաբերված սահմանախախտը բացահայտ հետախուզական առաքելություն ուներ. նրա մոտ հայտնաբերվել էր բջջային հեռախոս, որում առկա էին պետական սահմանին տեղակայված ինժեներական կառույցների և պատնեշների լուսանկարներ ու ֆայլեր:

Փորձագիտական այլ գնահատականներով՝ հայ-թուրքական սահմանային խախտումները մշտապես ակտիվ են եղել, պարզապես ռուսական կողմը փորձում է ընդգծել Հայաստանում ռուսաստանյան սահմանապահ առաքելության կարևորությունը՝ վերջին շրջանում հայ-ռուսական հարաբերություններում առկա որոշ անհամաձայնությունների համատեքստում:

¹ «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Լարվածության աճ նախիջևանյան սահմանին. Վերջին ամիսներին լարվածությունն աճեց նախիջևանյան սահմանի գրեթե ողջ երկայնքով: Մահմանային լարվածությունը չսահմանափակվեց միայն փոխիրաձգություններով, տեղի ունեցան նաև կողմերի դիրքային նոր վերադասավորումներ: Ադրբեջանը հաղորդում էր Հայաստանի հետ Նախիջևանի սահմանին իբր արձանագրած հաջողությունների, հայկական զինված ուժերից շուրջ 11 հազ. հեկտար տարածք հետ գրավելու, նոր դիրքեր տեղակայելու մասին, ինչը պաշտոնապես հերքեց հայկական կողմը՝ ընդգծելով, որ ադրբեջանական զինուժը տեղաշարժեր և ինժեներական աշխատանքներ է իրականացնում բացառապես իրենց տարածքում: Ոչ պաշտոնական հաղորդագրություններից և փորձագիտական հիմնական գնահատականների վերլուծությունից էլնելով՝ կարող ենք ենթադրել, որ այս ընթացքում, ընդհանուր վերցրած, նախիջևանյան ուղղությամբ իսկապես երկուստեք տեղ են գտել դիրքային որոշակի վերադասավորումներ, ինչի հետևանքով որոշ հատվածներում շահեկան դիրքեր կարողացել է ձեռք բերել հայկական կողմը, որոշ մասերում՝ հակառակորդը: Առհասարակ, անհրաժեշտ է հստակեցնել, որ նախիջևանյան միջպետական սահման, որպես այդպիսին, փաստացի, թերևս, գոյություն չունի, ինչն էլ հնարավոր է դարձնում սահմանի այս կամ այն հատվածում դիրքերի վերադասավորումների գործընթացը: Նախիջևանյան սահմանին տիրող իրավիճակի մտահոգիչ լարվածության մասին էր վկայում սահման պաշտոնական այցելությունների հաճախակիացումը: Ավելին, հայկական կողմը դիմել էր ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ-դեսպան Անջեյ Կասպշիկի գրասենյակին՝ սահմանի նախիջևանյան հատվածում դիտարկում կազմակերպելու առաջարկով: Արձանագրենք նաև, որ այս ամենի արդյունքում նախիջևանյան սահմանային թեմատիկան դարձել է Հայաստանում սահմանային իրադրությունը գնահատող պաշտոնական հաղորդագրությունների մաս (նշվում է «նախիջևանյան սահման» եզրը):

Հայ-ռուսական հարաբերությունները. նոր միտումներ ՀԱՊԿ շրջանակում. Հայաստանում իշխանությունը ստանձնելու առաջին օրերից վարչապետ Ն.Փաշինյանը բազմիցս հայտարարել է, որ փոփոխություններ չեն նախատեսվում ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական գերակայություններում, ինչը խոշոր հաշվով այսօր տեսնում ենք: Ասել է թե՛ շարունակվում է Հայաստանի ռազմավարական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ համագործակցության խորացման նախկին վեկտորը, Հայաստանը պատրաստակամություն է հայտնել զարգացնել գործակցությունը ԵԱՀԿ և ՀԱՊԿ

շրջանակներում: Մեծ ուշադրություն է դարձվում ԵՄ-ի հետ համագործակցության զարգացմանը, ԵՄ-ի հետ ստորագրված շրջանակային համաձայնագրի իրագործման գործընթացին: Կարևորվում է ԱՄՆ գործընկերային համագործակցությունը տարբեր ոլորտներում, հայկական կողմը հետևողական և կիրառական քայլեր է ձեռնարկում նաև ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացման ուղղությամբ:

Այնուհանդերձ, վերջին շրջանում հայ-ռուսական հարաբերություններում նկատելի էր որոշակի լարվածություն, ինչը, թերևս, պայմանավորված էր ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի՝ հայկական կողմի նախաձեռնած կալանավորմամբ: Այստեղ պետք է ընդունել, թերևս, որ կար որոշակի շտապողականություն: Մյուս կողմից, առկա լարվածությունն ինչ-որ առումով բնականոն է, երբ նոր իշխանությունը փորձում է ճշգրտել իր հարաբերությունները և դիրքորոշումն այս կամ այն երկրի, տվյալ դեպքում՝ ՌԴ-ի հետ: Ռուսական կողմն, իր հերթին, մտահոգություն ունի, որ դա կարող է բացասաբար անդրադառնալ առհասարակ ՀԱՊԿ միջազգային հեղինակության վրա, քանի որ Յու.Խաչատուրովի կալանավորման որոշումը կայացվել էր վերջինիս պաշտոնավարման ընթացքում: Նշենք, որ չնայած արտաքին տարբեր ազդակներով և լծակներով փորձեր էին կատարվում արհեստականորեն սրացում հաղորդել հայ-ռուսական երկկողմ հարաբերություններում առկա քաղաքական անհամաձայնություններին, ընդհանուր վերցրած՝ դրանք կրում են զուտ իրավիճակային նշանակություն և չեն կարող ունենալ ռազմավարական-հեռանկարային հետևանքներ երկկողմ դաշնակցային ռազմավարական համագործակցության ընդհանուր տրամաբանության վրա:

Յու.Խաչատուրովի հնարավոր փոխարինման գործընթացից, որը նախաձեռնել է հայկական կողմը, հասկանալի պատճառներով առաջին հերթին կձգտեն օգտվել Անկարան և Բաքուն: Ա.Լուկաշենկոյի և Ն.Նազարբանի աջակցությամբ փորձեր կարվեն հնարավորինս ձգձգել և տապալել ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում հայկական կողմի հաջորդ թեկնածուի առաջադրումը՝ միևնույն ժամանակ ճնշումներ գործադրելով Մոսկվայի վրա: Վերջերս կայացած Վ.Պուտին-Ա.Լուկաշենկո հանդիպման քննարկման հարցերից մեկն էլ վերաբերում էր ՀԱՊԿ գործող գլխավոր քարտուղարի շուրջ զարգացումներին: Ա.Լուկաշենկոն ակնարկել էր, որ ՀԱՊԿ-ում ժամանակին առաջարկվում էին կառույցի գլխավոր քարտուղարի համար այլ թեկնածուներ, սակայն Մոսկվան այդպես էլ ականջալուր չէր արձակում: Նման հայտարարությունն սպասելի էր այն առումով, որ Յու.Խաչատուրովի շուրջ ծագած աղմուկը լավ առիթ է ՀԱՊԿ անդամներ Բելառուսի, Ղազախստանի

համար՝ Ռուսաստանի հետ ունեցած իրենց խնդիրները կամ հակասությունները բարձրաձայնելու իմաստով: Հիշեցնենք, որ մինչ Ա.Լուկաշենկոն, Յու.Խաչատուրովի գործի հետ կապված իր «մտահոգությունն» էր հայտնել նաև Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը: Ավելին, թե՛ Բելառուսում, թե՛ Ղազախստանում կա որոշակի շահագրգռվածություն առ այն, որ խնդրի շահարկումը լավ հնարավորություն է ՀԱՊԿ-ում թուլացնելու Հայաստանի դիրքերը՝ դրանով իսկ ամրապնդելով իրենց դաշնակիցների՝ թուրքադրբեջանական տանդեմի անուղղակի քաղաքական ազդեցությունը:

Եվ ամենևին էլ զուգադիպություն չէ, որ Բաքվում հենց հիմա են սկսել ակտիվ քննարկել ՀԱՊԿ-ին Ադրբեջանի հնարավոր անդամակցության հարցը: Նախ՝ ադրբեջանցիներն, իրենց հերթին, փորձում են օգտվել հայառուսական քաղաքական հարաբերություններում առկա լարվածությունից և ազդել ՀԱՊԿ գործընթացների վրա՝ ընդհուպ մինչև կառույցին անդամակցությունը: Երկրորդ՝ հարևան երկրում ՀԱՊԿ-ին Ադրբեջանի հնարավոր անդամակցության հարցի բարձրացումը, անշուշտ, նաև պայմանավորված է Յու.Խաչատուրովի անվան հետ կապված միջադեպով: Յու.Խաչատուրովի կալանման գործը թե՛ ՀԱՊԿ-ի ներսում, թե՛ նրանից դուրս գործող որոշ շահագրգիռ ուժեր կարող են օգտագործել առհասարակ ՀԱՊԿ՝ որպես ռազմաքաղաքական տարածաշրջանային կառույցի հեղինակությունը վարկաբեկելու նպատակով, ինչը մտահոգում է ռուսական կողմին: Հիշեցնենք, որ վերջերս Բաքվում կայացել էր հասարակական քննարկում՝ նվիրված ՀԱՊԿ-ին Ադրբեջանի հնարավոր անդամակցությանը: Քննարկման ժամանակ Ադրբեջանի Մեջլիսի պատգամավոր, Ռուսաստան-Ադրբեջան միջխորհրդարանական համագործակցության ղեկավար Ալի Հուսեյնլին հայտարարել է, որ նոր աշխարհաքաղաքական իրավիճակում չպետք է բացառել Ադրբեջանի՝ ՀԱՊԿ-ին միանալու հավանականությունը: Նրա բնորոշմամբ, «ՀԱՊԿ-ին Ադրբեջանի անդամակցության դեպքում արցախա-ադրբեջանական հակամարտությունը ՌԴ-ի համար կվերածվի ՀԱՊԿ անդամ երկու գործընկերների միջև հակամարտության, և դրանում ՌԴ-ն ակտիվանալու հիմքեր կունենա»:

Եվ իսկապես, ՀԱՊԿ-ին Ադրբեջանի անդամակցության հավանականությունը նախկինի համեմատ մեծացել է: Անցած տարիներին նման թեմա, թերևս, չէր քննարկվում անգամ հասարակական-քաղաքական մակարդակով, իսկ հիմա ոչ միայն արծարծվում է երկրի ներսում, այլև առհասարակ բերվում է տարածաշրջանային մակարդակ: ՀԱՊԿ-ին Ադրբեջանի հնարավոր անդամակցության հետ կապված հայտարարությունները դեռ չեն նշա-

նակում, թե վերջնական, թեկուզ ֆորմալ առումով կողմերի միջև կոնսենսուս կա, բայց, ամեն դեպքում այն, որ հարցը քննարկման փուլում է, պետք է արձանագրել:

Հիմք ընդունելով վարչապետ Ն.Փաշինյանի հայտարարությունները՝ զարգացնելու և է՛լ ավելի արդյունավետություն հաղորդելու գործակցությանը ՌԴ-ի հետ՝ կարծում ենք, որ հայ-ռուսական առաջիկա հարաբերությունները կլինեն առավել պրագմատիկ-կառուցողական, թիրախային, ինչը, թերևս, հենված կլինի փոխշահավետ սկզբունքների վրա:

Տարածաշրջանային զարգացումներ

Կասպից ծովի իրավական կարգավիճակը սահմանող համաձայնագիրը. Օգոստոսի 12-ին կասպյան 5 երկրները երկարատև բանակցություններից հետո վերջապես կարողացան գալ համաձայնության Կասպից ծովի ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև դրա մակերեսի բաշխման հարցերում¹: Նշենք, որ Կասպից ծովի իրավական կարգավիճակը սահմանող համաձայնագրի ստորագրման հարցում նշյալ 5 պետություններից, թերևս, ամենաշահագրգիռ կողմը Ադրբեջանն էր՝ իր էներգետիկ ռեսուրսների ընդլայնման հնարավորությունների ակնկալիքով: Այս տեսանկյունից, ստորագրված հռչակագիրը Թուրքիա-Ադրբեջան-Ղազախստան առանցքի ռազմավարական հաղթանակն էր: Կասպից ծովի իրավական կարգավիճակի սահմանման հարցը միանշանակ մոտեցում չուներ մերձկասպյան երկրների շրջանում, ինչի արդյունքում տարիներ շարունակ կողմերին չէր հաջողվում գալ ընդհանուր հայտարարի: Հակասությունների պատճառներից էին էներգետիկ ռեսուրսների բաշխման և տնօրինման, տարածքային բաժանման, ինչպես նաև քաղաքական, ռազմաքաղաքական նշանակության հիմնահարցերը:

Եվ այսպես, *Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին հռչակագրով Ադրբեջանն իր համար լուծում է մի քանի կարևոր հարց: Նախ՝ համաձայնագրով հնարավորություն ստանալով վերահսկել կասպյան էներգակիրների անհամեմատ ավելի խոշոր ծավալներ՝ դրանց արդյունահանումից և շահագործումից ստանում է զգալի ֆինանսական կապիտալ կուտակելու հնարավորություն, երկրորդ՝ ամրապնդում է իր դիրքերը՝ որպես տարածաշրջանային էներգետիկ-տրանսպորտային կարևոր հանգույց, երրորդ՝ ուժեղանում է Թուրքիա-Ադրբեջան-Ղազախստան էներգետիկ-ռազմավարական առանցքը: Ըստ էության, այս բոլոր նախադրյալները*

¹ Конвенция о правовом статусе Каспийского моря, <http://www.kremlin.ru/supplement/5328>

վստահություն են տալիս Ի.Ալիևին՝ մեծացնել երկրի տարածաշրջանային կշիռը, ինչն, իր հերթին, հնարավորություն է տալիս վերջինիս առավել ամուր դիրքերից խոսել հայ-ադրբեջանական դիմակայությունում, մասնավորապես՝ արցախյան հիմնահարցում:

Կասպյան հոշակագրի ստորագրման հարցում Հայաստանի փորձագիտական, նաև քաղաքական դաշտում իսկապես կան մտահոգություններ, և այդ մտահոգությունները հիմնավորված պետք է համարել այն առումով, որ Կասպից ծովի իրավական կարգավիճակի ամրագրմամբ, ինչպես նշվեց, գլխավորապես շահագրգռված էր Ի.Ալիևը: Իսկ սա ենթադրում է, որ մեծանում են Ադրբեջանի հնարավորությունները՝ դառնալու դեպի ԵՄ էներգակիրների արտահանման տարանցիկ և մատակարար հիմնական ուղղություններից մեկը: Խոսքը վերաբերում է նրան, որ այս համաձայնագրով իրականություն է դառնում Տրանսկասպյան գազամուղի լիակատար կառուցումը, քանի որ դրա իրագործման համար անհրաժեշտ էր կասպյան բոլոր 5 պետությունների համաձայնությունը:

Ավելին, համաձայնագրի ստորագրումն էապես մեծացնում է Ադրբեջանի տնտեսական-հաղորդակցային տարածաշրջանային գրավչությունը չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ռազմավարական նախաձեռնության համար, որի շրջանակներում Չինաստանը նոր ուղիներ և հնարավորություններ է որոնում՝ կամրջելու Միջին Ասիան Եվրոպայի հետ: Համաձայնագրի ստորագրումը մեծ ձեռքբերում է ոչ միայն Ադրբեջանի, այլև թուրք-ադրբեջանական տանդեմի համար, որը ջանք չի խնայում Հայաստանի տնտեսական շրջափակման գործընթացը խորացնելու համար: Դժբախտաբար, սույն համաձայնագրով ևս մեկ էական քայլ արվեց այդ ուղղությամբ:

Ինչ վերաբերում է կասպյան մյուս երկրների ունեցած շահերին, ապա նշենք, որ, փաստացի, Ռուսաստանն ու Իրանը համաձայնել են ավելի շատ էներգակիր ռեսուրսներ զիջել Ադրբեջանին: Իսկապես կարևոր հարց է, թե ադրբեջանական կողմին ինչպես հաջողվեց Ռուսաստանի և Իրանի դեկավարությանը բերել ընդհանուր համաձայնության և, ի վերջո, ստորագրել այդ համաձայնագիրը, քանի որ, ըստ էության, Կասպից ծովի իրավական կարգավիճակի սահմանման հարցում ժամանակին, մեղմ ասած, շահագրգռված չէին Մոսկվան ու Թեհրանը: Ըստ ամենայնի, ՌԴ-ի և Իրանի համար առավել կարևոր է եղել ռազմական, ռազմաքաղաքական բաղադրիչը, այն է՝ չթույլատրել երրորդ երկրի կամ երկրների ռազմական ներկայության հաստատում Կասպից ծովի ավազանում, ինչն առանձին կետով ամրագրված է սույն համաձայնագրում: Հենց այս հարցի շուրջ կողմերի միջև

փոխհամաձայնությունն էլ թույլ է տվել գալ ընդհանուր հայտարարի նաև ծովի ընդերքի բաշխման հարցում, ըստ էության՝ էներգակիրների վերահսկման ավելի մեծ ծավալներ և հնարավորություններ ընձեռելով Բաքվին:

Մերկելի այցը Հարավային Կովկաս. հիմնական արդյունքներ. Թե՛ հայաստանյան և թե՛ օտարերկրյա մեդիա-դաշտում և փորձագիտական շրջանակներում շարունակվում են քննարկումները Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելի Հարավային Կովկաս կատարած այցելության շուրջ: Այցը պետք է դիտարկել երկու հարթությունում՝ տարածաշրջանային և առանձին վերցրած՝ երկկողմ միջպետական հարաբերություններ: Տարածաշրջանային առումով Ա.Մերկելի այցն ընդգծում է Գերմանիայի առանձնահատուկ շահերի առկայությունը Հարավային Կովկասում: Հարցն առնչվում է աշխարհաքաղաքական իրողությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-Գերմանիա, ՌԴ-Գերմանիա հարաբերություններին: Դժվար չէ նկատել, որ Թուրքիայի, ՌԴ-ի և Իրանի հանդեպ ամերիկյան պատժամիջոցների սահմանումը միանշանակ ընկալում չունի ԵՄ-ում, և սա լավ հնարավորություն է այս այցով շեշտադրելու տարածաշրջանի կարևորությունը Գերմանիայի համար: Այցելությունն իրականացվում է մի տարածաշրջան, որտեղ ուղղակի շահեր ունեն ՌԴ-ն, Թուրքիան և Իրանը:

Կանցլերի այցից սպասելիքները տարբեր էին երեք երկրներում էլ՝ ելնելով վերջիններիս, ինչպես և Գերմանիայի քաղաքական առաջնահերթություններից: Առավել շահեկան դիրքում, թերևս, հայտնվեց Վրաստանը՝ ստորագրելով շուրջ \$200 մլն-ի համաձայնագիր¹: Ինչ վերաբերում է Ադրբեջանին և Ա.Մերկելի այցից այդ երկրի իշխանությունների ունեցած սպասելիքներին, այս առումով կառանձնացնեինք երկու հիմնական ուղղություն. առաջին՝ Գերմանիայի համար Ադրբեջանը կարևորություն է ներկայացնում որպես էներգետիկ տրանսպորտային միջանցք, որը կարող է թուլացնել Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից: Հարցն իրապես ակտուալացել է կասպյան համաձայնագրի ստորագրումից հետո, ինչի արդյունքում Ադրբեջանն անհամեմատ մեծ հնարավորություններ է ստանում՝ օգտվելու Կասպից ծովի ընդերքից և էլ ավելի ընդգծելու իր դերը որպես տարածաշրջանի էներգետիկ կարևոր հանգույցներից մեկը: Այս տեսանկյունից, կարծում ենք, Ադրբեջանի սպասելիքներն արդարացված են: Երկրորդ հարցը վերաբերում է արցախյան հիմնախնդրին, որին Ադրբեջանը մշտապես ձգտում է տալ միջազգային հնչեղություն՝ իր շահերից ելնելով: Թեև Գերմանիան ԵԱՀԿ

¹ Меркель заверила Грузию в подписании соглашений почти на 200 млн евро, http://vestikavkaza.ru/material/240314?utm_source=yxnews&utm_medium=desktop

Մինսկի խմբի անդամ է, և Ա.Մերկելը հայտարարել է, որ իր երկիրը արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում կարող է վերցնել ավելի լայն պատասխանատվություն, այդուհանդերձ, նշենք, որ ներկայում, թերևս, չկան հիմնախնդրում Գերմանիայի ներգրավման խորացման նպաստավոր նախադրյալներ: Հայաստանյան այցով Գերմանիան վերահաստատեց իր պատրաստակամությունը՝ աջակցել ՀՀ-ին ԵՄ-ի հետ ստորագրված շրջանակային համաձայնագրի իրագործման հարցում, ինչը, պետք է խոստովանել, ավելի շուտ դեկլարատիվ և արարողակարգային բնույթ ունեւ, քան կիրառական նշանակություն, քանի որ այդ հարցում գնդակը, ըստ էության, հայկական դաշտում է: Հայաստանը կարևորվում է Գերմանիայի կողմից նաև որպես հետխորհրդային տարածքում բացառիկ երկիր, որը կարողացել է համադրել ԵԱՀԿ և ԵՄ համագործակցային ձևաչափերը, ինչի մասին խոսվեց նաև Ա.Մերկելի Երևան այցելության ընթացքում:

Տարածաշրջանային գործընթացները ԱՄՆ պատժամիջոցների համատեքստում. Հարավկովկասյան և մերձակա տարածաշրջանն առաջիկայում գտնվելու է ամերիկյան տնտեսական ճնշումների ներքո: Վաշինգտոնի կողմից աահմանվում են տնտեսական փուլային պատժամիջոցներ Իրանի և Ռուսաստանի նկատմամբ, ամերիկացի հոգևորականի գործով տնտեսական անկայունության փուլ է մտնում Թուրքիան, այս ամենի տնտեսական հետևանքները տրամաբանորեն չեն շրջանցի հարավկովկասյան երկրները: Կարելի է կանխատեսել, որ տարածաշրջանի ուղղությամբ տնտեսական ճնշումները կմոբիլիզացնեն հակախորհրդային հասարակական-քաղաքական բևեռը, լարվածությունը կմեծանա պաղեստինա-խորհրդային ճակատում, նոր խմբումներ կլինեն Սիրիայում: Արդեն իսկ այդ ուղղությամբ ընթանում են որոշակի գործընթացներ:

Իրան-Սիրիա ռազմական համաձայնագիրը և հակաքայլերը. Օգոստոսի վերջին պաշտոնական այցով Սիրիայում էր Իրանի պաշտպանության նախարար Ամիր Հաթամին: Կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին խորացնել համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարում, պաշտպանական ոլորտում¹: Իրանական կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել Սիրիային նաև սպառազինությունների մշակումների հարցում: Իրանի պաշտպանության նախարարի այցը Սիրիա խորհրդանշական է հետևյալ իմաստով. նախ՝ Թեհրանն այս այցով ձգտում է շեշտադրել, որ չնայած ամերիկյան տնտեսական պատժամիջոցների սահմանմանն

¹ Иран и Сирия заключили новое военное соглашение, https://vpk.name/news/226427_iran_i_siriya_zaklyuchili_novoe_voennoe_soglashenie.html

ու Իրանի տնտեսության վրա դրա հնարավոր շոշափելի բացասական հետևանքներին՝ Իրանը շարունակում է պահպանել ռազմական, ռազմաքաղաքական ներկայությունն ու դիրքերը Սիրիայում, Մերձավոր Արևելքում և չի պատրաստվում ընկրկել Իսրայելի և ԱՄՆ ճնշումների ներքո: Երկրորդ իրանական կողմը վերահաստատում է իր դիրքորոշումը՝ պահպանել Սիրիայում ՌԴ-ի և Թուրքիայի հետ համատեղ հակաահաբեկչական պայքարի եռակողմ ձևաչափը: Ջուզադիպություն չէր այն, որ Իրանն օգոստոսի 21-ին Թեհրանում կայացած ավիացուցահանդեսի ժամանակ ներկայացրեց սեփական արտադրության առաջին կործանիչը՝ «Քովսար»-ը: Սեպտեմբերի սկզբին իրանական կողմը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որ երկիրը մտադիր է հարստացնել սեփական հրթիռային ներուժը, ինչպես նաև մեծացնել կործանիչների և սուզանավերի թիվը:

Առանձնակի կարևորություն ունեք օգոստոսի կեսերին կայացած Ս.Լավրով-Մ.Չավուշօղլու հանդիպումը, որի առանցքային թեման ամերիկյան պատժամիջոցներն էին և դրանց հակազդման հնարավոր համատեղ քայլերը: Ռուսաստանը և Թուրքիան կձգտեն ռազմաքաղաքական հարթությունում զսպել ամերիկյան ազդեցությունը Սիրիայում և Մերձավոր Արևելքում, այդ տրամաբանությունը կանդրադառնա նաև հարավկովկասյան տարածաշրջանի ընթացիկ զարգացումների վրա: Երկկողմ բանակցային կարևոր հարցերից մեկը կշարունակի մնալ համատեղ տնտեսական հակաքայլերի մշակման բլոկը: Կարելի է ենթադրել, որ առաջիկայում նման երկկողմ, եռակողմ (նաև Իրանի մասնակցությամբ) հանդիպումների կազմակերպման անհրաժեշտությունը նշյալ պետությունների համար ավելի քան պահանջված կլինի:

Ուշագրավ էր Իրանի ԱԳ նախարար Մոհամադ Ջավադ Ջարիֆի հայտարարությանը, որում վերջինս դատապարտել է ԱՄՆ պատժիչ գործողությունները Թուրքիայի նկատմամբ: Նրա բնորոշմամբ, «ՆԱՏՕ գծով իր դաշնակից Թուրքիային տնտեսական վնաս պատճառելու ցնծությունն ամոթալի է: ԱՄՆ-ը պետք է հրաժարվի պատժամիջոցների և հավաժման հակվածությունից, հակառակ դեպքում ամբողջ աշխարհը կհամախմբվի, որ ստիպի նրան դա անել, և խոսքը միայն բանավոր հանդիմանության մասին չէ: Մենք մեր հարևանների կողքին ենք կանգնել անցյալում, կկանգնենք նաև հիմա»: Հիշեցնենք, որ օգոստոսի 10-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարգադրել է 2 անգամ բարձրացնել թուրքական այլումինի և պողպատի մաքսատուրքերը, որ դրանք կազմեն համապատասխանաբար 20% և 50%:

Ռուսական կողմն, իր հերթին, քայլեր է ձեռնարկում՝ դիմակայելու ամերիկյան սահմանափակումներին՝ ներքին և արտաքին դաշտերում: ՌԴ-ի

համար կարևոր ձեռքբերում պետք է համարել այն, որ վերջերս Մոսկվան Մաուդյան Արաբիայի հետ համաձայնության եկավ՝ կոորդինացնելու համաշխարհային շուկայում էներգակիրների արդյունահանման ծավալների և դրանց գների կայունացման հարցերը:

ԵՄ դիրքորոշումը. Իրանի և ՌԴ-ի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցները միանշանակ չեն ընկալվում նաև ԵՄ-ում: ԵՄ-ը փորձում է հնարավորինս ինքնուրույն քաղաքականություն վարել Իրանի հարցում և ուղղակիորեն չհետևել ամերիկյան պատժամիջոցների սահմանման տրամաբանությանը: ԵՄ-ը ճիշտ և պրագմատիկ դիրքորոշում է որդեգրել այդ հարցում և, ըստ էության ուղղակիորեն չի սատարում ամերիկյան պատժամիջոցներին, քանի որ դրանից տուժում են մի շարք եվրոպական ընկերություններ, որոնք տնտեսական շահեր ունեն Իրանում: Ավելին, վերջերս Եվրահանձնաժողովը հավանություն էր տվել €18 մլն-ի օգնության առաջին փաթեթի հատկացմանը՝ Իրանի տնտեսական և սոցիալական զարգացմանն աջակցելու նպատակով: Ի դեպ, սա ԵՄ-ից նախատեսվող ֆինանսական աջակցության առաջին փաթեթն է. ընդհանուր առմամբ ԵՄ-ը նախատեսում է Իրանին տրամադրել €50 մլն: Նշենք, որ Իրանին հատկացվող ֆինանսական աջակցությունն իրականացվում է Իրանի միջուկային ծրագրի շուրջ պայմանագրի շրջանակներում: ԱՄՆ Պետդեպարտամենտում այս քայլը որակվեց որպես «սխալ ազդանշան ոչ հարմար պահին»: Պետդեպարտամենտում վստահ են, որ եվրոպական հարկատուների կողմից Իրանին ցուցաբերվող ֆինանսական զգալի աջակցությունը կամրապնդի Իրանի «ռեժիմի» դիրքերը, ինչպես նաև կճնշի Իրանի արտաքին քաղաքականությունում հնարավոր փոփոխությունները:

Ուշագրավ էր օգոստոսի 27-ին Ֆրանսիայի նախագահ Է.Մակրոնի հայտարարությունը, ըստ որի՝ Ֆրանսիան ջանքեր է գործադրում Եվրոպական պաշտպանական պլանի զարգացման հարցում: Նա նաև նշել է, որ եվրոպական պաշտպանության և անվտանգության ապահովման հարցերում Եվրոպան չպետք է այդքան շատ հույսեր ու վստահություն կապի Միացյալ Նահանգների հետ»: Է.Մակրոնի խոսքերով, «եվրոպական երկրները պետք է ինքնուրույնաբար զբաղվեն սեփական անվտանգության հարցերով, և դրա համար անհրաժեշտ է այդ հարցում ներգրավել նաև Ռուսաստանին»¹:

Արևմտյան փորձագետների գնահատմամբ՝ Մոսկվայի և Թեհրանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցները կարող են բացասաբար անդրա-

¹ El Mundo: Макрон за включение России в систему европейской обороны, <http://www.inosmi.info/el-mundo-makron-za-vklyuchenie-rossii-v-sistemu-evropeyskoy-oborony.html>

դառնալ այլ երկրների տնտեսությունների վրա նույնպես: ՌԴ-ի նկատմամբ նախատեսվող տնտեսական սահմանափակումների փաթեթը, որը քննարկվում է ԱՄՆ Կոնգրեսում, կարող է բացասական հետևանքներ թողնել, այդ թվում՝ եվրոպական նավթագազային ընկերությունների վրա, ինչպես նաև Միացյալ Նահանգներից բարձրտեխնոլոգիական արտադրանքների արտահանումների ուղղությամբ, ինչն էլ կարող է հանգեցնել շուկայի քառուսի:

Ավելի վաղ՝ ս.թ. գարնանը, նախագահ Դ.Թրամփի վարչակազմը պատժամիջոցներ էր սահմանել ռուսաստանյան 38 գործիչների և ընկերությունների նկատմամբ¹: Նրանց մի մասը բարձրաստիճան պաշտոնյաներ են: Այդ ցուցակում են հայտնվել նախագահ Վ.Պուտինի մերձավոր շրջապատից՝ օլիգարխ Օլեգ Դերիպասկան և նրան պատկանող 12 ընկերությունները, 17 ռուսաստանցի բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև զինամթերքի վաճառքով զբաղվող ռուսական պետական ընկերություններից մեկը: Պատժամիջոցները կարգելափակեն ռուս օլիգարխների բոլոր այն միջոցները, որոնք գտնվում են ամերիկյան կողմի իրավասության ներքո: ԱՄՆ քաղաքացիներին արգելվում է որևէ գործունեություն ծավալել պատժամիջոցների ենթարկված կառույցների կամ անձանց հետ: Պատժամիջոցները տարածվում են նաև այն ընկերությունների վրա, որոնց բաժնետոմսերի կեսը պատկանում է պատժամիջոցների ենթարկված անձին: Մասնավորապես, բերվում է Օլեգ Դերիպասկայի և նրա այլումինի արտադրության ընկերության նկատմամբ ԱՄՆ ֆինանսների նախարարության կողմից կոշտ պատժամիջոցների նախաձեռնման օրինակը, ինչի հետևանքով արևմտյան հաճախորդները դադարեցին գնել վերջինիս հսկողության ներքո գտնվող արտադրանքը՝ դրանով իսկ զգալի վնաս հասցնելով բաժնետոմսերի գների ուղղությամբ: Արդյունքում՝ այլումինի համաշխարհային գներն աճեցին՝ չըջանցելով ամերիկյան և եվրոպական ընկերությունները:

ԱՄՆ ռազմաքաղաքական ճնշումները. Դ.Թրամփի վարչակազմը ՌԴ-ի և Իրանի նկատմամբ տնտեսական սահմանափակումներին զուգահեռ՝ ակտիվացնում է դրանց ճնշումներն այդ թվում և ռազմաքաղաքական, անվտանգային տիրույթում: Մասնավորապես, Վաշինգտոնը դիտարկում է ՆԱՏՕ-ին Ուկրաինայի անդամակցության հարցը: Նման հայտարարությամբ է հանդես եկել ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը²: Ընդհանրապես, որևէ անսպասելի բան չկա այս հայտարարու-

¹ США ввели санкции против 38 российских бизнесменов, официальных лиц и компаний, <https://www.novayagazeta.ru/news/2018/04/06/140793-ssha-vveli-sanktsii-protiv-38-rossiyskih-biznesmenov>

² Болтон о вступлении Украины в НАТО: Прогресс есть, <https://korrespondent.net/world/worlddabus/4004154-bolton-o-vstuplenyy-ukrayny-v-nato-prohress-est>

թյունում, քանի որ վերջին տարիներին ՆԱՏՕ-Ուկրաինա համագործակցության խորացող տեմպերը վաղ թե ուշ բարձրացնելու էին կառույցին հետխորհրդային այդ պետության անդամակցության հարցը:

Ռուսական կողմն, իր հերթին, բավական խանդով է մոտենում ՆԱՏՕ-Վրաստան, ՆԱՏՕ-Ուկրաինա համագործակցության խորացման հարցերին, առավելս՝ եթե խոսվում է նշյալ կառույցին հետխորհրդային այդ հանրապետությունների անդամակցության հարցի մասին: Ի դեպ, սա այն սահմանագիծն է, որտեղ հետքայլը ճակատագրական կարող է լինել Ռուսաստանի համար, քանի որ հետխորհրդային տարածքը Մոսկվան ընկալում է որպես իր ազդեցության անմիջական գոտի: Ուստի, տրամաբանական է, որ այդ տարածքում երրորդ երկրների ռազմական կամ ռազմաքաղաքական ներկայության ամրապնդումը՝ ի դեմս ՆԱՏՕ-ի, Կրեմլում ընկալվում է որպես ռազմավարական նշանակության մարտահրավեր երկրի պաշտպանական անվտանգության համար: Այս տեսանկյունից, ՆԱՏՕ-ին Ուկրաինայի կամ Վրաստանի հնարավոր անդամակցության հարցի բարձրացումը Վաշինգտոնում բացասական հետևանքներ կունենա ոչ միայն Ուկրաինա-ՌԴ, կամ Վրաստան-ՌԴ երկկողմ փոխհարաբերությունների հետագայի առումով, այլև լուրջ մարտահրավերներ և ռիսկեր է պարունակում ողջ հարավկովկասյան տարածաշրջանի կայունության և անվտանգության պահպանման համար: Ռուսաստանում շատ լավ գիտակցում են, որ ՆԱՏՕ-ի հետ Ուկրաինայի և, առավելս, Վրաստանի համագործակցության խորացումը բևեռացնում է ոչ միայն ԱՄՆ-ՌԴ հարաբերություններում առկա խնդիրները, այլև հնարավորություն է ստեղծում ի հաշիվ ռուսական կողմի ամրապնդելու ՆԱՏՕ կարևոր մեկ այլ անդամի՝ Թուրքիայի դիրքերը Հարավային Կովկասում:

Հավելենք, որ օրեր անց Ջ.Բոլթոնի վերոնշյալ հայտարարությանը հաջորդեց Դոնեցկի կենտրոնում տեղի ունեցած պայթյունը, որի հետևանքով զոհվեց ԴԺՀ ղեկավար Ալեքսանդր Չախարչենկոն: Հաղորդվում է, որ պայթյունը որոտացել է «Սեպար» ռեստորանում՝ Դոնեցկի կենտրոնում, ԴԺՀ առաջնորդի առանձնատնից քիչ հեռու:

Հետևություններ

Հարավկովկասյան գործընթացները զարգանալու են տարածաշրջանային առանցքային տերությունների՝ Իրանի, ՌԴ-ի և Թուրքիայի նկատմամբ սահմանվող ամերիկյան տնտեսական սահմանափակումների տրամաբանության ներքո: Նման իրադրության բացասական հետևանքներից, կարճաժամ-

կետ, գուցե միջնաժամկետ տեսլականում, թերևս, չեն խուսափի հարավ-կովկասյան երկրները: Օբյեկտիվ պատճառներից էլնելով՝ առավել խնդրահարույց է հատկապես Հայաստանի վիճակը, որը, երկու հարևանների կողմից գտնվելով շրջափակման մեջ, կունենա նաև առևտրային և կոմունիկացիոն խնդիրներ մյուս՝ իրանական ուղղությամբ: Վաշինգտոնի կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը բացասաբար կանդրադառնա նաև հայ-իրանական առևտրաշրջանառության վրա, հարցականի տակ կարող է դրվել նաև Մեդրիի ազատ տնտեսական գոտու հետագա զարգացման հարցը: Նշենք, որ սահմանված պատժամիջոցները տարածվում են ոչ միայն իրանական կազմակերպությունների վրա, այլև դրանցից կտուժեն այն բոլոր արտերկրյա ընկերությունները, որոնք գործակցում են Իրանի հետ: ՀՀ տնտեսության վրա բացասական հետք կթողնեն նաև ռուսական ռուբլու տատանումները, կկրճատվեն ՌԴ-ից ՀՀ տրանսֆերտների ծավալները:

Այս ամենի համատեքստում, մեղմ ասած, ամեննին «սպասված» չէր Վրաստանի ղեկավարության որոշումը, ըստ որի՝ ս.թ. սեպտեմբերի 15-ից ՌԴ-ից Վրաստանի տարածքով դեպի ՀՀ ցորենի ցամաքային ներկրման վրա արգելք է սահմանվում: Բարեբախտաբար, հարցն առժամանակ կարգավորվեց «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության որոշմամբ, որով 2018թ. սեպտեմբերի 1-ից Փոթի նավահանգիստ-ՀՀ հաղորդակցությունում հացահատիկային բեռների երկաթուղային փոխադրումների սակագները նվազում են 52%-ով, ինչի հետևանքով հնարավոր կլինի փաստացի խուսափել ցորենի թանկացումից:

Մեպտեմբեր, 2018թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԵՐՁԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ**

Կարեն Վերանյան

Ամփոփագիր

Հոդվածում փորձ է արվել փորձագիտական գնահատական տալ տարածաշրջանային վերջին զարգացումներին՝ հայաստանյան վերջին իրադարձությունների համատեքստում: Նշվում է, որ հարավկովկասյան գործընթացները զարգանալու են տարածաշրջանային առանցքային տերությունների՝ Իրանի, ՌԴ-ի և Թուրքիայի նկատմամբ սահմանվող ամերիկյան տնտեսական սահմանափակումների տրամաբանության ներքո: Նման իրադրության բացասական հետևանքներից, թերևս, չեն խուսափի հարավկովկասյան երկրները: Օբյեկտիվ

պատճառներից ելնելով՝ առավել խնդրահարույց է հատկապես Հայաստանի վիճակը, որը, երկու հարևանների կողմից գտնվելով շրջափակման մեջ, կունենա նաև առևտրային և կոմունիկացիոն խնդիրներ իրանական ուղղությամբ: Վաշինգտոնի կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը բացասաբար կանդրադառնա նաև հայ-իրանական առևտրաշրջանառության վրա, հարցականի տակ կարող է դրվել նաև Մեդրիի ազատ տնտեսական գոտու հետագա զարգացման հարցը:

АРМЕНИИЯ И ПОСЛЕДНИЕ РАЗВИТИЯ В РЕГИОНЕ

Карен Веранян

Резюме

В статье предпринята попытка дать экспертную оценку последним развитиям в регионе в контексте недавних событий в РА. Отмечается, что южно-кавказские процессы будут развиваться в рамках логики американских экономических санкций, устанавливаемых в отношении ключевых государств региона – Ирана, РФ и Турции. Пожалуй, южно-кавказские государства не смогут избежать негативных последствий сложившейся ситуации. Исходя из объективных причин, наиболее проблематично положение Армении, которая, испытывая блокаду со стороны двух соседних государств, столкнется также с торговыми и коммуникационными проблемами на иранском направлении. Введение Вашингтоном санкций в отношении Ирана негативно скажется и на армяно-иранском торговом обороте, так как угрожает дальнейшему развитию свободной экономической зоны в Мегри.

ARMENIA AND THE RECENT REGIONAL DEVELOPMENT

Karen Veranyan

Resume

The article attempts to provide an expert assessment of the latest regional developments in the context of the recent events in Armenia. The processes in South Caucasus will evolve within the logic of economic sanctions imposed by the USA on the key regional powers: Iran, Russia and Turkey. The South Caucasus countries cannot avoid the negative effects of this situation. Armenia's position is particularly vulnerable due to certain objective reasons, since being blockaded by two of its neighbors the country might experience trade and communications in the Iranian direction, as well. The sanctions Washington imposes on Iran negatively affect the trade turnover between Armenia and Iran and may also pose a challenge for the future development of the Meghri free economic zone.

ՀԱՐԱՎՕՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

*Վահե Սարգսյան**

Բանալի բառեր՝ Հարավային Օսիա, հարավօսական հիմնահարց, ռազմական բախումներ, միջազգային ճանաչում:

Վրաստանի պատմության սասկաշվիլիական դարաշրջանի վերաբերյալ հայկական, վրացական և այլ շրջանակներում ձևավորված պատկերացումները դեռևս հեռու են համակողմանի և խորքային համարվելուց: Այդ պատկերացումներն առավել քան հակասական են, հաճախ՝ խիստ միակողմանի: Պատճառը և՛ համապատասխան տեղեկատվության պակասն է, և՛ որոշ շրջանակների կողմից հատուկ նպատակներով տարվող միակողմանի քարոզությունը: Սույն աշխատանքում Հվ. Օսիայի հիմնահարցի արծարծմամբ փորձ ենք արել որոշ չափով լրացնել նշյալ տեղեկատվական բացը:

Ռազմաքաղաքական զարգացումները Հարավային Օսիայում 1989-2008թթ.: Վրաց-օսական առաջին պատերազմը

Հարավօսական հիմնահարցի մերօրյա փուլի սկզբնավորումը կարելի է համարել 1989թ., երբ նույն թվականի նոյեմբերի 10-ին Հարավօսական Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների խորհուրդն իր 20-րդ գումարման 12-րդ արտակարգ նստաշրջանում կայացրեց Հարավօսական Ինքնավար Մարզի կարգավիճակի բարձրացման մասին որոշումը, որով այն վերափոխվեց Հարավօսական Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետության¹: Նույն օրը օսերենը Հարավօսական Ինքնավար Մարզի տարածքում հայտարարվեց պետական լեզու²: Վրաստանի նորընտիր ԳԽ-ն ղեկտեմբերի 11-ին (հիշեցնենք, որ 1990թ. ղեկտեմբերի 9-ին Հվ.

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ.:

¹ Решение чрезвычайной XII сессии Совета народных депутатов Юго-осетинской Автономной Области двадцатого созыва о повышении статуса Юго-осетинской Автономной Области, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., составление и комментарии М.А. Волхонский, В.А. Захаров, Н.Ю. Силаев, М., 2008*, с. 178.

² Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг., с. 178-179.

Օսիայում անցկացվել էին խորհրդարանական ընտրություններ) ընդունեց «Հվ. Օսիայի Ինքնավար Մարզի վերացման մասին» օրենքը, որով ինքնավար մարզի հետ մեկտեղ վերացվեցին նաև Հարավօսական ԻՄ Ժողովրդական պատգամավորների խորհուրդը, նրա գործադիր կոմիտեն, ԻՄ բոլոր պետական օրգանները, ինչպես նաև ուժը կորցրած համարվեցին Վրաստանի Ժողկոմխորհի և Համավրաստանյան Կենտրոնի «Հվ. Օսիայի ԻՄ կազմավորման մասին» 1922թ. ապրիլի 20-ի N 2 Դեկրետը և Վրացական ԽՍՀ 1980թ. նոյեմբերի 12-ի «Հվ. Օսիայի ԻՄ-ի մասին» օրենքը¹: Բնականաբար, Չ.Գամսախուրդիայի սույն քայլը Վրաստանի ԳԽ-ի՝ խորհրդային շրջանում կնքված բոլոր պայմանագրերը չեղյալ հայտարարելու և ստեղծված պետական կազմավորումները մերժելու մասին 1989-1990թթ. ընդունված որոշումների իրավական հետևանքն էր:

Վերոնշյալ գործընթացները չհանգեցրին վրաց-օսական հակամարտության խաղաղ կարգավորմանը, ինչի արդյունքում կարճ ժամանակ անց՝ 1991թ. հունվարի 6-ին, սկսվեցին զինված բախումները, որոնք շարունակվեցին ավելի քան մեկուկես տարի և ավարտվեցին 1992թ. հունիսին՝ Վրաստանի և Ռուսաստանի միջև Դազոմիսյան պայմանագրի կնքմամբ²: Հվ. Օսիայի Հանրապետության (ՀՕՀ) Գերագույն խորհրդի 1991թ. դեկտեմբերի 21-ի նիստում ընդունվեց երկրի անկախության հռչակման մասին դեկլարացիան³, մեկ ամիս անց՝ 1992թ. հունվարի 19-ին, ՀՕՀ-ում անցկացվեց համաժողովրդական հանրաքվե, և հանրաքվեին մասնակցած 53.441 քաղաքացիների շուրջ 99%-ը կողմ արտահայտվեց ՀՕՀ անկախությանն ու ՌԴ-ի հետ վերամիավորմանը⁴: Ելնելով այս տրամադրություններից՝ ՀՕՀ ԳԽ-ը 1992թ. մայիսի 29-ին ընդունում է ՀՕՀ անկախության հռչակման ակտը⁵:

Վրաց-օսական առաջին պատերազմի ավարտից և Դազոմիսյան պայմանագրի կնքումից հետո էլ, մինչև 2000-ական թթ., Հվ.Օսիայի ղեկավարու-

¹ Закон Республики Грузия об упразднении Юго-осетинской Автономной Области, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг.*, с. 31-33. Նշված օրենքով իրավաբանական ուժը կորցրած ճանաչվեցին նաև 1990թ. դեկտեմբերի 9-ին անցկացված Հվ. Օսիայի ԳԽ ընտրությունները:

² Էդ.Շևարդնաձեի և Բ.Ելցինի կողմից պայմանագիրն ստորագրվել է 1992թ. հունիսի 24-ին՝ ՌԴ Մոսկվայի շրջանի Դազոմիս ավանում, տե՛ս Соглашение о принципах урегулирования грузинско-осетинского конфликта, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг.*, с. 252-253.

³ Декларация о независимости Республики Южная Осетия, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг.*, с. 203-204.

⁴ Заявление Центральной комиссии референдума Республики Южная Осетия, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг.*, с. 207.

⁵ Акт провозглашения независимости Республики Южная Осетия, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг.*, с. 210.

թյունը բազմիցս դիմել է Ռուսաստանի բարձրագույն դեկավարությանը՝ ընդառաջ գնալ 1992թ. հունվարի 19-ի հանրաքվեի միջոցով ժողովրդի արտահայտած ցանկությանը, ճանաչել ՀՕՀ անկախությունը և այն ընդգրկել Ռուսաստանի կազմում: Բնականաբար, Հվ.Օսիան պայքարում էր՝ միանալու իր եղբայրակից Հյուսիսային Օսիայի ԻՉ-ին և նրա հետ միասին ՌԴ կազմում վերածվել մեկ առանձին ԻՉ-ի: Այդ ցանկությունը վառ արտահայտված է հատկապես ՀՕՀ ԳԽ 1993թ. մարտի 12-ին տարածած հայտարարության մեջ. «Հվ. և Հս. Օսիաների մեջ ոչ մի պետական սահման չի եղել և չի կարող լինել նաև ապագայում: Ռուսական սահմանը կարող է անցնել միայն Վրաստանի հետ ՀՕՀ հարավային սահմաններով»¹: Ռուսաստանը Հվ.Օսիայի անկախությունն ի վերջո ճանաչեց 2008թ. օգոստոսի 26-ին, նույն ամսի 8-12-ը տևած հնգօրյա ռազմական բախման արդյունքում: Նոր իրողությունների պայմաններում Դագոմիայան համաձայնագրի փոխարեն հրապարակի վրա հայտնվեց ռազմական հակամարտության կարգավորման վերաբերյալ Մեդվեդև-Սարկոզիի պլանը:

Հարավօսական հակամարտության ժողովրդագրական ասպեկտը

ա. Վրաստանաբնակ (Հվ.Օսիայի ԻՄ սահմաններից դուրս բնակվող) օսերի խնդիրը: Թռեղքի (Թրիալեթ) օսեր

ԽՍՀՄ-ը նոր տիպի հանրակցության վերածելու և Վրաստանի անկախության վերականգնման մասին հանրաքվեների անցկացմանը (համապատասխանաբար՝ 1991թ. մարտի 17 և 31), Հվ.Օսիայում իրադրության ծայրահեղ սրմանը և զինված հակամարտության վերաճելուն զուգահեռ՝ Վրաստանում տեղի էր ունենում Հվ.Օսիայից դուրս բնակվող ազգությամբ օս բնակչության զանգվածային էթնիկ գտում: Այդ գործընթացն առավել սուր արտահայտվեց Թռեղքի (Թրիալեթի) օսերի շրջանում, որոնք բնակվում էին համանուն լեռնաշղթայի հյուսիսային, մասամբ նաև հարավային փեշերին գտնվող Խաշուրի, Քարելի, Գորիի, Կասպիի, Բորժոմի և Թեթրիձղարոյի շրջաններում: Փաստենք, որ Թռեղքի օսերի թիվը մինչ նշյալ զանգվածային բռնաճնշումներն ու էթնիկ գտումները և այդ իրադարձություններից հետո ունի հետևյալ պատկերը².

¹ Обращение Верховного Совета Республики Южная Осетия о невозможности установления границ между Северной и Южной Осетией, *Конфликты в Абхазии и Южной Осетии: документы 1989-2006гг.*, с. 221.

² Տվյալները հաշվարկել ենք <http://www.ethno-kavkaz.narod.ru> կայքի «Վրաստան» բաժնի, ինչպես նաև 2002 և 2014թթ. Վրաստանում անցկացված պաշտոնական մարդահամարի տվյալների հիման վրա:

1939թ.	1959թ.	1989թ.	2002թ.	2014թ.
40.114	35.783	մոտ 40.000	14.325	5.871

Ինչպես երևում է բերված տվյալներից՝ 1990-ական թթ. միայն Թռեղքի 6 շրջաններում օսերի թիվը կտրուկ անկում է ապրել և շուրջ 40.000-ից հասել ընդամենը 5.871-ի: Գրեթե նույն պատկերն է նաև ընդհանուր Վրաստանում ապրող օսերի (առանց Հվ.Օսիայում ապրող օսերի թվի) պարագայում: Այսպես.

1989թ. ¹	1993թ. ²	2002թ. ³	2014թ. ⁴
98.823	45.700	36.916	14.385

Պարզորոշ է, որ հետխորհրդային Վրաստանում Հվ.Օսիայի սահմաններից դուրս, Թռեղքում, Վրաստանի մի շարք այլ մարզերում և մայրաքաղաքում ապրող օսերի թվի կտրուկ նվազումը (կարելի է ասել՝ գրեթե զրոյացումը) կապված է Հվ.Օսիայի չկարգավորված հակամարտության, ինչպես նաև Ջ.Գամսախուրդիայի իշխանության օրոք սկիզբ առած զանգվածային բռնությունների, տեղահանությունների և էթնիկ զտումների հետ: Հայտնի են փաստեր, որ, օրինակ, Բորժոմի շրջանի շուրջ 9 օսաբնակ գյուղերի բնակչությանը 1991թ. գարնանը ստիպել են մեկ օրում լքել իրենց բնակավայրերը: Տարբեր տվյալներով՝ շուրջ 3.000 օս այդ օրերին փախել է Ջավախք և տեղի հայության օժանդակությամբ անցնելով ՀՀ՝ այնտեղից մեկնել Վլադիկավկազ⁵: Բռնությունների և տեղահանությունների թեժ կենտրոններ են եղել նաև Գորիի և Քարելի շրջանների օսերի բնակավայրերը: Պարզորոշ էր, որ վրաստանա-

¹ 1989թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ ողջ Վրաստանում օսերի թիվը կազմում էր 164,055 մարդ: Եթե այս թվից հանենք Հվ.Օսիայում նույն ժամանակ ապրող 65,232 օսերի թիվը (տե՛ս <http://www.ethno-kavkaz.narod.ru/rnsossetia.html>), ապա Հվ.Օսիայից դուրս ապրող օսերի թիվը Վրաստանում կկազմի 98,823:

² *И.Кочиева, А.Маргиев*, Грузия. Этнические чистки в отношении осетин, источник: https://www.e-reading.club/bookreader.php/88842/Kochieva%2C_Margiev_-_Gruziya._Etnicheskie_chistki_v_otnoshenii_osetin.html.

³ Պաշտոնական վիճակագրական տվյալներում Վրաստանի օսերի թիվը նշվում է 38.028, որը հաշվարկված է մինչև 2008թ. Վրաստանին հասանելի երկու շրջանների (Կոդորի (Աբխազիա) և Ախալգորի (Լեռնինգորի, Հվ.Օսիա) հետ միասին: Ինչպես նախորդ, այնպես էլ 2014թ. տվյալների հետ համեմատելու, ինչպես նաև մեր աշխատանքում Հվ.Օսիայի ժողովրդագրական խնդիրներն առանձնաբար քննարկելու համար աղյուսակում բերել ենք Վրաստանի օսերի թիվն առանց այս շրջանների:

⁴ Տե՛ս 2014թ. Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալները:

⁵ Տողերիս հեղինակի՝ Բորժոմի շրջանի Բակուրիան ավանում բնակվող հարազատների վկայությամբ՝ այդ ճակատագրական օրերին տեղի հայությունը, վտանգելով սեփական կյանքը և ազատությունը, մեծապես օժանդակել է իրենց կողքին ապրող օսերին, պատսպարել նրանց անվտանգ վայրերում և այլն:

բնակ օսերի հանդեպ նման անհանդուրժողական քաղաքականությունը պայմանավորված էր երկրում փոթորկվող այլատյացությամբ և Ջ.Գամսախուրդիայի ձեռնարկած քայլերով: Պետք է նշել, սակայն, որ վրացական իշխանությունների այդ մտավախություններն ավելի շատ օսերի հանդեպ կիրառվող բռնություններն արդարացնելու պատճառ էին, քանի որ ինչպես Թռեղքի, այնպես էլ Վրաստանի մյուս մարզերի խաղաղ օս բնակչության շրջանում իսպառ բացակայել են նման տրամադրությունները:

Բերված ցուցանիշները վկայում են նաև կարևոր և հետաքրքրական մեկ հանգամանք ևս. և՛ Թռեղքի օսերի պարագայում, և՛ Հվ.Օսիայի ԻՄ սահմաններից դուրս բնակվող ընդհանուր Վրաստանի օսերի պարագայում ժողովրդագրական ցուցանիշների գրեթե նույնքան շեշտակի անկում է գրանցվել նաև Մ.Սասկաշվիլու իշխանության տարիներին: Այսպես, եթե 1989-2002թթ. Թռեղքի օսերի թիվը կրճատվել է շուրջ 64%-ով, ապա 2002-2014թթ.՝ 59%-ով: ՀՕԻՄ-ից դուրս ապրող վրաստանաբնակ օսերի թիվը ևս 1989-2002թթ. կրճատվել է 62%-ով, իսկ 2002-2014թթ.՝ 61%: Ավելին, եթե համեմատենք ՀՕԻՄ-ից դուրս ապրող վրաստանաբնակ օսերի թվի կրճատման տեսանկյունից Ջ.Գամսախուրդիայի և Մ.Սասկաշվիլու իշխանության տարիները, ապա կստացվի, որ առաջինի դեպքում (տե՛ս 1989-1993թթ. տվյալները) օսերի թիվը կրճատվել է շուրջ 54%-ով, իսկ ահա եվրոպական ժողովրդավարական արժեքներ դավանող Մ.Սասկաշվիլու ռեժիմի «հանդուրժողական» միջավայրում օսերի թիվը կրճատվել է 61%-ով (տե՛ս 2002-2014թթ. տվյալները):

բ. Հարավային Օսիայի ժողովրդագրական խնդիրները

1989թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ Հարավ-օսական ԻՄ ազգաբնակչության ընդհանուր թիվը կազմում էր 98,527, որից օս էր 65,232-ը (66,2%), վրացի՝ 28,544-ը (29,0%): Օս ազգաբնակչությունը գերակշռում էր մայրաքաղաք Ցխինվալում (74,5%) և երեք՝ Ջավայի (91,5%), Ջնաուրի (63,4%) և Ցխինվալի (52,6%) վարչական շրջաններում: ՀՕԻՄ չորրորդ և վերջին շրջանում՝ Լենինգորում (Ախալգոր), գերակշռել են վրացիները (53,8%):

Ընդհանուր առմամբ, եթե համեմատենք ԽՍՀՄ տարբեր տարիներին անցկացված մարդահամարների տվյալները, ապա կստացվի, որ ՀՕԻՄ տարածքում օսերի և վրացիների թվի հարաբերակցությունն ունեցել է աննշան տատանումներ և գրեթե չի փոփոխվել, և օսերի թիվը գրեթե մշտապես կազմել է 64-66%, իսկ վրացիների թիվը՝ 28-35%¹.

¹ А.Цуцнев, Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), М., 2006, с. 104.

1959թ.	1970թ.	1979թ.	1989թ.	2002թ.
66% - 28%	66% - 28%	66% - 29%	66% - 29%	64% - 35%

Ավելին, վերոբերյալ աղյուսակից պարզորոշ է դառնում նաև մի շատ կարևոր հանգամանք. չնայած Զ.Գամսախուրդիայի տարիներին տեղի ունեցած օսերի զանգվածային էթնոզտմանն ու երկրից վտարման քաղաքականությանը, ինչպես և վրաց-օսական հարաբերությունների ծայրահեղ լարվածությանն ու մեկուկես տարի տևած զինված բախումներին, այդուհանդերձ, մինչ 2008թ. հնգօրյա պատերազմը Հվ.Օսիայում վրացիների էթնոզտում տեղի չի ունեցել: 1989թ. համեմատ 1993թ. գրանցվել է ՀՕ ընդհանուր ազգաբնակչության թվի նվազում՝ 98,5 հազարից հասնելով 70 հազարի¹: Այստեղ նաև պետք է հաշվի առնել պատերազմական իրողություններով պայմանավորված (հիշենք, որ հիմնովին կամ մասնակիորեն ավերվել էին ինչպես հարյուրավոր գյուղական բնակավայրեր, այնպես էլ Ցխինվալ քաղաքը) երկրի ազգաբնակչության ժամանակավոր հեռացումը դեպի անվտանգ վայրեր (օսական հատվածը՝ Հյուսիսային Օսիա, վրացական հատվածը՝ Վրաստան): Ճիշտ է, ինչպես օսերից, այնպես էլ վրացիներից շատերը հեռացել են անվերադարձ, այդուհանդերձ, համաձայն հետպատերազմյան ցուցանիշների՝ օսերի և վրացիների ընդհանուր թվային հարաբերակցությունը պահպանվել է: Այն իրողության մասին, որ վրաց-օսական առաջին հակամարտությամբ պայմանավորված ՀՕ վարչական սահմաններում վրացիների էթնիկ գտում տեղի չի ունեցել, փաստում են ոչ միայն թվերը, այլ նաև մի շարք հայտնի հեղինակներ: Վրացիների մի հատվածը, լոյալություն դրսևորելով հարավօսական իշխանությունների հանդեպ, անգամ պատերազմի ու ոմբակոծությունների ծանր օրերին շարունակեց ապրել Ցխինվալ քաղաքում (վերջիններիս թիվը 700-ից անցնում էր, քաղաքում մնացել էին նաև շուրջ 340 վրացախոս հայեր): Հվ.Օսիայի վրացի ազգաբնակչությանը, որը պատերազմի օրերին չեզոքություն դրսևորեց և չմարտնչեց օսերի դեմ, Վրաստանում համարեցին դավաճաններ²:

Հետպատերազմյան շրջանում՝ մինչև 2008թ., վրացիները շարունակեցին ապրել ՀՕ-ում ինչպես առանձին, այնպես էլ վրաց-օսական խառը բնակավայրերում: Արդյունքում՝ առաջացան իրար հաջորդող վրացական և

¹ *А. Скаков*, Южная Осетия: социально-демографические проблемы, экономика, политика, Грузия: проблемы и перспективы развития, т. 1, РИСИ, М., 2002, с. 173.

² *И.Кочиева, А.Маргиев*, Грузия. Этнические чистки в отношении осетин, источник: https://www.e-reading.club/bookreader.php/88842/Kochieva%2C_Margiev_-_Gruziya._Etnicheskie_chistki_v_otnoshenii_osetin.html.

օսական, այսպես կոչված, անկլավային գոտիներ, որոնք, օս հեղինակ Ա.Յուցինի պատկերավոր բնորոշմամբ, ստացան «շերտավոր կարկանդակի» ձև¹: Այդպիսի անկլավային գոտի առաջացավ և՛ Ջնաուր քաղաքի շրջակայքում, և՛ Ցխինվալի շրջանում, որտեղ Մեծ և Փոքր Լիախվա գետերի երկայնքով տեղակայված էին զգալի թվով վրացաբնակ կամ խառը բնակչությամբ բնակավայրեր, և՛ Լենինգորի շրջանում, որտեղ Քսանի գետի երկայնքով առկա էին մեկուկես տասնյակից ավելի վրացաբնակ կամ խառը բնակչությամբ գյուղեր: Լենինգորի շրջանի արևելյան՝ վրացական իշխանություններին ենթարկվող այս հատվածը (Քսանի գետի հովիտը) Վրաստանի վարչատարածքային կառուցվածքի ձևավորման ժամանակ Վրաստանի ղեկավարի հրամանագրով (1995թ. մարտ) մտցվեց նորակազմ Մցխեթա-Մթիանեթի նահանգի մեջ²: Համավրաստանյան մարդահամարի ժամանակ (2002թ.) Լենինգորի շրջանի այս հատվածում ևս անցկացվեց մարդահամար, ստացված տվյալների համաձայն՝ այստեղ ապրող վրացիների թիվը կազմում էր 6,520, օսերինը՝ 1,110: Եթե այս թիվը համեմատենք Լենինգորի շրջանի 1989թ. ցուցանիշների հետ (վրացիների թիվը կազմում էր 6,493), ապա առավել հիմնավոր կդառնա վերը բերված փաստարկն առ այն, որ ՀՕ վրացական ազգաբնակչությունը չի ենթարկվել զանգվածային արտաքսման:

ՀՕ միջազգային ճանաչումը բացառող գործոնները

Վրաց-օսական վերոնշյալ «շերտավոր կարկանդակում» առկա խնդիրները համակարգվում էր ինչպես ՀՕՆ իշխանությունների և վրացական վարչակազմի (Շիդա Քարթլիի նահանգային իշխանությունների), այնպես էլ 1992թ. հունիսի 24-ի Դազոմիսյան համաձայնագրով ստեղծված Խառը վերահսկիչ հանձնաժողովի (ԽՎՀ) միջոցով (հանձնաժողովը բաղկացած էր Ռուսաստանի, Վրաստանի, Հս. և Հվ.Օսիաների ներկայացուցիչներից): Դազոմիսյան համաձայնագրով ստեղծվել և, ելնելով ՀՕ տարածքի անկլավային գոտիների դասավորվածությունից, համապատասխան հատվածներում տեղակայվել էին Խաղաղապահների խառը ուժեր՝ բաղկացած ռուսական, օսական և վրացական զումարտակներից: Դազոմիսյան համաձայնագրով նախատեսված միջոցառումները բազմաթիվ հեղինակներ համարել

¹ А.Цуциев, Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), М., 2006, с. 92.

² 1990-ական թթ. կեսերին ձևավորված Վրաստանի նոր վարչատարածքային բաժանմամբ ՀՕ տարածքները ներառվեցին 4 նորաստեղծ նահանգների մեջ. ՀՕ-ի արևելյան հատվածը ներառվեց Մցխեթա-Մթիանեթի, կենտրոնական հիմնական հատվածը՝ Շիդա Քարթլիի, արևմտյան մի փոքր հատված մտցվեց Իմերեթի և, վերջապես, հյուսիսարևելյան ևս մի փոքր հատված ներառվեց Ռաջա-Լեչխումի և Քվեմո Սվանեթիի նահանգների մեջ:

են խաղաղության պահպանման և լարվածության թուլացման լավագույն մեխանիզմը: ԽՎՀ-ի, ԵԱՀԿ-ի (ԵԱՀԿ գրասենյակը Ցիսինվալում հիմնվեց 1997թ. ապրիլի 22-ին) և տարբեր այլ միջնորդական մեխանիզմների միջոցով ՀՕ վրացի և օս ազգաբնակչությունն ազատ և անվտանգ կերպով տեղաշարժվում էր, չնայած երկուստեք ղեկավարության միջև առկա բազմաթիվ բարդ խնդիրներին, այդուհանդերձ, գրեթե նվազագույնի էին հասցված երկու ժողովուրդների միջև առկա հակասությունները, որոնք առավելապես առնչվում էին ոչ թե ազգային խնդիրներին, այլ հողային և տնտեսական հարաբերություններին¹: Չնայած Ջ.Գամսախուրդիայի տարիներից Վրաստանում տարված հակասական քարոզչությանը՝ օսերի հանդեպ կիրառված էթնոզոման քաղաքականությանը և օսերին «լեռնական բարբարոսներ» պիտակավորելուն, վերոբերյալ փաստերն ապացուցում են, որ ինչպես տվյալ, այնպես էլ հետագա ժամանակահատվածում Հվ.Օսիայի օսաբնակ միջավայրում վրացիներն ապրել են բավական խաղաղ և համերաշխ միջավայրում:

Հետդազմիայան շրջանում, մինչև 2000-ական թթ. կեսերը, բազմիցս հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի և ՀՕ բարձրագույն ղեկավարության միջև, քննարկվել են էներգետիկ, տրանսպորտային, ֆինանսաբանկային և տնտեսական համագործակցությանն առնչվող հարցեր: Չնայած տեխնիկական բազմաթիվ խնդիրներին՝ մինչև 2006թ. այս կամ այն կերպ շարունակում էր գործել Ռոքի թունելը², և բազմիցս քննարկվում էր Ռուսաստանի հետ այս կարևոր անցակետը Վրաստանի և ՀՕ-ի կողմից համատեղ շահագործելու հարցը: Ի դեպ, Ռոքի թունելին հարող ռուս-հարավօսական (վրացական) սահմանային անցակետի («Ներքին Ջարամագ-Ռուկ») հիմնման մասին որոշումը կայացվել է հենց այս շրջանում՝ 1993թ.³: Վերականգնվել էր Ցիսինվալ-Գորի գազատարը և այլն:

¹ *А. Скаков, Южная Осетия: социально-демографические проблемы, экономика, политика, Грузия: проблемы и перспективы развития*, т. 1, РИСИ, М., 2002, с. 172.

² Վրաց-ռուսական հարաբերությունների հետզհետե սրման պայմաններում 2006թ. հուլիսի 8-ին փակվեց Վրաստանը Ռուսաստանին կապող «Կազբեկ-Վերին Լարս» սահմանային անցակետը (վերստին բացվեց 3 տարի անց և գործում է մինչ օրս): Ի պատասխան՝ վրացական իշխանությունները մեկ օր անց սրեցին իրավիճակը Ռոքի թունելին հարող ռուս-հարավօսական (վրացական) սահմանային անցակետում, արգելելով ռուսական անձնագրով քաղաքացիների մուտքը երկիր: ՀՕ օս ազգաբնակչության շուրջ 98%-ը հանդիսանում էր ՌԴ քաղաքացի, ուստի նշված քայլը խիստ բացասական արձագանք գտավ ՀՕ իշխանությունների մոտ, տե՛ս *Перенаправленный взрыв, Грузия и Южная Осетия обвиняют друг друга в убийстве Олега Алборова*, источник: <https://www.kommersant.ru/doc/688852>.

³ *Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Грузия о пунктах пропуска через таможенную границу (Заклучено в г.Москве 08.10.1993), Дипломатический вестник, N 23 - 24, 1993.*

Ընդհանուր գծերով ներկայացնելով Դազոմիայան համաձայնագրից (1992թ.) մինչև վրաց-օսական 2008թ. հնգօրյա պատերազմն ընկած ժամանակաշրջանը՝ փաստենք, որ նման պայմաններում որևէ խոսք չէր կարող լինել ՀՕՀ միջազգային ճանաչման վերաբերյալ: Չնայած մեկուկես տասնամյակի ընթացքում ՀՕՀ ղեկավարությունը ճանաչման խնդրանքով բազմիցս դիմել էր ՌԴ-ին, այդուհանդերձ, այդ քայլին չէր պատրաստվում գնալ նաև ՌԴ-ն: Պատճառներից առանցքայինը, մեր կարծիքով, հետևյալն էր. Դազոմիայան համաձայնագրով ստեղծված ռազմաքաղաքական, տարանցիկ, տնտեսական և, հատկապես, ժողովրդագրական իրավիճակը չէր տալիս այդպիսի հնարավորություն: Մի քանի վրացաբնակ անկլավների գոյությունը ՀՕ վարչական սահմաններում, վրացական իշխանությունների՝ միջնորդավորված և ուղղակի լիազորությունների տարածումն այդ բնակավայրերի վրա, Դազոմիայան համաձայնագրով այդ վայրերում տեղակայված վրացական գումարտակների առկայությունը, ԽՎՀ գոյությունը, վերջինիս միջոցով և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ վրաց-օսական որոշակի (թեկուզև շատ դեպքերում անարդյունք) բանակցությունների առկայությունը, մեծագույն ցանկության պարագայում անգամ, մոտ ապագայում բացառում էին ՀՕՀ միջազգային ճանաչումը: Դա խոստովանում էին նաև օս հեղինակները. Ա.Յուցինն այդ առիթով 2004թ. գրում էր. «*Հվ.Օսիայի պարտադիր ճանաչումը (միջազգային – իրավական առումով) քիչ է հավանական*»¹: Տվյալ դեպքում խոսքը կարող էր վերաբերել բազմակողմ համաձայնագրով ամրագրված ինչ-որ ասոցացված պետական կազմավորմանը, որը պետք է գոյություն ունենար Վրաստանի կազմում և ամրագրվեր Վրաստանի սահմանադրությամբ:

Հարցի բարդությունը լավ էին պատկերացնում նաև Հարավային Օսիայի ղեկավարները. երկարամյա փորձառություն ունեցող հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, 2004-2009թթ. ՀՕՀ խորհրդարանի նախագահ Զ.Գասիևը 2005թ. տված հարցազրույցներից մեկում շոշափում է նաև վրացական անկլավներից մեկի՝ Հյուսիսային և Հարավային Օսիաների միջև գտնվող 4 վրացաբնակ գյուղերի հարցը, որտեղ գործածվում էր վրացական արժույթը, բնակչությունը մասնակցում էր Վրաստանի համապետական ընտրություններին և այլն: Երկու Օսիաների միացման և միասնաբար ՌԴ կազմում ընդգրկվելու դեպքում Զ.Գասիևն առաջարկում էր երկու տարբերակ: Առաջին տարբերակի համաձայն՝ նշյալ գյուղերի վրացի

¹ А.Цуцнев, Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), М., 2006, с. 93.

ազգաբնակչությանը պետք է վտարեին ՀՕՀ-ից, որին կտրականապես դեմ էր նաև ինքը՝ Զ.Գասինը, իսկ երկրորդ տարբերակով վերջիններս պետք է մնային ՀՕՀ-ում՝ Վրաստանի քաղաքացիությունից հրաժարվելու կամ, ծայրահեղ դեպքում, երկքաղաքացիություն (խոսքը տվյալ դեպքում վերաբերում էր ՌԴ քաղաքացիություն ստանալուն) ստանալու պայմանով¹: Պարզորոշ էր, որ օս պետական գործչի այս առաջարկ-պայմանը վերաբերում էր նաև ՀՕՀ մնացած վրացաբնակ անկլավների ազգաբնակչությանը: Փաստենք, որ օսական կողմի՝ խնդրի լուծման այս տարբերակներից յուրաքանչյուրը գործնական հողի վրա իրականացնելը չափազանց բարդ էր և, կարելի է ասել, տվյալ ժամանակափուլի համար՝ անհնարին: Ավելին. Թբիլիսիի կողքին գտնվող, արտաքին աշխարհից Մեծ Կովկասյան լեռնաշղթայով կտրված, ընդամենը 60 հազար բնակչությամբ և մեկ երրորդով վրացաբնակ Հվ.Օսիայիում վրաց-օսական «շերտավոր կարկանդակի» էթնոժողովրդագրական պատկերը տարիներ կամ տասնամյակներ շարունակ պահպանվելու դեպքում՝ երկրամասի վրա վերահսկողությունը կարող էր ինքնաբերաբար վերադառնալ Վրաստանին, հենց որ թուլանար Հվ.Օսիային տրվող քաղաքական և ռազմական արտաքին աջակցությունը: Ուստի, 2008թ. նախորդող իրավիճակում այս տարածքում անկախ պետականության գաղափարը շատ քիչ իրական բովանդակություն կարող էր ունենալ, եթե անգամ այն ճանաչեին ոչ միայն Ռուսաստանը, այլև Միացյալ Նահանգները և Եվրոպական միությունը:

Տասնյակ հազարավոր օսաբնակ վրացիների հայրենագրկումը.

Միխեիլ Սաակաշվիլին ՀՕՀ միջազգային ճանաչման ճարտարապետ

Հանրության մեծ մասի մեջ կարծրացած այն տեսակետը, թե ՀՕ-ն մինչև 2008թ. պատերազմն² այսպես թե այնպես կորած էր Վրաստանի համար, հիմնականում միակողմանի քարոզչության արդյունք է և միտված է կոծկելու Մ.Սաակաշվիլու՝ սեփական պետությանը պատճառած անդառնալի կորուստների չափը³: Իրականում Հվ.Օսիայի՝ Վրաստանի համար իրա-

¹ «სვებს ეხლა ამგროვასთან მიერთება მოუხდათ, "ახალი თაობა" («Ախալի թաոբա» - «Նոր սերունդ»), N 287, 2005.

² Պատերազմական գործողությունների դրդապատճառների, տարածաշրջանային հետևանքների և ազդեցությունների մասին տե՛ս *Գ.Հարությունյան*, Հվ.Օսիայի շուրջ հակամարտության առանձնահատկությունները, 21-րդ դար, թիվ 3 (21), 2008, էջ 3-14:

³ Այս մտայնությունը հիմնականում գերիշխում է ՀՀ ընդդիմադիր և որոշ արևմտամետ շրջանակների մեջ, որոնք, հակադրվելով ՀՀ իշխանություններին, ձգտում են Մ.Սաակաշվիլուն ներկայացնել որպես մեծագույն ժողովրդավար և ռեֆորմատոր:

կան և վերջնական «կորստի», ինչպես և ՀՕՀ միջազգային ճանաչման համար հարկավոր էին նոր իրավիճակ և նոր գործընթացներ, որոնք կբերեին ստեղծված ստատուս քվոյի խախտմանը, քանի որ ճանաչումը կենթադրեր նաև Դազոմիայան համաձայնագրի չեղարկում: Մ.Մասկաշվիլու իշխանության առաջին տարիներին ՀՕ ամեն կերպ նվաճման մասին հայտարարությունները¹, ռազմական բյուջեի շեշտակի ավելացումը (\$30 մլն՝ 2003թ. և \$940 մլն՝ 2007թ.), հակամարտության խաղաղ կարգավորման համար Դազոմիայան համաձայնագրով կյանքի կոչված ԽՎՀ-ից 2008թ. մարտին Վրաստանի դուրս գալու մասին որոշումը², «Մաքուր դաշտ» ռազմական օպերացիայի հրապարակ բերելը և, ի վերջո, 2008թ. օգոստոսին տեղի ունեցած հնգօրյա պատերազմը և ՀՕ տարածքում վրացաբնակ անկլավների գրեթե վերացումը ստեղծեցին օսական կողմի համար այդքան սպասված և խիստ նպաստավոր իրավիճակը: Փաստենք, որ միջազգային կազմակերպությունների տվյալների համաձայն՝ հնգօրյա պատերազմի արդյունքում ՀՕ-ից հեռացավ և Վրաստանում հանգրվանեց շուրջ 15,000 վրացի³, ովքեր, ի տարբերություն ՌԴ-ում հանգրվանած մի քանի տասնյակ հազար օս փախստականների, այլևս չվերադարձան իրենց բնակավայրեր: Արդյունքում՝ Հվ.Օսիան վերածվեց գրեթե մոնոէթնիկ պետական կազմավորման. 2015թ. կայացած առաջին համընդհանուր մարդահամարի տվյալներով՝ 48,146 օսերի կողքին ապրում էր ընդամենը 3,966 վրացի (ՀՕՀ բնակչության ընդհանուր թիվը 53,532 էր), որոնք բնակվում էին Ջաուի (նախկինում՝ Ջավա, 354), Ջնաուրի (431), Ցխինվալի (309), Լենինգորի (2337) շրջաններում և մայրաքաղաք Ցխինվալում (535)⁴: Պարզորոշ է, որ Հվ.Օսիայի՝ որպես մոնոէթնիկ, Վրաստանի իշխանությունների հետ բոլոր ձևի և տեսակի հարաբերությունները խզած պետական կազմավորման ճանաչումն արդեն

¹ Վրաստանի պաշտպանության նախարար Բ.Օքրուաշվիլին 2006թ. մայիսի 1-ին «Իմեդի» հեռուստատեսության ուղիղ եթերում հայտարարեց, որ չի հրաժարվում իր մտադրությունից և պատրաստվում է 2007թ. Ամանորը դիմավորել ՀՕ մայրաքաղաքում: Նա նաև նշեց, որ հրաժարական կտա, եթե դա տեղի չունենա, տե՛ս Окруашили уволится, если не встретит Новый год в столице Южной Осетии, источник: <http://www.kavkaz-uzel.eu/articles/93943/>. Վրացական և օսական շրջանակները համապատասխանաբար ողջունեցին և դատապարտեցին նրա այս հայտարարությունը, տե՛ս օրագլո օქրუაშვილს ამ მთავრობაში ყველაზე მეტ პატივს ვცემ, "ახალი თაობა" («Ախալի թաութა» - «Նոր սերունդ»), N 31, 2006, "օქრუაშვილი ოსია. ერთი ჩამოვიდეს, ნახე, რა დღეს დავაგრო", "კრიზისალო" («Կռիմինալի» («Քրեական»), N 39, 2006.

² Грузия зовет Запад на подмогу, источник: <https://utro.ru/articles/2008/03/05/721413.shtml>.

³ ООН: из-за конфликта в Южной Осетии беженцами стали более 118 тыс. человек, источник: https://www.gazeta.ru/news/lenta/2008/08/15/n_1257685.shtml:

⁴ Итоги всеобщей переписи населения РЮО 2015 года, официальное издание, Цхинвал, 2016, с. 98-103.

որևէ բարդություն չէր կարող ներկայացնել, ինչը և տեղի ունեցավ հնգօրյա պատերազմից օրեր անց:

Որքան էլ օսական կողմի համար մեծ է 2008թ. օգոստոսյան պատերազմի ցավը, իսկ խաղաղ բնակչության կորուստներն՝ անդառնալի, այդուհանդերձ, Վրաստանի նշյալ շրջանի ռազմաքաղաքական ղեկավարության, այն է՝ Մ.Սաակաշվիլու և իր թիմակիցների արկածախնդիր քայլերով օսժողովրդին «մատուցած ծառայություններն» ունեցան դարակազմիկ նշանակություն և բացեցին նոր էջ ՀՕ պատմության մեջ¹:

Սպրիլ, 2018թ.

ՀԱՐԱՎՕՍՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Վահե Սարգսյան

Ամփոփագիր

1992թ. հունիսի 24-ի Դազոմիսյան համաձայնագրով (զինադադար) ստեղծված ստատուս քվոյով ստեղծվել էր խաղաղ բանակցությունների իրական հարթակ, որն իր հերթին բացառում էր Հարավային Օսիայի Հանրապետության (ՀՕՀ) միջազգային ճանաչումը: Նշյալ գործընթացի սկզբնավորման համար հարկավոր էր ստատուս քվոյի խախտում, մի նոր իրադրություն, որը կվերացներ ՀՕՀ միջազգային ճանաչմանը խոչընդոտող հիմնական գործոնները, որոնց շարքում էին և՛ խաղաղ բանակցությունների առկայությունը, և՛ վրաց-օսական տարանցիկ, տնտեսական, էներգետիկ հարաբերությունների այս կամ այն կերպ առկայությունը, և՛ ՀՕՀ տարածքում վրացաբնակ խոշոր անկլավների գոյությունը: 2008թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը և Մ.Սաակաշվիլու արկածախնդրությունը ստեղծեցին ՀՕՀ իրավական ճանաչման համար իրատեսական հիմքեր:

¹ ՀՕՀ միջազգային ճանաչումը և Վրաստանի համար անշրջելի իրողությունների ի հայտ գալը Մ.Սաակաշվիլու վարչախմբի արկածախնդիր քայլերի և 2008թ. հնգօրյա պատերազմի հետևանքների մեկ օրինակ է: Մինչ պատերազմը Վրաստանի վերահսկողության տակ գտնվող Կոդորի կիրճի վերջնական միացումը Աբխազիային, արխազական հարցում Վրաստանի համար նույնքան անդառնալի շրջադարձերը, ՀՀ տարանցիկ ուղիներին հասցված խոշորամասշտաբ վնասները և բազմաթիվ այլ խնդիրներ մեր կողմից կլուսաբանվեն այլ առիթներով:

О ЮЖНООСЕТИНСКОЙ ПРОБЛЕМЕ

Ваэ Саркисян

Резюме

Подписанное 24 июня 1992г. по Дагомысскому соглашению перемирие, по которому был создан статус-кво, – реальная платформа для мирных переговоров, что в свою очередь исключает международное признание Республики Южной Осетии (РЮО). Для начала этого процесса нужно было нарушить статус-кво, создать новую ситуацию для устранения основных препятствий на пути международного признания РЮО, в том числе наличие мирных переговоров, грузино-осетинских транзитных, экономических, энергетических и иных отношений и существование крупных грузинских анклавов в РЮО. 5-дневная война в августе 2008г. и авантюризм М.Саакашвили создали реальные основания для юридического признания РЮО.

ON THE SOUTH OSSETIAN ISSUE

Vahe Sarkisyan

Resume

Dagomys agreement (ceasefire) concluded on June 24, 1992 created a status quo, which provided a real platform for peaceful negotiations, and in turn, also excluded the international recognition process of the Republic of South Ossetia (RSO). For the conception of such process a breach of the status quo was needed, a new event, which would eliminate the main factors hindering the international recognition of the RSO, among which were the peaceful negotiations, one or another form of the Georgian-Ossetian transit, economic, and energy relationships, and the existence of big enclaves in the RSO resided by the Georgians. The five-day war in August, 2008 and Saakashvili's adventurism created realistic premises for the legal recognition of the RSO.

ՀԱՊԿ-Ը ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անժեյա Մնացականյան՝

Բանալի բառեր՝ զինված ուժեր, ազգային միջոցների մարտավարական օգտագործում, ռազմական քաղաքականություն, անվտանգային համագործակցություն, ազգային անվտանգության ռազմավարություն:

Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը կնքվել է 1992թ. մայիսի 15-ին՝ եվրասիական անվտանգային ճարտարապետության արմատական կերպարանափոխության սկզբնական փուլում [1], իսկ 2002թ. մայիսին վերակազմավորվել է միջազգային տարածաշրջանային կազմակերպության՝ ՀԱՊԿ-ի [2, էջ 147-155]: ՀԱՊԿ-ը կոչված էր ապահովելու հետվարչական տարածքի սահուն հրաժարումը երկրներ ղիմակայության անվտանգային ճարտարապետությունից՝ պաշտպանելով նոր համաչափ սպառնալիքներից, որոնք առկա էին Վարչական պայմանագրի պատասխանատվության գոտում՝ կապված դրա լուծարման հետ [3, էջ 186]:

Տարածաշրջանային մակարդակում ՀԱՊԿ-ն իր գործունեությունն իրականացնում է երեք ուղղությունով՝ արևելաեվրոպական, կովկասյան և կենտրոնաասիական: Կովկասյան ուղղությունը հիմնված է հայ-ռուսական համագործակցության վրա, ինչն ավելի է բարձրացնում Հայաստանի նշանակությունը կառույցում: ՀԱՊԿ կովկասյան ուղղությունը կազմակերպվել է երկկողմ համագործակցությամբ: 2000թ. օգոստոսի 27-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվել է համաձայնագիր հավաքական անվտանգության ապահովման և զինված ուժերի համատեղ կիրառման ու պլանավորման հարցերի վերաբերյալ: Համաձայնագիրն իրավական հիմք հանդիսացավ երկու երկրների միացյալ զորքերի ստեղծման համար՝ ուղղված միասնական ղեկավարության ներքո համատեղ պաշտպանական խնդիրների լուծմանը: Այս և Բելառուսի ու Ռուսաստանի միջև կնքված

*ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության անձնակազմի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հայցորդ:

երկկողմ համաձայնագիրը որպես հղում ներկայացվում են Հավաքական անվտանգության մասին պայմանագրի նախաբանում: Հավաքական անվտանգության գործող հայեցակարգում նշվում է, որ կազմակերպության անդամերի կողմից ոչ մի պետություն կամ դրանց դաշինք չի դիտարկվում որպես հակառակորդ [4, էջ 250]:

Դեռևս 2009թ. սկզբին «Եվրոպական անվտանգության ճարտարապետություն» զեկույցում ՀԱՊԿ-ը հատուկ ուշադրության արժանացավ որպես Եվրոպայում անվտանգության ապահովման նոր համակարգի կարևոր մասնակից: Զեկույցում կոչ էր արվում վերանայել ՀԱՊԿ նշանակության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը և իրականացման հնարավորությունները, հատկապես այդ կազմակերպությանը մասնակից պետություններին և դրանից դուրս հնարավոր առնչություն ունեցող սուբյեկտներին ակտիվացնելու մասով: Առաջարկվում էր հստակեցնել կազմակերպության գործառույթների իրատեսական բնույթը, ինչը կխթաներ այնպիսի գործընկերների հետաքրքրությունը ՀԱՊԿ-ի հանդեպ, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն և Եվրամիությունը: Իսկ «Ռուսաստանի և ՆԱՏՕ հարաբերությունների զարգացման հեռանկարների մասին» ինստիտուտի՝ 2010թ. հոկտեմբերին հրատարակված զեկույցում բարձրացվեցին ավելի կոնկրետ հարցեր: Մասնավորապես, նշվում էր, որ կազմակերպությունը կարող է լինել հիմնական օղակ ինչպես տարածաշրջանային անվտանգության բարեփոխումների, այնպես էլ Ռուսաստան-ՆԱՏՕ նոր փոխհարաբերությունների կառուցման գործում: Վերոնշյալ ինստիտուտի 2011թ. հրատարակած «Ապագայի ձեռքբերում. 2012-ի ռազմավարություն» զեկույցում նշվում է, որ հետխորհրդային տարածաշրջանում կարևոր խնդիրներից է ՀԱՊԿ պահանջվածության ապահովումը որպես հավաքական անվտանգության կառույցի՝ վերջինիս գործունակության և արդյունավետության ընկալման առաջնահերթություններով [4, էջ 310]: ՀԱՊԿ պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունում նշվում է. «Մասնակից պետությունները հաստատում են իրենց պարտավորությունը՝ միջպետական հարաբերություններում զերծ մնալ ուժի կիրառությունից կամ ուժի սպառնալիքից, իրար միջև, ինչպես նաև այլ պետությունների հետ տարածայնությունները լուծել խաղաղ ճանապարհով»: Նույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշվում է. «Մասնակից պետությունները չեն մտնի ռազմական դաշինքների, այլ խմբավորումների մեջ, ինչպես նաև չեն մասնակցի մյուս անդամ պետության դեմ ուղղված գործողություններին»: Կարելի է ասել, որ սրանով կանխորոշվում է ՆԱՏՕ-ՀԱՊԿ հարաբերությունների մակարդակը [5]: ՀԱՊԿ՝ ՆԱՏՕ-ին հակակշիռ

ուժ դառնալու առաջին լուրջ խոչընդոտը վերաբերում է ՀԱՊԿ անդամ երկրների միջև, թերևս, փոխգործակցության արդյունավետության, փոխվստահության մթնոլորտի ապահովման ոլորտում առկա խնդիրներին: Հիմնավորումը կարելի է բացատրել Հայաստանի օրինակով. երբ 2014թ. օգոստոսին և 2016թ. ապրիլին պաշտոնական Երևանը կանգնած էր Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի նախաշեմին, ՀԱՊԿ անդամ որոշ երկրներ բացահայտ աջակցում էին Ադրբեջանին: Մինչդեռ, երբ 2015թ. նոյեմբերի 24-ին թուրքական զինուժը Սիրիայի տարածքում խոցեց ռուսական ՄՈւ-24 ռմբարկուն [6], ՆԱՏՕ անդամ բոլոր երկրները, ներառյալ Հունաստանը, իրենց աջակցությունը հայտնեցին Թուրքիային [7]՝ առաջնորդվելով «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» սկզբունքով [8]: Մինևս ժամանակ, օբյեկտիվորեն նշենք, որ չնայած այդ ամենին, ներկայում Թուրքիան և Հունաստանը գտնվում են փոխհարաբերությունների քաղաքական ճգնաժամում, բայց դա ամեննին էլ չի նվազեցնում ՀԱՊԿ ներքին հակասություններին վերաբերող հարցերի կարևորությունը:

Հայաստանը ՀԱՊԿ հիմնադիր անդամ է, վերջինս Հայաստանի անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրատարրերից է: Պաշտոնական Երևանն իր արտաքին ռազմական քաղաքականությունն իրականացնելիս մեծ դեր է հատկացնում ՀԱՊԿ-ին: Հավաքական անվտանգության ձևաչափը ենթադրում է անդամ պետությունների համաձայնեցված դիֆերոշում միջազգային հարաբերություններում խնդիրների առկայության դեպքում: Համաձայն ՀԱՊԿ կանոնադրության 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության, եթե «անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա անդամ պետությունների կողմից դա կհամարվի որպես ագրեսիա սույն պայմանագրի բոլոր մասնակից պետությունների դեմ: Մասնակից պետություններից որևէ մեկի դեմ ագրեսիայի ակտի պարագայում մնացած մասնակից պետությունները կցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն, ներառյալ ռազմական օգնությունը, նաև կցուցաբերեն օժանդակություն իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով՝ հավաքական պաշտպանության իրավունքի իրագործման կարգին համապատասխան, համաձայն ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածի» [5]: Հայաստանի անվտանգության համակարգի առանցքային բաղադրիչներից է ՀԱՊԿ շրջանակներում Ռուսաստանի հետ համագործակցությունը, որի արդյունքում կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» և «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 21-րդ դար ուղղված դաշ-

նակցային փոխգործակցության մասին» պայմանագրերը, պաշտպանության ոլորտում սերտ համագործակցությունը և Ռուսաստանի ռազմական ներկայությունը Կովկասում ՀՀ անվտանգության և տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության ապահովման կարևոր գործոն են [9, էջ 93]: Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին, ռազմատեխնիկական, զենքի ու ռազմական տեխնիկայի ձեռքբերման տեսանկյունից, ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածությունն ու մարտունակությունը որոշող կարևորագույն գործոններից է: ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության վերաբերյալ նշվում է, որ «նման կերպ ոչ միայն բարձրանում է հայոց բանակի միջազգային հեղինակությունը, այլև ՀՀ զինված ուժերը ծանոթանում են ժամանակակից բանակներում քննություն բռնած առաջավոր փորձին և այն կիրառում ՀՀ զինված ուժերի շինարարության գործում» [10, էջ 208]: ՀԱՊԿ-ին անդամակցությունը նաև արտոնյալ պայմաններ է ընձեռում ռազմատեխնիկական մատակարարումների և ամենամյա համատեղ գորավարժությունների միջոցով բանակի մարտունակության բարձրացման համար [11, էջ 535]՝ հաշվի առնելով ՀԱՊԿ-ում կիրառվող զեղչեր տրամադրող ռեժիմը ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում: 2003-ից պաշտոնական Մոսկվան ՀԱՊԿ անդամ երկրներին ռազմական նշանակություն ունեցող արտադրանք է մատակարարում ներդրուսական զներով և առանց ավելացված արժեքի հարկը գանձելու:

Պաշտոնական Երևանն իր ռազմական քաղաքականությունն իրականացնում է ՀԱՊԿ և նրա կազմի մեջ մտնող բոլոր պետությունների շահերը հաշվի առնելով: ՀԱՊԿ-ին անդամակցությունը Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է, որն իրագործվում է անդամ պետությունների միջև բազմակողմ կապերի միջոցով [12]:

ՀԱՊԿ կանոնադրության 2-րդ հոդվածում նշվում է. «Մեկ կամ մի քանի անդամ պետությունների անվտանգության, կայունության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության սպառնալիքի ի հայտ գալու կամ միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքի դեպքում անդամ պետություններն անհապաղ գործի են դնում համատեղ խորհրդակցության մեխանիզմը՝ իրենց դիրքորոշումները համակարգելու նպատակով, մշակում և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում նման անդամ պետություններին օգնություն ցուցաբերելու համար՝ սպառնալիքի վտանգի վերացման նպատակով»: Իսկ 4-րդ հոդվածը սահմանում է. «Եթե անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի, ապա դա անդամ պետությունների կողմից կհամարվի որպես ագրեսիա սույն պայ-

մանագրի բոլոր անդամ պետությունների դեմ»: Վերոհիշյալ հոդվածով նախատեսված պարտավորությունները կատարելու պատրաստվածությունը գործնական առումով ապացուցելուն և պաշտոնական Երևանի հանդեպ հնարավոր ագրեսիայի սպառնալիքի կամ ագրեսիայի ակտի դեպքում Հայաստանի պետական կառավարման մարմինների կողմից ձեռնարկվելիք քայլերի մշակմանն էին միտված 2008թ. հունիս-օգոստոսին Հայաստանում «Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համատեղ պաշտպանության գործողության նախապատրաստում և անցկացում» խորագրով անցկացված ՀԱՊԿ անդամ պետությունների հավաքական ուժերի և միջոցների համակարգի «Ռուբեժ-2008» համատեղ հրամանատարաշտաբային գորավարժությունները:

2009թ. փետրվարի 4-ին, ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահության օրոք, Մոսկվայում գումարված ՀԱՊԿ ՀԱԽ արտահերթ նստաշրջանի արդյունքներով կայացվեց որոշում՝ ստեղծել Օպերատիվ արձագանքման հավաքական ուժեր (ՕԱՀՈ): Նշվեց, որ ՕԱՀՈ առջև դրվելու են ՀԱՊԿ անդամ պետությունների հանդեպ ռազմական ագրեսիայի կասեցման, միջազգային ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հատուկ գործողությունների անցկացման, բնական և տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման և այլ խնդիրներ: Ներկայում ՀԱՊԿ ՕԱՀՈ կազմում ներառված են ստորաբաժանումներ ՀՀ Ձինված ուժերից, Արտակարգ իրավիճակների նախարարությունից, Ազգային անվտանգության ծառայությունից և Ոստիկանությունից: 2011թ. հունվարին պաշտոնական Երևանը ՀԱՊԿ-ում մշտական ներկայացուցչություն հիմնեց, արդեն 2013թ. տարեվերջին ներկայացուցչությունում նշանակվեց նաև ՀՀ ՁՈ ներկայացուցիչ:

Եթե համակարգենք ասվածը, ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցությունն ունի մի շարք առավելություններ.

- անդամակցությունը դրական է անդրադարձել երկրի մարտունակության վրա,
- շնորհիվ ՀԱՊԿ անդամակցության և Ռուսաստանի հետ համագործակցության Հայաստանը կարողացավ իր բանակի մակարդակը ժամանակակից տեխնիկայի հագեցածության առումով հասցնել միջազգային բարձրագույն չափանիշների,
- ըստ ռազմական փորձագետների գնահատականների՝ Հայաստանը տարածաշրջանում ստեղծել է ապահով Հակաօդային պաշտպանության համակարգ: Պաշտոնական Երևանը մտնում է ՀԱՊԿ համատեղ

հակաօդային պաշտպանության համակարգի մեջ և տնօրինում է ամենակատարելագործված ՀՕՊ միջոցների,

- ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանը հնարավորություն է ստանում արտոնյալ զենք և զինամթերք ստանալու,
- Հայաստանն օգտագործում է ՀԱՊԿ անդամակցությունը՝ իր ձայնը լսելի դարձնելու և իր միջազգային ներկայացվածությունն ապահովելու համար:

Պաշտոնական Երևանը, ի տարբերություն ՀԱՊԿ անդամ այլ պետությունների, առավել մեծ հավանականություն ունի ընդգրկվելու ռազմական հակամարտության մեջ՝ Արցախյան հիմնահարցի պատճառով: Համաձայն պաշտոնական դիրքորոշման՝ ՀԱՊԿ-ը չի միջամտում Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացին, այլ միայն հետևում է զարգացումներին, քանի որ կան այդ գործով զբաղվող այլ միջազգային կազմակերպություններ, մասնավորապես՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը: Չնայած այս հանգամանքին՝ ՀԱՊԿ շրջանակներում պարբերաբար անդրադարձ է կատարվել Արցախյան հիմնախնդրի կարգավորմանը: Օրինակ՝ ՀԱՊԿ-ում անդամ պետությունների ղեկավարները միջազգային հարաբերությունների օրակարգային հարցերին նվիրված 2012թ. մայիսի 15-ի հռչակագրում և 2014թ. դեկտեմբերի 23-ի հայտարարությունում նշել են. «ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները, վերահաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջ աշխատանքների արագ ավարտման կարևորությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ՄԱԿ կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնադրությունների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը, տարածքային ամբողջականությանն ու ժողովուրդների ինքնորոշմանը» [13]: Եղել են նաև դեպքեր, երբ հարցի առնչությամբ ի հայտ են եկել կազմակերպության իրավաքաղաքական նորմերին հակասող ներքին մոտեցումներ: Այս փաստն ընդգծել է ՀՀ նախկին նախագահ Մերժ Սարգսյանը՝ Սոչիում ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի հերթական նստաշրջանի ժամանակ: Նախագահը մտահոգություն է հայտնել՝ նշելով, որ Հայաստանը ճիշտ չի համարում, երբ ՀԱՊԿ առանձին անդամ պետություններ Արցախյան հակամարտության հարցում հայտարարություններ են անում, որոնք ներդաշ-

նակ չեն կազմակերպության որոշումների հետ: ՀՀ նախագահը մասնավորապես նկատի ուներ ՀԱՊԿ անդամ երկրների և Ադրբեջանի միջև ստորագրված փաստաթղթերը [14]: Ավելին, ՀԱՊԿ անդամ Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը Իսլամական համագործակցություն կազմակերպության անդամ են, իսկ վերջինս Արցախյան հիմնահարցում ունի ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշում: Ղազախստանն ու Ղրղզստանը Թյուրքալեզու պետությունների միության [15] անդամ են, իսկ այս կազմակերպությունը բազմիցս հայտարարել է, որ Արցախյան հիմնախնդիրը պետք է կարգավորվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Համաձայն ՀԱՊԿ կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերության՝ ՀԱՊԿ անդամ պետությունները պարտավորություն են ստանձնում չանել քայլեր, որոնք ուղղված կլինեն անդամ երկրների անվտանգության դեմ: Մինչդեռ Բելառուսը Ադրբեջանին պարբերաբար զենք է վաճառում՝ ի հակադրություն պաշտոնական մակարդակով արված հայտարարությունների: ՌԴ-ի կողմից Ադրբեջանին զենք վաճառելու հարցի առնչությամբ հայկական կողմը բազմիցս հայտնել է իր մտահոգությունները:

Չնայած ՀԱՊԿ անդամ որոշ երկրների վարած վերոնշյալ քաղաքականությանը՝ պաշտոնական Երևանը շարունակում է ամրապնդել դիրքերը ՀԱՊԿ-ում և ակտիվորեն մասնակցում է ՀԱՊԿ խաղաղապահ առաքելություններին: ՀՀ ՊՆ խաղաղապահ ուժերի բրիգադի զինձառայողները 2016թ. մայիսի 17-19-ը Բելառուսում մասնակցել են ՀԱՊԿ անդամ պետությունների խաղաղապահ ստորաբաժանումների «Անսասան եղբայրություն-2016» համատեղ գորավարժությունների նախապատրաստման և անցկացման հարցերով երկրորդ շտաբային բանակցություններին: Հայկական զինուժի պատվիրակությունը մասնակցել է 2016թ. մայիսի 20-ին Տաջիկստանում անցկացված ՀԱՊԿ ռազմատնտեսական կոմիտեի 14-րդ նիստին: 2016թ. մայիսի 24-26-ին Հայաստանում անցկացվել են ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հատուկ նշանակության ուժերի կազմավորումների «Կոբալտ-2016» գորավարժությունները: 2016թ. հոկտեմբերին Երևանում կայացավ ՀԱՊԿ գագաթաժողով, որին Ղազախստանը ներկայացել էր վարչապետի մակարդակով, քանի որ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը վատառողջ էր, ինչը որակվեց որպես «դիվանագիտական հիվանդություն» [16]: Գագաթաժողովին, ի թիվս այլ հարցերի, պետք է քննարկվեր նաև ՀԱՊԿ նոր գլխավոր քարտուղարի նշանակումը, այդ պաշտոնի թեկնածուի առաջադրման իրավունքը պատկանում էր Հայաստանին [17], սակայն ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի նշանակումը հետաձգվեց մինչև 2017թ. ապրիլ:

Հայաստան-ՀԱՊԿ հարաբերությունները նոր փուլ մտան 2016թ. դեկտեմբերի՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի հայտարարությամբ, որում նա մեղադրում էր Ադրբեջանին Հայաստանի տարածք կատարած դիվերսիոն ներթափանցման փորձի մեջ՝ դա դիտարկելով որպես սադրիչ քայլ ՀԱՊԿ անդամ երկրի նկատմամբ: Հայտարարության մեջ Ն.Բորդյուժան օգտագործել է նաև «Արցախի Հանրապետություն» եզրույթը, ինչն իր արձագանքը գտավ Ադրբեջանում: Հաջորդ քայլն արեց ՀԱՊԿ առանցքային երկրի՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը՝ պատասխանելով ադրբեջանցի լրագրողին: Նրա պատասխանում հստակ նշում էր, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը չի հանդիսանում Ադրբեջանի ներքին խնդիր [18]: 2017թ. մայիսի 2-ին ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնին նշանակվեց ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի նախկին պետ, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նախկին քարտուղար, գեներալ-գնդապետ Յուրի Գրիգորիի Խաչատուրովը [19]: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում Հայաստանի թեկնածուի նշանակումը հետաձգվում էր համարյա մեկ տարի՝ կապված ՀԱՊԿ անդամ որոշ երկրների որդեգրած հակահայկական քաղաքականության հետ [20]: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վիգեն Մարգարյանն իր հարցազրույցներից մեկում, անդրադառնալով ՀԱՊԿ-ում Յուրի Խաչատուրովի գլխավոր քարտուղար նշանակմանը, նշել է, որ այն կարող է ունենալ իր դրական և բացասական ազդեցությունը Հայաստանի համար, քանի որ ՌԴ քաղաքացի Նիկոլայ Բորդյուժայի և ՀՀ քաղաքացի Յուրի Խաչատուրովի հայտարարությունները տարբեր կշիռ կունենան ՀԱՊԿ-ում՝ հավելելով, որ Յուրի Խաչատուրովն այդ պաշտոնում հանդես է գալու ոչ թե որպես ՀՀ քաղաքացի, այլ որպես միջազգային պաշտոնյա [21]:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Հարավային Կովկասը կարևոր տեղ է զբաղեցնում ՀԱՊԿ պատասխանատվության շրջանակում, և Հայաստանը, լինելով ՀԱՊԿ ամենաակտիվ անդամներից մեկը, տարածաշրջանում հանդես է գալիս որպես նրա հիմնական գործընկերը և հենարանը: Մա խաղաքարտ է Հայաստանի ձեռքում, որը կարող է արդյունավետ օգտագործել ՀԱՊԿ անդամ որոշ պետությունների հակահայկական գործողություններին և հայտարարություններին հակակշռելու համար:

Մայիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года, Официальный сайт ОДКБ, www.odkb.gov.ru/start/index.htm

2. *Տոնոյան Դ.*, Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, N 1-2(71-72), Ե., 2012:
3. *Քոչարյան Տ.*, Ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթաց, Ե., 2013:
4. *Քոչարյան Տ.*, Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Ե., 2012:
5. Устав Организации договора о коллективной безопасности, 07.11.2002, Официальный сайт ОДКБ, www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=124
6. Թուրքիան Սիրիայի հետ սահմանին ինքնաթիռ է խոցել», 24.11.2015, CIVILNET, www.civilnet.am/news/2015/11/24/fighter-jet-crashes-syria-turkish-border/282088
7. *Lambdin A.*, Greek-Turkish Relations: Why Greece supports Turkey's? European Union candidacy bid, University of Arizona, www.eucenter.scrippscollege.edu/wp-content/uploads/files/2016/03/Claremont-Conference-Alexandros-Lambdin.pdf
8. *Macfarquha N.*, *Erlanger S.*, RNATO-Russia Tensions Rise After Turkey Downs Jet, 24.11.2017, www.nytimes.com/2015/11/25/world/europe/turkey-syria-russia-military-plane.html?_r=0
9. *Գրիգորյան Ա.*, Միջազգային ռազմական համագործակցությունը որպես ՀՀ ռազմական անվտանգության բաղադրիչ, ԵՊՀ հրատ., Ե., 2015:
10. *Օհանյան Ա.*, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Ե., 2012:
11. *Մինասյան Է.*, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2014:
12. ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական էջ, www.mfa.am/hy/international-organisations/CSTO/
13. “Helsinki Final Act” Organization for Security and Cooperation in Europe OSCE, www.osce.org/helsinki-final-act
14. *Գևորգյան Ա.*, ՀԱՊԿ առավելություններ և թերություններ, Diplomat-Արատտա ուսանողական շարժում, www.astgh-gevorgyan.blogspot.am
15. Official page of The Cooperation of Turkic speaking states, www.turkkon.org/en-US/general_information/299/308
16. *Korotayev A.*, Kazakh president Nazarbayev treated for cold before Armenian visit, REUTERS, 17.06.2016, www.uk.reuters.com/article/uk-kazakhstan-president-idUKKCN12B0JG?il=0
17. *Chausovsky E.*, Why Russian`s Military Alliance is Not the Nest NATO, 10.01.2017, Stratfor Worldview, www.stratfor.com/analysis/why-russias-military-alliance-not-next-nato
18. *Երեմյան Ա.*, Լավրովի պատասխանը շոկ է առաջացրել Բաքվում, ParsToday, 18.01.2017, www.pars.today.com/hy/news/armenia-i51460
19. *Никольский А.*, Саммит ЕАЭС в Бишкеке: о чем говорили семь президентов, Риа Новости, 15.04.2017, www.ria.ru/analytics/20170415/1492319201.html
20. *Kucher J.*, St.Petersburd Summit Accelerates Unravelling of CSTO, EURASIA-NET.org, www.eurasianet.org/node/81786
21. *Մարգարյան Վ.*, Յուրի Խաչատուրովը այդ պաշտոնում հանդես է գալու ոչ թե որպես ՀՀ քաղաքացի, այլ որպես միջազգային պաշտոնյա, Aravot.am, www.aravot.am/2017/04/21/880112/

22. *Акопян В.*, Назначение Хачатурова на пост генсека ОДКБ ненужно переоценивать, ArmenianSputnik.am, www.ru.armeniasputnik.am/exclusive/20170415/7025010/akopyan-naznachenie-khachaturova-na-post-genseka-odkb-ne-nuzhno-pereotsenivat.html
23. Соглашение о правовом статусе Организации договора о коллективной безопасности, 07.11.2002, МОЦИП, Официальный сайт ОДКБ Армения, www.odkb-armenia.am/doc02.php
24. *Юргенов И.*, ОДКБ: Отвественная безопасность, М., 2011.
25. *Poghosyan B.*, The appointment of General Khachaturov as head of the CSTO has both positive and negative implications for Armenia, Commonspace.eu, www.commonspace.eu/index.php?m=23&news_id=4215
26. *Kucher J.*, At Summit, CSTO Wrestles with internal Disputes, Irrelevance, EURASIANET.org, www.eurasianet.org/node/80906

ՀԱՊԿ-Ը ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Անժեյա Մնացականյան

Ամփոփագիր

Հայաստանի Հանրապետությունը, ակտիվորեն մասնակցելով ԱՊՀ շրջանակներում տեղի ունեցող գործընթացներին, առաջնությունը տալիս է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը՝ այն դիտարկելով որպես Հայաստանի անվտանգության ապահովման կարևորագույն գործոններից մեկը: ՀԱՊԿ գործունեության կովկասյան ուղղությունն իրականացվում է հայ-ռուսական ռազմական համագործակցության միջոցով, ուստի նրա նշանակությունը Հայաստանի համար հետզհետե աճում է: Մասնավորապես, ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի զարգացումը նպատակաուղղված է ՀԱՊԿ անդամ պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության մեխանիզմների ստեղծմանը, միջազգային կազմակերպված հանցագործությունների, ներառյալ՝ միջազգային ահաբեկչության, զենքի և թմրանյութերի անօրինական շրջանառության, այլ վերազգային սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետ միջոցների մշակմանը, այդ ասպարեզում տեղեկությունների փոխանակմանը: Այս ամենը նպաստում է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Հայաստանը ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության հետագա սերտացման հեռանկարը տեսնում է իր փոխլրացման արտաքին քաղաքական ռազմավարության համատեքստում:

ОДКБ В КОНТЕКСТЕ ВНЕШНЕЙ ВОЕННОЙ ПОЛИТИКИ РА

Анжела Мнацаканян

Резюме

Республика Армения, активно участвуя в процессах в рамках СНГ, включая военную сферу, вместе с тем отдает первенство Организации Договора о коллективной безопасности, рассматривая ее в качестве одного из важнейших факторов обеспечения своей безопасности. Кавказское направление деятельности ОДКБ осуществляется посредством армяно-российского сотрудничества между государствами-членами ОДКБ, выработки эффективных средств борьбы против транснациональной организованной преступности, в том числе международного терроризма, незаконного оборота оружия и наркотиков и иных транснациональных угроз, а также обмена информацией в этих областях. Все это способствует решению задач, жизненно важных для обеспечения военной безопасности Республики Армения. Перспективы дальнейшего углубления сотрудничества в рамках ОДКБ Армения видит в контексте своей внешнеполитической стратегии комплементарности.

CSTO IN THE CONTEXT OF ARMENIA'S EXTERNAL MILITARY POLICY

Anzhela Mnatsakanyan

Resume

Although the Republic of Armenia actively participates in the processes taking place within the CIS, nevertheless prefers the Collective Security Treaty Organization (CSTO), considering it a crucial factor to safeguard the security of Armenia. The CSTO's Caucasus program is carried out through Armenian-Russian military cooperation. Therefore, its importance for Armenia increasingly grows. Specifically, the development of the CSTO military component is focused on: establishing an effective mechanism for military-technical cooperation, developing efficient means of combating international terrorism, curtailing the illegal trafficking of arms and drugs, thwarting international organized crime, combating other trans-national threats, and sharing information in these areas, with all of this implemented together with CSTO member states. This contributes to the solution of problems that are crucial for the military security of Armenia. The prospect for further enhancement of cooperation within the CSTO is seen by Armenia in the context of its complementary strategy in foreign policy.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ

*Աշոտ Մարկոսյան, Էյսանորա Մաթևոսյան**

Բանալի բառեր՝ ազգային հարստություն, արտադրված կապիտալ, բնական կապիտալ, մարդկային կապիտալ, գուտ արտաքին ակտիվներ, տնտեսական աճ:

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և վերարտադրության վիճակն ու գործընթացը բնութագրվում են մի շարք ամփոփ մակրոտնտեսական ցուցանիշների օգնությամբ: Դրանց շարքում կարևորվում են համախառն ներքին արդյունքի (դրա հաշվարկման տարբեր մոդիֆիկացիաներով, օրինակ՝ դրա մեծության չափը, աճի տեմպը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և այլն), ազգային եկամտի, համախառն ազգային եկամտի և մյուս մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկը՝ տարբեր մոդիֆիկացիաներով:

Սակայն նշված ցուցանիշների հաշվարկման հիմնական թերությունն այն է, որ դրանք, պատկերավոր ասած, բնութագրում են երկրի զարգացման տվյալ պահը՝ առանց ներկայացնելու սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններն ու ներուժը: Այս հիմնական բացը չեզոքացնում է ազգային հարստության ցուցանիշը: Ցավոք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (կոմիտեն) մինչ օրս չի հաշվարկում այդ ցուցանիշի մեծությունը:

Ներկայում ընդունված են ազգային հարստության սահմանման և հաշվարկման Համաշխարհային բանկի միասնական մեթոդական ցուցումները: Ազգային հարստությունը¹ հանդիսանում է Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) անբաժանելի մասը: ԱՀՀ-ն հիմք է հանդիսանում կառավարության, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների և այլ հետաքրքրված անձանց կողմից տնտեսական աճի հաշվարկման համար:

* ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր:

“ ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

¹ The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future. World Bank Group <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466.pdf>

Ազգային եկամուտն ու բարեկեցությունը հիմնվում են երկրի ակտիվների կամ հարստության վրա, որոնց հաշվարկման հիմքում ընկած են տարբեր չափանիշներ: Ազգային հարստությունը ներառում է հետևյալ չորս բաղկացուցիչները. արտադրված կապիտալ, բնական կապիտալ (պաշարներ), մարդկային կապիտալ և գուտ արտաքին ակտիվներ:

Կայուն երկարաժամկետ տնտեսական աճը պահանջում է ներդրումների և պորտֆելային ակտիվների առավել ինտենսիվ ընդգրկում: Թեև ՀՆԱ-ն տնտեսական աճի հաշվարկման կարևոր չափանիշ է, սակայն այն հաշվում է միայն եկամուտը և արտադրությունը և չի արտացոլում ակտիվների հիմնական բազայում տեղի ունեցող փոփոխությունները: Առանձին դիտարկվող ՀՆԱ-ն կարող է ճշգրտորեն չբնութագրել տնտեսական իրավիճակը: Այն չի արտացոլում բնական կապիտալի սպառումը և ակտիվների մաշվածությունը, չի տալիս հետևյալ հարցերի պատասխանը. ներդրումներն ու հարստության կուտակումը աճում են բնակչության թվի աճի արդյունքում, կամ էլ՝ ակտիվների համամասնությունը համապատասխանում է արդյոք երկրի զարգացման նպատակներին:

Նկատենք նաև, որ ներառական տնտեսական աճի համար առանձնացվում են երեք հիմնասյուներ.

- բարձր, կայուն աճ՝ տնտեսական հնարավորությունների ստեղծման և ընդլայնման համար,
- այդպիսի հնարավորությունների ընդլայնումը՝ երաշխավորելու համար, որ հանրության անդամները կարող են մասնակցել և օգտվել տնտեսական աճի արդյունքներից,
- սոցիալական ապահովության ցանցերի ձևավորումը, որոնց նպատակն է ծայրահեղ աղքատության կանխարգելումը¹:

Ուստի, ներկայում արդիական է ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացումը՝ ելնելով վերը նշված չափանիշներից և տնտեսությունում մոնոպոլիզացիայի զարգացման բացառումից:

Ինչպես նշեցինք, ազգային հարստության հաշվարկը հիմնվում է ակտիվների առանձին դասեր կազմող հետևյալ չորս բաղադրիչների վրա.

- արտադրված կապիտալ և քաղաքային հողատարածքներ՝ մեքենաներ, շենքեր, սարքավորումներ, բնակելի և ոչ բնակելի քաղաքային հողատարածքներ՝ շուկայական գներով արտահայտված,

¹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ, OECD) սահմանումը, աղբյուրը՝ <http://www.oecd.org/inclusive-growth/#introduction>

- բնական կապիտալ (պաշարներ)՝ էներգետիկ ռեսուրսներ (նավթ, գազ, քարածուխ) և օգտակար հանածոներ (10 կատեգորիա), գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ (արոտավայրեր և ցանովի հողատարածքներ), անտառներ (փայտանյութեր և որոշ յուրահատուկ անտառային բարիքներ) և հսկվող (պաշտպանվող) տարածքներ: Բնական կապիտալի (պաշարների) արժեքը հաշվարկվում է վարձակալական վճարի դիսկոնտավորված գումարով, որը ձևավորվում է տվյալ ակտիվի գործածության ողջ ժամկետի ընթացքում,
- մարդկային կապիտալ՝ ըստ սեռի և զբաղվածության կարգավիճակի (զբաղված, ինքնազբաղված) դասակարգված բնակչության՝ աշխատանքի ընթացքում գործադրած ջանքերի, ունակությունների և փորձի արժեքի: Մարդկային կապիտալի արժեքը հաշվարկվում է որպես ողջ կյանքի ընթացքում վաստակած աշխատավարձի դիսկոնտավորված գումար,
- զուտ արտաքին ակտիվներ՝ երկրի արտաքին ակտիվների և պարտավորությունների գումարի (օրինակ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ) տարբերությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացված է նախկին Խորհրդային Միության 14 հանրապետությունների ազգային հարստության և դրա բաղադրիչների մասին տեղեկատվությունը:

Աղյուսակ 1

Բնակչության մեկ շնչի հաշվով ԱՄՆ դոլարով գնահատված ազգային հարստության և դրա բաղադրիչների մեծությունները և կառուցվածքները նախկին Խորհրդային Միության երկրներում (2014թ. տվյալներով)

Երկիրը	Ընդամենը ազգային հարստություն	Արտադրված կապիտալ	Բնական կապիտալ	Մարդկային կապիտալ	Զուտ արտաքին ակտիվներ	Բնակչության թվաքանակը
Հայաստան	52894	15451	12702	27329	-2588	3006154
	100.0	29.2	24.0	51.7	-4.9	
Ադրբեջան	85341	20061	45935	11961	7384	9535079
	100.0	23.5	53.8	14.0	8.7	
Վրաստան	44327	20415	7344	21251	-4682	3727000
	100.0	46.1	16.6	47.9	-10.6	

Երկիրը	Բնօրինակի ազգային հարստություն	Արտադրված կապիտալ	Բնական կապիտալ	Մարդկային կապիտալ	Ջուր արտադրված ակտիվներ	Բնակչության թվաքանակը
Էստոնիա	258903	91646	20093	155041	-7876	1314545
	100.0	35.4	7.8	59.9	-3.0	
Լատվիա	236906	113746	18738	113472	-9049	1993782
	100.0	48.0	7.9	47.9	-3.8	
Լիտվա	169046	63254	12758	100081	-7047	2932367
	100.0	37.4	7.5	59.2	-4.2	
Բելառուս	99685	33388	21882	49004	-4588	9474511
	100.0	33.5	22.0	49.2	-4.6	
Ուկրաինա	56053	25171	13345	18952	-1414	45271947
	100.0	44.9	23.8	33.8	-2.5	
Մոլդովա	35380	14213	4898	17852	-1582	2909871
	100.0	40.2	13.8	50.5	-4.5	
Ռուսաստանի Դաշնություն	188715	48807	46921	90812	2175	143819666
	100.0	25.9	24.9	48.1	1.2	
Ղազախստան	180911	40150	66606	76617	-2461	17289224
	100.0	22.2	36.8	42.4	-1.4	
Ղրղզստան	24429	6159	12570	6729	-1029	5835500
	100.0	25.2	51.5	27.5	-4.2	
Տաջիկստան	42286	30397	7431	5015	-557	8295840
	100.0	71.9	17.6	11.9	-1.3	
Թուրքմենստան	146831	39740	59062	47510	519	5307188
	100.0	27.1	40.2	32.4	0.4	
Ընդամենը՝ 15 երկրները	1621707	562598	350285	741626	-32795	260712674
	100.0	34.7	21.6	45.7	-2.0	

Համարիչում՝ ԱՄՆ դոլար, հայտարարում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ:
 Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հաշվարկվել է *The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future*, էջ 226-233 տվյալների հիման վրա:

Աղյուսակ 1-ի տվյալների ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը ազգային հարստության ամենաբարձր արժեքներն ունեն Էստոնիան (258903), Լատվիան

- (236906) և Ռուսաստանի Դաշնությունը (188715), իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը (42286), Մոլդովան (35380) և Ղրղզստանը (24429): Այսինքն՝ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի (Էստոնիայի) և ամենացածր ցուցանիշ ունեցող երկրի (Ղրղզստանի) միջև տարբերությունը կազմում է 10,6 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը կազմում է մոտ 5 անգամ,
- արտադրված կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն Լատվիան (113746), Էստոնիան (91646) և Լիտվան (63254), իսկ ամենացածրը՝ Հայաստանը (15451), Մոլդովան (14213) և Ղրղզստանը (6159): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների տարբերությունը կազմում է 18,5 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը 7,4 անգամ է,
 - բնական կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն Ղազախստանը (66606), Թուրքմենստանը (59062) և Ռուսաստանը (46921), իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը (7431), Վրաստանը (7344) և Մոլդովան (4898): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների տարբերությունը կազմում է 13,6 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը շուրջ 5 անգամ է,
 - մարդկային կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն մերձբալթյան երեք երկրները՝ Էստոնիան (155041), Լատվիան (113472) և Լիտվան (100081), իսկ ամենացածրը՝ Ադրբեջանը (11961), Ղրղզստանը (6729) և Տաջիկստանը (5015): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների՝ Էստոնիայի և Տաջիկստանի տարբերությունը 31 անգամ է, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը 5,6 անգամ,
 - բնակչության մեկ շնչի հաշվով զուտ արտաքին ակտիվների ցուցանիշը դրական մեծություն ունի վառելիքաէներգետիկ ռեսուրսներ արտահանող երկրներում՝ Ադրբեջանում՝ (7384), Ռուսաստանի Դաշնությունում (2175) և Թուրքմենստանում (519): Մնացած բոլոր երկրների համար զուտ արտաքին ակտիվներն ունեն բացասական մեծություն, ըստ որում՝ ամենամեծ բացասական մեծություն ունեցող երեք երկրներն են Լիտվան (-7047), Էստոնիան (-7876) և Լատվիան (-9049),

իսկ ամենափոքր բացասական մեծություններն ունեն Տաջիկստանը (-557), Ղրղզստանը (-1029) և Ուկրաինան (-1414):

Բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը ազգային հարստության ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը նախկին Խորհրդային Միության 14 հանրապետությունների կազմում զբաղեցնում է 10-րդ տեղը, արտադրված կապիտալի ցուցանիշով՝ 12-րդ տեղը, բնական կապի ցուցանիշով՝ 10-րդ տեղը, իսկ մարդկային կապիտալի ցուցանիշով՝ 8-րդ տեղը: Բնակչության թվաքանակի ցուցանիշով Հայաստանը 10-րդ տեղում է:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության զգալի մասը (51,7%-ը) կազմում է մարդկային կապիտալը և ազգային հարստության բաղադրիչների կազմում Հայաստանն ունի համեմատական առավելություն, այն դառնում է ազգային հարստության ավելացման հիմնական գործոնը: Այդ պատճառով էլ հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի այդ կապիտալի զարգացմանը և օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Վերը բերված մոտեցումը բխում է նաև այն հանգամանքից, որ, օրինակ, թեև մերձբալթյան հանրապետություններն ունեն զուտ արտաքին ակտիվների ամենամեծ բացասական արժեքները, սակայն դրանով հանդերձ նրանք ունեն նախկին խորհրդային հանրապետությունների շարքում բնակչության մեկ շնչի հաշվով ամենամեծ ազգային հարստության արժեքները: Դա պայմանավորված է նշված հանրապետություններում մարդկային կապիտալի օգտագործման բարձր արդյունավետությամբ և արժևորմամբ:

Ազգային հարստության հաշվարկման մեթոդաբանության կարևոր հիմնախնդիրներից է այդ մեծության և երկրի ՀՆԱ-ի միջև եղած կապի բացահայտումը: Ակնհայտ է, որ երկրի ազգային հարստության մեծության ավելացումն ապահովվում է ՀՆԱ աճի հաշվին, իսկ ավելի ստույգ՝ ՀՆԱ այն մասի հաշվին, որն օգտագործվում է կուտակման նպատակով և ի վերջո դառնում է վերը նշված կապիտալի բաղկացուցիչներից որևէ մեկը կամ տարրալուծվում է այդ բաղկացուցիցների միջև՝ որոշակի համամասնությամբ:

Աղյուսակ 2-ում ներկայացված է ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) երկրների և Հայաստանի Հանրապետության բնակչության մեկ շնչի համար հաշվարկված ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև եղած կապը, որն ըստ էության բնութագրում է, թե ինչ ժամանակահատվածում է ՀՆԱ-ն «կապիտալացվում» և վերածվում

ՏՀԶԿ երկրների Ազգային հարստություններ ԱՆՄ միջին մեծության հաշվարկ, 2014թ.

Աղյուսակ 2

Երկրներ	ՆԱՄՆ (մլն ԱՄՆ դոլար)	ՄԿԿՆ (մլն ԱՄՆ դոլար)	ՆԱՄՆ (մլն ԱՄՆ դոլար) նութատու գումար	ՄԿԿՆ (մլն ԱՄՆ դոլար) նութատու գումար	(մլն ԱՄՆ դոլար) նութատու գումար	(մլն ԱՄՆ դոլար) նութատու գումար	(մլն ԱՄՆ դոլար) նութատու գումար	(մլն ԱՄՆ դոլար) նութատու գումար
ԱՄՆ	17393103,0	54596,7	313575269,3	983280	18,0	18,0	18,0	
Ավստրալիա	1461562,7	61219,2	24558302,6	1046785	16,8	17,1	17,1	
Ավստրիա	441885,4	51306,7	5933114,7	694616	13,4	13,5	13,5	
Բելգիա	531075,9	47721,6	7255015,4	645969	13,7	13,5	13,5	
Գերմանիա	3890606,9	47590	59041425,4	729064	15,2	15,3	15,3	
Դանիա	352993,6	60563,6	4821395,6	854331	13,7	14,1	14,1	
Էստոնիա	26224,6	19670,7	340339,6	258903	13,0	13,2	13,2	
Թուրքիա	934167,8	10482,1	3565939,2	45998	3,8	4,4	4,4	
Իռլանդիա	545172,4	53462	2896182,1	627256	5,3	11,7	11,7	
Իսլանդիա	17291,1	51261,9	270374,0	825857	15,6	16,1	16,1	
Իսպանիա	1376910,8	30278,3	15918307,7	342470	11,6	11,3	11,3	
Իտալիա	2151732,9	35823,2	25985290,5	427466	12,1	11,9	11,9	
Իսրայել	308414,8	36991	-	-	-	-	-	
Լեհաստան	545172,4	14378,6	5889234,1	154932	10,8	10,8	10,8	

Երկրներ	ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	Ազգային հարստություն (մլն ԱՄՆ դոլար)	Մեկ շնչի հաշվով ազգային հարստություն (ԱՄՆ դոլար)	Ազգային հարստություն/ ՀՆԱ (տարի)	Մեկ շնչի հաշվով ազգային հարստություն/ ՀՆԱ (տարի)
Լյուքսեմբուրգ	66327,3	111716,3	716876,6	1288607	10,8	11,5
Կանադա	1799268,7	50397,9	36134355,0	1016593	20,1	20,2
Կորեայի Հանրապետություն	1411333,9	28100,7	21382379,0	424052	15,2	15,1
Հունաստան	237029,6	21653,1	2482653,2	227925	10,5	10,5
Հունգարիա	140118,1	13881,1	1633087,9	165519	11,7	11,9
Ճապոնիա	4850413,5	36331,7	72710109,0	571927	15,0	15,7
Մեքսիկա	1314390,3	10714,8	13851498,4	110471	10,5	10,3
Միացյալ Թագավորություն	3022827,8	45653,4	41849556,1	647694	13,8	14,2
Նիդեռլանդներ	879635,1	51373	13363764,9	792396	15,2	15,4
Նոր Զելանդիա	200696,3	43837,3	-	-	-	-
Նորվեգիա	499338,5	97013,3	8588198,4	1671756	17,2	17,2
Շվեդիա	573817,7	58491,5	8592004,3	886129	15,0	15,1
Շվեյցարիա	709182,6	87475,5	12010758,2	1466757	16,9	16,8
Չեխիայի Հանրապետություն	207818,3	19,563.3	-	-	-	-
Չիլի	260990,3	14477,1	4222412,1	237713	16,2	16,4
Պորտուգալիա	229629,8	22,130.5	2854602,6	274453	12,4	12,4
Սլովակիա	100948,2	18,454.0	1155315,6	213211	11,4	11,6
Սլովենիա	49904,9	24019,3	725355,1	351776	14,5	14,6
Ֆինլանդիա	272609,3	49496,7	3967362,5	726422	14,6	14,7
Ֆրանսիա	2849305,3	44538,1	42525263,2	641707	14,9	14,4
Հայաստանի Հանրապետություն	11609,5	3852	159007,5	52894	13,7	13,7

ազգային հարստության: Պարզ է նաև, որ որքան կարճ է այդ ժամանակահատվածը, այնքան ավելի արդյունավետ է գործում երկրի տնտեսությունը և բարձր են նրա վերարտադրական հնարավորությունները, սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը: Տնտեսագիտական իմաստով այդ ցուցանիշը լավագույնս է բնութագրում երկրի կառավարման որակը, որն էլ դառնում է կայուն երաշխիք տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի հետագա բարձրացման համար:

Այսպես, *Աղյուսակ 2*-ի տվյալներից հետևում է, որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև հարաբերակցությունն ամենափոքրն է Թուրքիայում և կազմում է 4,4 տարի, Էստոնիայում այդ ցուցանիշը կազմում է 13,2, իսկ Հայաստանում՝ 13,7 տարի: Ինչ վերաբերում է ՏՀԶԿ մյուս երկրներում ազգային հարստություն/ՀՆԱ հարաբերակցության բարձր մեծություններին, ապա, օրինակ, ԱՄՆ-ում այն կազմում է 18,0 տարի, Կանադայում՝ 20,2, իսկ Շվեյցարիայում՝ 16,8 տարի: Այդ հանգամանքը բացատրվում է նշված երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ բարձր ցուցանիշներով, որի ավելացումը պահանջում է ավելի շատ ռեսուրսներ ու ջանքեր, քան այդպիսի ցածր ցուցանիշ ունեցող երկրներում:

Նկատենք, որ, օրինակ, Մինգապուրում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության մեծությունը 2014թ. տվյալներով կազմել է \$775196, որից՝ արտադրված կապիտալը կազմել է 186017, բնական կապիտալը՝ 56, մարդկային կապիտալը՝ 466119 (կամ ընդամենը ազգային հարստության 60,1%-ը), իսկ զուտ արտաքին ակտիվները՝ \$123004¹: Այսինքն՝ Մինգապուրում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության մեծությունը, որը ՀՀ համապատասխան ցուցանիշը գերազանցում է 14,6 անգամ, հիմնականում ձեռք է բերվել մարդկային կապիտալի հաշվին, ինչը օրինակ կարող է ծառայել ՀՀ-ում ազգային հարստության ավելացման քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ներկայում ազգային հարստության ցուցանիշը դարձել է երկրների տնտեսությունների արդյունավետության գնահատման կարևորագույն բնութագրիչներից մեկը, և երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի այդ հարստության ու նրա բաղկացուցիչների ավելացմանը: Ըստ որում, ելնելով դրանցից յուրաքանչյուրի կարևորությունից՝ հատկապես հեռանկարային հորիզոնում պետք է առաջնորդվել համեմատական առավելությունների իրացման հնարավորություններով: Երևույթն այս տեսանկյունից

¹ St' u The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future, p. 231.

դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ ՀՀ տնտեսությունը կարիք ունի լուրջ կառուցվածքային փոփոխությունների՝ դիվերսիֆիկացման, գլխավորապես տնտեսական գործունեության այնպիսի ոլորտների զարգացմամբ, որոնք ապահովում են առավելագույն ավելացված արժեք՝ մարդկային կապիտալի հնարավորությունների ընդլայնմամբ և ներուժի ընդգրկմամբ:

Մեպտեմբեր, 2018թ.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Աշոտ Մարկոսյան, Էյանորա Մաթևոսյան

Ամփոփագիր

Յուրաքանչյուր երկրի բնակչության բարեկեցության աճը և ազգային տնտեսության զարգացումը պայմանավորված են մի շարք հանգամանքներով և նախադրյալներով, որոնք հատկապես երկարաժամկետ հեռանկարում կանխորոշում են սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները: Որպեսզի ապահովվի հասարակության բազմակողմանի զարգացումն ու պետության հզորացումը, անհրաժեշտ է ոչ միայն սպառման բավարար մակարդակի ձեռքբերում, այլև կուտակման բավարար նորմի ապահովում, ինչն էլ ընկած է հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության հիմքում: Եթե չի ապահովվում վերարտադրության այս բնականոն ընթացքը, ապա հասարակությունը զրկվում է հետագա զարգացման երաշխիքներից, ինչն էլ կարող է դառնալ երկրի անվտանգության խարխլման և պետության դեգրադացման պատճառ: Կամ, այլ կերպ ասած, անհրաժեշտ է ունենալ հեռանկարային զարգացման տեսանկյունից որոշակի ֆինանսական, նյութատեխնիկական, աշխատանքային ռեսուրսներ և բնական պաշարներ, որոնք կարող են ապահովել տնտեսական հետագա առաջընթացը: Այդպիսով, երկրի ազգային հարստության ձևավորումը և դրա բազմապատկումը ստանում են ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կարևորություն:

ЭКОНОМИЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ СОЗДАНИЯ НАЦИОНАЛЬНОГО БОГАТСТВА

Ашот Маркосян, Элянора Матевосян

Резюме

Рост благосостояния населения и развитие национальной экономики обусловлены рядом обстоятельств и предпосылок, которые в конечном итоге определяют основные направления социально-экономического развития. Для всестороннего развития общества и укрепления государства необходимо не только обеспечить достаточный уровень потребления, но и достичь достаточной нормы накопления, что станет основой для дальнейшего развития и расширенного воспроизводства. Если этот процесс воспроизводства не обеспечивается, то общество лишается гарантий дальнейшего развития, что может привести к ослаблению безопасности страны и деградации государства. Или, другими словами, необходимо иметь определенные финансовые, материально-технические, трудовые и природные ресурсы для обеспечения дальнейшего развития, ведущего к экономическому росту. Таким образом, формирование и увеличение национального богатства страны имеет не только экономическое, но и политическое значение.

THE ECONOMIC POTENTIAL OF NATIONAL WEALTH CREATION

Ashot Markosyan, Elyanora Matevosyan

Resume

The growth of the well-being of the population and the development of the national economy depend on a number of circumstances and prerequisites, which ultimately predetermine the main directions of the socio-economic development. To ensure the diversified development of the society and strengthen the state, it is necessary not only to ensure a sufficient level of consumption, but also to achieve a sufficient rate of accumulation, which will become the basis for further development and expanded reproduction. If this natural reproduction process is not ensured, the society is deprived of guarantees of further development, which may lead to a weakening of the country's security and the degradation of the state. In other words, it is necessary to have certain financial, logistical, human and natural resources to ensure further development leading to economic growth. Thus, the formation and multiplication of the country's national wealth imply not only economic, but also political significance.

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈւՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Համլետ Չաքարյան**

Բանալի բառեր՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ՕՈւՆ-ի հոսք, ներդրումային քաղաքականություն, պոստենցիալ ներդրումներ, ներդրումային միջավայր, կապիտալ շինարարություն:

Ներդրումները տնտեսական կյանքի կարևորագույն տարր են, որոնց նպատակը հիմնական կապիտալի վերարտադրությունն ու նորացումն է:

Դրանք իրականացվում են ինչպես դրամական միջոցների, վարկերի, արժեթղթերի, այնպես էլ շարժական ու անշարժ գույքի, մտավոր սեփականության, գույքային իրավունքների մեջ ներդրումների միջոցով: Օտարերկրյա ուղղակի ներդրումներն (ՕՈւՆ) իրենց հետ բերում են բարձրտեխնոլոգիական սարքավորումներ, արդյունավետ կառավարում, նպաստում են նոր աշխատատեղերի ստեղծմանը և ավելացնում հարկային եկամուտները:

Ընդհանրապես, օտարերկրյա ուղղակի ներդրումներ են համարվում արտասահմանյան երկրների ընկերությունների կանոնադրական կապիտալում կատարված 10%-ից ավելի չափով ներդրումները:

Գործնականում տարբերվում են ՕՈւՆ-ի հոսք և ՕՈւՆ-ի պաշար հասկացությունները: ՕՈւՆ-ի հոսքը սովորաբար մեկ տարում ներդրված գումարներն են, իսկ պաշարը արտասահմանյան ակտիվների ընդհանուր արժեքն է տվյալ պահին:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը պայմանավորված է նաև զարգացող երկրներում ներկայում ընթացող քաղաքական և տնտեսական փոփոխություններով: Դրան խթանում են նաև ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների ձևավորումը և շուկայական հարաբերությունների հետագա զարգացումը: Էլ չենք խոսում ՕՈւՆ-ի վրա գլոբալացման դրական ազդեցության մասին:

* Հումանիտար գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի ակադեմիկոս, լրագրողների միջազգային միության անդամ, պրոֆեսոր:

Ինչ վերաբերում է ներդրումների ուղղակի դրդապատճառներին, ապա, ըստ իս, այդ իմաստով կարևորվում են արտասահմանում վաճառքի միջոցով շուկաների ընդլայնումը, արտասահմանյան ռեսուրսների (գիտելիք, հումք և այլն) ձեռքբերումը, քաղաքական կոնկրետ նպատակների իրականացումը և այլն: Ընդ որում, ներդրումային նմանօրինակ գործունեությունն իրականացվում է ի հաշիվ այնպիսի աղբյուրների, ինչպիսիք են.

- ներդրողի սեփական միջոցները (ամորտիզացիոն մասհանումներ, շահույթ, դրամական կուտակումներ և այլն),
- փոխառու միջոցները (բանկերի վարկեր, այլ կազմակերպությունների փոխառու միջոցներ),
- ներգրավված միջոցները (բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վաճառքից),
- միջոցներ բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից:
- Հայաստանում այժմ գործող ներդրողներին կարելի է բաժանել երեք խմբի.
- սփյուռքահայեր,
- երկրի գործարար և հանրահայտ շրջանների հետ կապված անձինք,
- վերազգային ընկերությունների մասնաճյուղեր (օրինակ, *HSBC* բանկը),
- ներդրողներ, որոնք Հայաստան են եկել առանց կապերի և ծանոթությունների:

Բայց և այնպես, օտարերկրյա ուղղակի ներդրումների հարաբերական ծավալները Հայաստանում մեծ չեն: Օրինակ, 2012թ. սկզբներին ՕՈՆՆ-ը կազմել է \$7.9 մլրդ (տարեկան ՀՆԱ տոկոսը)¹:

Համախառն ներդրումների ծավալների վրա մեծ ազդեցություն են թողնում միջազգային կազմակերպությունների կողմից տրված վարկերը, որոնք ավելացրել են պետական պարտքը: Ճյուղային կտրվածքով ամենախոշոր ներդրումները կատարվել են հետևյալ ճյուղերում (մլն դրամ, 2016թ.).

¹ ԱՎԾ տարեգիրք, 2012, 2013թթ.:

• Գիտական հետազոտություններ և մշակումներ	10.3
• Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական, էլեկտրոնային սարքավորումների արտադրություն	891.2
• Օգտակար հանածոների արդյունահանում	219.4
• Մետաղների արտադրություն	1781.75
• Խմիչքների արտադրություն	7574.8
• Բուսաբուծություն և անասնաբուծություն	3510.5
• Մետաղների արդյունահանում	17845.5
• Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4055.7
• Ցամաքային տրանսպորտի գործունեություն և օդային տրանսպորտի գործունեություն	135.5
• Ֆինանսական միջոցառություն (բացի ապահովագրությունից)	119.7
• Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	9063.0

Նկատելի է, որ գերակա ճյուղ համարվող ոլորտներում կամ ներդրումները քիչ են, կամ էլ ընդհանրապես չկան: Նկատի ունենք առաջին հերթին բարձր տեխնոլոգիաների ոլորտը և գյուղատնտեսությունը: Օրինակ, ասիական որոշ երկրներում (Չինաստան, Կորեա և այլն) իշխանությունները վարչատնտեսական լծակների օգտագործման միջոցով ներդրումներ են անում տնտեսության գերակա ճյուղերում: Համակարծիք ենք, որ ներկայում Հայաստանին անհրաժեշտ է առաջին հերթին ուղղակի ներդրումներ ներգրավել տնտեսության գերակա հայտարարված ճյուղերի զարգացման համար, որոնք, բնականաբար, ուղեկցվում են տեխնոլոգիական նորամուծություններով: Միայն թե այդ ներդրումների շատ մեծ հոսքը որոշակի վտանգ էլ ունի այն իմաստով, որ այն կարող է մեր տնտեսությունը դատապարտել էքստենսիվ տնտեսական աճի, ինչպես նաև հանգեցնել ռեսուրսների արտահոսքի: Չնայած դրան, Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներկրումները պիտի խթանել արդյունաբերության բարձրտեխնոլոգիական ճյուղերում:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ֆինանսական ներդրումներին, ապա դա պետական պարտքի բեռի ավելացման պարագայում էլ պիտի իրականացնել ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և դա համարել միայն որպես երկրի արտադրական ներուժի ամրապնդման օժանդակ գործոն: Իսկ պետությունն այժմ էլ առաջատար դեր պետք է հատկացնի մասնավոր ձեռնարկություններին:

Դեռևս 1994թ. ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը և այլ օրենսդրական ակտեր, քանի որ Հայաստանը դարձել է միջազգային, այդ բնագավառը կանոնակարգող ազդեցիկ մարմինների անդամ, օտարերկրյա ներդրողներին որոշակի վստահություն են ներշնչել մեր երկրի նկատմամբ: Մեզ մոտ ընթացող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների ձևավորումը, և որ կարևոր է՝ շուկայական հարաբերությունների հետագա ծավալումը էապես խթանում են օտարերկրյա ուղղակի ներդրումները: Այդ ներդրումները դասական առումով դիտվում են որպես կապիտալի միջազգային շարժ, սակայն ներդրողը կարող է տրամադրել նաև այլ տիպի ակտիվների տեսքով, ինչպես, օրինակ, Հայաստանի ատոմակայանի ֆինանսական կառավարման հանձնումը Ռոսատոմին: Տեղի է ունենում նաև բաժնետիրական կապիտալի փոխանակում: Օրինակ, Ռոսատոմը ձեռք է բերել Մեծամորի ատոմակայանի որոշակի բաժնեմաս, փոխարենը՝ իր բաժնետոմսերի մի մասը տրամադրել է ատոմակայանին:

Ընդհանուր առմամբ, ուղղակի ներդրումներն ունեն հետևյալ դրդապատճառները.

1. Արտասահմանում վաճառքի միջոցով շուկաների ընդլայնում
2. Արտասահմանյան ռեսուրսների ձեռքբերում (գիտելիք, հումք և այլն)
3. Քաղաքական նպատակների իրականացում:

Ի դեպ, ԱՊՀ երկրների մեջ Հայաստանի ներդրումային միջավայրին տրված գնահատականները լավագույններից են, իսկ ներդրողները մեր երկիրը համարում են գրավիչ ներդրումային տարածք: Ազատ շուկայական հարաբերությունների տեսանկյունից օտարերկրյա ուղղակի ներդրումները ձեռնտու են ներդրում կատարվող երկրին և այն երկրին, որտեղից կատարվում է ներդրումը:

Ընդհանուր առմամբ, ներդրողները, ինչպես ակնարկեցինք, լավատեսական ակնկալիքներ ունեն, իսկ Հայաստանը, ի վերջո, գրավում է ներդրողներին, քանի որ պետական, հասարակական և գործարար շրջանակները բաց են դրա համար:

Ի դեպ, փորձագետների գնահատմամբ՝ հենց հայկական սփյուռքն է օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացման գլխավոր աղբյուրը, որի ներդրումների ծավալը ներդրումների ընդհանուր ծավալի մեջ կեսից ավելի է:

Բնականաբար, օտարերկրյա ուղղակի ներդրումների արդյունավետ իրագործման գլխավոր նախապայմանը քաղաքական դրդապատճառներն են: Ավելին, քաղաքական այս գաղափարախոսությունը կառավարության քաղաքականության կարևոր գործոն է, քանի որ բոլոր պետություններն էլ ժամանակ առ ժամանակ կամ աջակցում են ՕՈՆ-ի իրականացմանը, կամ էլ խոչընդոտում դրան:

Ահա թե ինչպիսին է ՕՈՆ-ի պատկերը 2012-2013թթ. (*Աղյուսակ 1*).

Աղյուսակ 1

Օտարերկրյա ուղղակի ներդրումները ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական¹ հատվածներում (2013թ. հունվար-մարտ, մլն դոլար)

№	Երկրներ	Տարեկան
1	Ֆրանսիա	230.4
2	Ռուսաստան	90.6
3	Արգենտինա	51.3
4	Գերմանիա	50.7
5	Շվեյցարիա	43.7
6	Սեյշելյան կղզիներ	23.6
7	Մեծ Բրիտանիա	13.8
8	Լիբանան	13.6
9	Լիխտենշտեյն	5.8
10	Կիպրոս	5.3
11	Նիդեռլանդներ	4.3
12	Լյուքսեմբուրգ	3.5
13	ԱՄՆ	3.9

Հետագա մի քանի տարիներին արձանագրվել են որոշակի փոփոխություններ (տե՛ս *Աղյուսակ 2*):

Նկատելի է, որ որոշ երկրներ (Կիպրոս, Լիբանան) ավելացրել են զուտ հոսքերը, իսկ խոշոր ներդրողներ Ռուսաստանն ու Ֆրանսիան ինչ-ինչ պատճառներով այն նվազեցրել են: Բայց և այնպես, ներդրումային քաղաքականությունը եղել և մնալու է ՀՀ կառավարության ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղադրիչներից մեկը և երկրի տնտեսական զարգացման կարևոր միջոցը:

Չպետք է մոռանալ, որ ըստ ներդրումային կլիմայի և բիզնեսի բացության աստիճանի մեր երկիրը ԱՊՀ տարածքում առաջատարներից է:

¹ Ներառում է միայն բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումները:

Նշենք, որ, օրինակ, այնպիսի խոշոր երկիր, ինչպիսին Չինաստանն է, վերջին տարիների տնտեսական բարձր աճի համար պարտական է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, և կառավարությունն ամեն կերպ դա խթանում է:

Աղյուսակ 2

*Օտարերկրյա ուղղակի ներդրումների գուտ հոսքերը
դեպի Հայաստան 2014-2016թթ. (մլն դր)*

№	Երկրներ	2014	2015	2016
1	Ռուսաստան	42646.5	35983.3	26290.5
2	ԱՄՆ	440.3	8231.8	2109.5
3	Գերմանիա	19814.3	630.1	571
4	Ֆրանսիա	5785.6	34968.6	3385.9
5	Կանադա	213.9	2334.6	-
6	Կիպրոս	3963.2	5301.3	34583.5
7	Արգենտինա	6706.4	12504.2	3505.5
8	Շվեյցարիա	9715.7	41052.2	92.9
9	Լիբանան	466.1	5061.0	15765
10	Իտալիա	452.2	2367.1	1879.6
11	Այլ երկրներ	10810.1	5741.4	8710.7

Մեր երկրին բնորոշ է նաև համատեղ ձեռնարկությունների ստեղծման իրեն արդարացրած պրակտիկան՝ նկատի ունենալով նաև երկրում առկա փորձառու գործարարների մոտավոր խմբաքանակի առկայությունը: Հայաստանի կառավարությունը վերջին տարիներին օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքն ավելացնելու համար ոչ քիչ միջոցներ է ծախսել, որի արդյունքում երկրում ստեղծվել են համապատասխան ենթակառուցվածքներ և որի միջոցով հնարավոր է ակնկալել նոր հոսքեր:

Սա, իհարկե, նաև մեր տնտեսության մասնավորեցման ու ազատականացման արդյունք է: Իսկ տնտեսությունում առկա *միտումների հաղթահարումը, բնականաբար, կմեծացնի այդ հոսքերը: Եվ ընդհանրապես, եթե աշխարհում արտադրության գործոնների ազատ շարժ չլիներ, ապա ամեն մի երկիր պիտի արտադրեր իրեն անհրաժեշտ ամեն բան, ինչը կլիթանի գների աճին:*

Մեր երկրի կառավարությունը խրախուսում է օտարերկրյա ուղղակի ներդրումները՝ առաջարկելով նաև այնպիսի արտոնություններ, ինչպիսիք են հարկերից ազատումը, վարկերի ցածր տոկոսադրույքը, ամորտիզացիոն

հատկացումների արագացումը և այլն: Եվ ընդհանրապես, հյուրընկալող երկիրը պետք է վարի ճիշտ ներդրումային քաղաքականություն և խոչընդոտներ չստեղծի ՕՈւՆ-ի համար: Այսօր մեր երկիրն օտարերկրյա ներդրողներին կարող է առաջարկել, ասենք, եկամտահարկի, գույքահարկի և սոցիալական ապահովության հարկերի արտոնություններ: Ազգային անվտանգության տեսանկյունից տնտեսության որոշակի ճյուղերում հնարավոր է սահմանափակել օտարերկրյա ընկերությունների բաժինը, որպեսզի կառավարությունը կարողանա վերահսկել ձեռնարկությունը:

Ի դեպ, աշխարհի բոլոր երկրներում ժամանակ առ ժամանակ նման սահմանափակումներ կիրառվում են՝ վճարային հաշվեկշռի վրա թողած բացասական ազդեցությունը մեղմելու տեսանկյունից, և շահագրգռում են տեղական ընկերություններին ներդրումներ կատարել ներքին շուկայում, որպեսզի միջոցները մնան և աշխատատեղերը ստեղծվեն հյուրընկալող երկրում:

Մեր երկրում ներկայում նախընտրելի է արդյունաբերական կամ տեղեկատվական տեխնոլոգիաների գոտիների հիմնումը, որը որոշակիորեն կխթանի գործող և պոտենցիալ ներդրողներին՝ որպես գերակա ծրագրեր: Ի դեպ, նշենք, որ 2000թ. դեկտեմբերի 28-ի ՀՀ կառավարության նիստի թիվ 58 արձանագրությամբ տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում ճանաչվել են տնտեսության գերակա ճյուղերից մեկը:

Ուշագրավ է նաև ՀՀ առևտրային բանկերում ՕՈւՆ-ի դինամիկան (տե՛ս *Աղյուսակ 3*).

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերում կատարված օտարերկրյա ներդրումների դինամիկայի միջին ցուցանիշները

Օտարերկրյա ընդամենը ներդրումների միջին աճի տեմպ (%)	125.4
Օտարերկրյա ուղղակի ներդրումների միջին աճի տեմպ (%)	128.8
Բաժնետիրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների միջին աճի տեմպ (%)	121.9

Տվյալները ցույց են տալիս, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների միջին աճի տեմպը փոքր-ինչ գերազանցում է ընդամենն օտարերկրյա ներդրումների և բաժնետիրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումների աճի տեմպերը՝ կազմելով 128.8%: Բայց և այնպես, ՀՀ առևտրային բանկերում կատարված օտարերկրյա ներդրումների և դրա բաղադրիչների աճի միջին տեմպերի տարբերությունը զգալի չէ: ՀՀ բանկային

համակարգը էապես կախված է օտարերկրյա կապիտալից և ներդրումային տեսանկյունից գրավիչ է նրանց համար, ուստի վերջին տարիներին բացարձակ արժեքով ՕՈՆ-ի անկում չի գրանցվել:

2014-2015թթ. նկատվել է ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գրավչության, հետևաբար՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների անկում, որը պայմանավորված է բանկերի գործունեության արդյունավետության, մասնավորապես՝ շահույթի և շահութաբերության ցուցանիշների անկումներով¹: Դա կարող է հանգեցնել ոլորտից կապիտալի փախուստի:

Համաշխարհային փորձը վերհանել է նաև օտարերկրյա ներդրումներին առնչվող կարևոր այնպիսի հարցեր, ինչպիսիք են ընդունող երկրում բնապահպանական խնդիրների անտեսումը, աշխատանքային պայմանների և անվտանգության բնագավառում միջոցների տնտեսումը, տնտեսության կարևոր ոլորտների և ազգային կապիտալի հսկողության կորուստը, երկրից կապիտալի և շահույթների զանգվածային արտահոսքը:

Սակայն Հայաստանն ունի ակնհայտ առավելություններ, ինչը լավատեսական հույսեր է ներշնչել պոտենցիալ ներդրողներին: Դա ամենից առաջ երկրում ձևավորված ցածր քրեածին իրավիճակն է: Մյուս կողմից, սակայն, ներդրողներին անհանգստացնում են մաքսատուրքերի և մաքսային վարչարարության մակարդակը, հարկային դրույքները, մաֆիատիպ կառույցների առկայությունը և այլն:

Եվ այսպես, արդեն 2016թ. Հայաստանի տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը կազմել են 81.6 մլրդ դրամ (մոտ \$170 մլն): Այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը կազմել են 62.7 մլրդ դրամ (մոտ \$130 մլն)²: 2015թ. օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը եղել է 118.4 մլրդ դրամ (մոտ \$248 մլն), իսկ ՕՈՆ-ի զուտ հոսքերը 69.4 մլրդ դրամ (\$145 մլն): Սա նշանակում է, որ 2016թ.՝ 2015թ. համեմատ, ընդամենը ներդրումները կրճատվել են 36.8 մլրդ դրամով կամ 31.1%-ով, իսկ ՕՈՆ-ը՝ 6.7 մլրդ դրամով կամ 9.7%-ով:

Արդեն 2017թ. հունվար-հունիսին ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է -\$51.2 մլն, որից օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը՝ \$35.6 մլն: Օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը հիմնականում արձա-

¹ ՀՀ ԿԲ «Ֆինանսական կայունության հաշվետվություն», Երևան, 2013:

² Զուտ հոսքերը հաշվետու ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերություններն են:

նագրվել են՝ Ջերսիից (\$65.3 մլն), Կիպրոսից (\$13.7 մլն), ԱՄԷ-ից (\$1.1 մլն) և Կուբայից (\$729 հազ.): Միաժամանակ, խոշոր օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքեր արձանագրվել են Գերմանիայից (\$15.7 մլն) և Միացյալ Թագավորությունից (\$3.4 մլն): Այդ հոսքերը գլխավորապես ուղղվել են հանքարդյունաբերություն (\$36.0 մլն), անշարժ գույքի հետ կապված գործունեություն (\$7.9 մլն), ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում (\$7.0 մլն) և կացության կազմակերպում (\$2.5) ոլորտներին: Խոշոր օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքեր են արձանագրվել մեծածախ և մանրածախ առևտրի (\$3.2 մլն) ոլորտում¹:

Երկարատև հեռանկարում արտադրության ծավալի ավելացումն անհնարին է առանց ներդրումների մեծացման: Իսկ ՕՈՆ-ի հանդեպ առավել «բաց» են խոշոր մասնավոր ձեռնարկությունների փոքր բաժնետերերը, փոքր և միջին մասնավոր ձեռնարկությունների ղեկավարները: Բնականաբար, պետական ձեռնարկությունների ղեկավարների արձագանքը փոքրինչ այլ է: Բայց և այնպես, ՀՀ կառավարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը պետք է անպայման պատրաստեն վերաներդրումների և ներդրումների խթանման գերակա ծրագրեր, քայլեր կատարեն արդյունաբերական, գյուղատնտեսական և տեղեկատվական տեխնոլոգիաների՝ որպես գերակա ճյուղերի, գոտիների հիմնման ուղղությամբ, քանի որ դա նաև ներդրողների ցանկությունն է: Մա ավելի կբարձրացնի մեր երկրի մասին ձևավորված դրական վարկանիշը: Իսկ գլոբալացման արդի փուլում կրճատվել են ներդրումների արգելքները, ինչը կնպաստի հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը՝ որպես գերակա ճյուղերի:

Այսպիսով, զարգացման ներկա փուլում ՕՈՆ-ը նույնպես մեր երկրի տնտեսությունը խթանելու կարևոր միջոց է: Ի վերջո, ամեն ինչ պիտի անել մեր երկրի շարքային քաղաքացու համար, բարձրացնել մարդկանց աշխատավարձերն ու թոշակները, իսկ արտասահմանյան կապիտալով աշխատող ձեռնարկությունների եկամտի ավելի մեծ մասը թողնել մեր երկրում՝ աշխատավարձի ձևով:

Մայիս, 2018թ.

¹ © 1998-2017 Առավոտ-Լուրեր Հայաստանից:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂԱԿԻ ՆԵՐՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համլետ Զարարյան

Ամփոփագիր

Հոդվածում հետազոտվում են օտարերկրյա ուղղակի ներդրումները Հայաստանում: Կոնկրետ վիճակագրական նյութերի հիման վրա ցույց է տրվում ՕՈՒՆ-ի դերը երկրի տնտեսության զարգացման գործում: Անդրադարձ է կատարվում այդ գործում առանձին երկրների դերին, ՕՈՒՆ-ի հիմնական ոլորտներին և ճյուղերին: Ընդգծվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների նշանակությունը կարևորագույն ոլորտների համար, որոշակի հանձնարարականներ և գնահատականներ են տրվում ստեղծված իրավիճակին:

ЗАРУБЕЖНЫЕ ПРЯМЫЕ ИНВЕСТИЦИИ В АРМЕНИИ

Гамлет Закарян

Резюме

В статье исследуется современная проблема прямых зарубежных инвестиций в Армении. На основе конкретных статистических материалов прослеживается роль ЗПИ в деле развития экономики страны. Показывается роль отдельных стран в этом деле и основы отрасли и сферы для ЗПИ. Акцентируется значение важнейших сфер для ЗПИ и даются определённые рекомендации и оценки создавшейся ситуации.

FOREIGN DIRECT INVESTMENTS IN ARMENIA

Hamlet Zakaryan

Resume

The article investigates the foreign direct investments in Armenia. Based on specific statistical data, the role of FDI in the economic development of the country is demonstrated. The roles of certain countries in this are discussed along with the main FDI areas and sectors. The significance of the foreign direct investments is emphasized for the most important industries and a number of recommendations and assessments are made with regard to the current situation.

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վահրամ Հովյան՝

Բանալի բառեր՝ սփյուռք, հայրենիք-սփյուռք համագործակցություն, մողել, ուղղահայաց, հորիզոնական, միասնական ջանք, միասնական օրակարգ:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների մողելները տարբեր չափանիշներով կարելի է դասակարգել տարբեր խմբերի: Սույն վերլուծության մեջ որպես դասակարգման չափանիշներ վերցված են հետևյալ երկուսը. ա) հարաբերությունների բնույթը (կառավարման սկզբունքը), բ) հարաբերությունների ձևը:

Համագործակցության մողելներն ըստ հարաբերությունների բնույթի

Հարաբերությունների բնույթի (կառավարման սկզբունքի) տեսակետից կարող է լինել հայրենիք-սփյուռք համագործակցության երկու մողել՝ ուղղահայաց և հորիզոնական:

1. *Ուղղահայացի* դեպքում գործում է տիրապետության և ենթակայության սկզբունքը: Հայրենիք-սփյուռք հարաբերություններն այս պարագայում կրում են աստիճանակարգային բնույթ՝ դեկավարվելով մեկ կենտրոնից: Այլ կերպ ասած՝ այդ հարաբերություններում ընդգրկված հաստատությունները գտնվում են միմյանց հետ աստիճանակարգային հարաբերակցության մեջ: Սովորաբար այսպիսի մողելի դեպքում կառավարման կենտրոնը լինում է հայրենի պետությունը, որը հրահանգում և ուղղորդում է սփյուռքի կառույցների գործունեությունը:
2. *Հորիզոնական* մողելի դեպքում հայրենի պետությունը և սփյուռքի կառույցները միմյանց նկատմամբ գտնվում են հավասար գործընկերային հարաբերությունների մեջ: Չկան աստիճանակարգություն, տիրապետության և ենթակայության սկզբունք:

՝ «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

Փորձը ցույց է տալիս, որ համագործակցության ուղղահայաց մոդելը բնորոշ է այն երկրներին, որոնք ունեն համեմատաբար երիտասարդ սփյուռք, այսինքն՝ որոնց արտերկրի համայնքները համեմատաբար նոր են ձևավորվել: Այդ պետությունների պատմությունն ավելի հին է, քան իրենց սփյուռքերինը: Այս դեպքում պետությունն ինքն է ստեղծում սփյուռքյան կառույցներ, հովանավորում դրանց (այդ թվում ֆինանսապես)՝ այդ կերպ նպաստելով սփյուռքի (արտերկրյա համայնքների) ձևավորմանը, կայացմանն ու զարգացմանը: Եվ բնականաբար, եթե պետությունն ինքն է ստեղծում ու ֆինանսավորում սփյուռքի կառույցները, ապա կարող է կամ նույնիսկ պետք է ինքն էլ ուղղորդի նրանց գործունեությունը՝ ուղղահայաց հրահանգավորմամբ:

Այս մոդելի լավագույն օրինակներ են իրենց սփյուռքերի հետ համագործակցության Թուրքիայի և Ադրբեջանի փորձերը: 2018թ. մարտի վերջին գերմանական ոստիկանության կողմից հրապարակայնացված գաղտնալուսները, համաձայն որոնց՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդոդանը հեռախոսով ուղղակի հրահանգել է Գերմանիայի թուրքական համայնքին հանրահավաքներով խոչընդոտել Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումը 2016թ. հունիսի 2-ին¹, այս մոդելի դրսևորման լավագույն օրինակ է և միաժամանակ վերոհիշյալ դրույթն ապացուցող լավագույն փաստ: Ինչպես այս առիթով նշում է Գերմանիայի Բունդեսթագի ծագումով քուրդ պատգամավոր Էվրիմ Սումերը, «Գերմանիոյ մէջ գործող «Օսմանիլըն Ճերմընի Ռոքեր» կազմակերպութիւնը բաց է ի բաց կը գործէ որպէս Թուրքիոյ կառավարութեան ներկայացուցիչը» [1]:

Թուրքական փորձում այս մոդելի դրսևորման մեկ այլ օրինակ է այն, որ 2016թ. հուլիսի 15-ի հեղաշրջման ձախողված փորձից հետո նախագահ Ռ.Էրդոդանը կարգադրեց Թուրքիայի կառավարությանն «իր վերահսկողության տակ գտնվող սփյուռքյան կառույցները հակադրել Ֆեթուլա Գյուլենի շարժմանը» [2, էջ 206]:

Ինչ վերաբերում է ադրբեջանական սփյուռքին, ապա այստեղ պետություն-սփյուռք ուղղահայաց հարաբերությունների արտահայտություն են հանդիսանում հետևյալ հանգամանքները [տե՛ս 3].

¹ Տե՛ս Էրդոդանն անձամբ է հրահանգել Հայոց ցեղասպանության բանաձևի դեմ Բեռլինում ցույցեր կազմակերպել. Der Spiegel-ի բացահայտումը <https://armenpress.am/arm/news/927788/turkeyE28099s-erdogan-personally-ordered-to-organize-protests-in-berlin-against-armenian-genocide-recognition.html>; տե՛ս նաև Հայաստանի հանրային հեռուստատեսության «Օրակարգ» ծրագրի 2018թ. մայիսի 27-ի թողարկումը, <https://www.youtube.com/watch?v=PubW66jRsj0>

- *Արտասահմանում պետության կողմից համայնքային կառույցների ձևավորումը*: Ներկայում այդպիսի կառույցների թիվն անցնում է 450-ից;
- Դրանց ֆինանսական աջակցությունը:
- *Պետության կողմից համասփյուռքյան կառույցների ստեղծումը և անմիջական ղեկավարումը*: Ադրբեջանում 2002թ. ստեղծվեց սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտեն: Նախորդ տարի պետության նախաձեռնությամբ անցկացվել էր Ադրբեջանցիների համաշխարհային հիմնադիր կոնգրեսը, որն ունի իր տեղական և տարածաշրջանային կառույցները և որի բարձրագույն ղեկավարությունն իրականացվում է պետական իշխանությունների կողմից: Վերոհիշյալ պետական կոմիտեի ստեղծմանը հաջորդեց նաև Աշխարհի ադրբեջանցիների համակարգող խորհրդի ստեղծումը:

Հորիզոնական մոդելը գործում է այն երկրների դեպքում, որոնց սփյուռքերը հին են և կայացած: Այս դեպքում պետությունն ինքը չէ, որ ստեղծում է սփյուռքյան կառույցներ, քանի որ դրանք արդեն իսկ առկա են, կայացած, ունեն տասնամյակների և անգամ հարյուրամյակների պատմություն: Որոշ դեպքերում սփյուռքյան կառույցներն ավելի հին են, քան իրենց հայրենի պետությունները: Հետևաբար, եթե պետությունը չի ստեղծում սփյուռքի կառույցներ, ոչ էլ ֆինանսավորում է վերջիններիս, ապա նրա համար անչափ դժվար կամ գուցե անհնար է հրահանգավորելով ուղղորդել նրանց գործունեությունը: Այդ պարագայում համագործակցությունը հիմնվում է հավասար գործընկերության սկզբունքի վրա, որն էլ ընկած է հորիզոնական մոդելի հիմքում:

Համագործակցության հորիզոնական մոդելի օրինակներ են հայրենիք-սփյուռք հարաբերությունների Հայաստանի և Իսրայելի փորձերը: Ինչպես հայկական, այնպես էլ հրեական սփյուռքում կան կառույցներ, որոնք ձևավորվել են նախքան հայկական և հրեական պետությունների վերականգնումը: Հայ իրականության մեջ, օրինակ, երեք ավանդական կուսակցությունները (ՀՅԴ, ՄԴՀԿ, ՌԱԿ¹), ՀԲԸՄ-ն (ստեղծվել է 1906թ.) և այլ կառույցներ ձևավորվել են նախքան 1918թ. Հայաստանի անկախության վերականգնումը: Նկատի ունենալով, որ խորհրդային տարիներին կար որոշակի անջրպետ հայրենիք-սփյուռք հարաբերություններում, արժե հիշատակել,

¹ ՌԱԿ-ը հիմնվել է 1921թ.՝ ազատական ուղղության հայկական կուսակցությունների և կազմակերպությունների միավորմամբ: Նրա նախապատմությունը սկսվում է դեռևս 1885թ. Վանում Արմենական կազմակերպության հիմնմամբ [տե՛ս 4, էջ 723]:

որ այդ շրջանում Սփյուռքում հիմնված կառույցները (օրինակ՝ Համազգային հայ կրթական և մշակութային միությունը) նույնպես չէին կարող ստեղծված լինել կամ ֆինանսավորվել հայրենի պետության կողմից:

Ինչ վերաբերում է հրեական սփյուռքին, ապա վերջինիս ամենահեղինակավոր կառույցը՝ Հրեական համաշխարհային կոնգրեսը, որը ներկայացնում է աշխարհի հարյուր երկրի հրեական համայնքներն ու կազմակերպությունները¹, ստեղծվել է 1936թ.՝ Իսրայելի պետության հիմնադրումից (1948թ.) տասներկու տարի առաջ: Ավելին, հրեական սփյուռքի պարագայում ոչ միայն հայրենի պետությունը չէ, որ ստեղծել է սփյուռքի կառույցները, այլև հակառակը՝ սփյուռքն է ստեղծել Իսրայել պետությունը [տե՛ս 5, էջ 87-125]:

Ինչպես նշվեց վերը, հորիզոնական մոդելի դեպքում հայրենիք-սփյուռք հարաբերությունները (համագործակցությունը) հիմնված են լինում հավասար գործընկերության սկզբունքի վրա: Հայ իրականության մեջ դրա դրսևորումները վառ արտահայտված են եղել դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), մասնավորապես՝ 1919թ. բացված Փարիզի խաղաղության վեհաժողովում: Ինչպես հայտնի է պատմությունից, այդ վեհաժողովին մասնակցելու համար Փարիզ էր մեկնել երկու հայկական պատվիրակություն: Դրանցից մեկը Հայաստանի Հանրապետության (որպես պետության) պատվիրակությունն էր՝ խորհրդարանի նախագահ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, իսկ մյուսը՝ Հայոց ազգային պատվիրակությունը (որպես բովանդակ հայության կամ հայկական սփյուռքի պատվիրակություն)՝ եգիպտահայ մեծահարուստ, բարերար, ՀԲԸՄ հիմնադիր Պողոս Նուբարի գլխավորությամբ²: Եվ չնայած երկու պատվիրակությունների միջև առկա հակասություններին, ոչ միանշանակ վերաբերմունքին միմյանց նկատմամբ, ի վերջո քննարկումների արդյունքում նրանց հաջողվեց գալ համաձայնության և վեհաժողովին ներկայացնել հայության պահանջների վերաբերյալ միասնական փաստաթուղթ՝ հուշագիր [տե՛ս 6, էջ 269-308, 362-365; 7, էջ 151, 232-233; 8, էջ 51-77]:

¹ <http://www.worldjewishcongress.org/en/about>

² Հայոց ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ, ստեղծվել էր նախքան Հայաստանի Հանրապետության հռչակումը՝ 1912թ., հայության դատը տերությունների մոտ պաշտպանելու նպատակով: 1912թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը հատուկ կոնդակով լիազորել է Պողոս Նուբարին հանդես գալ բովանդակ հայության անունից, այսինքն՝ ներկայացնել հայկական շահերը Առաջին համաշխարհային պատերազմին ուղեկցող և դրան հաջորդելիք քաղաքական գործընթացներում:

Համագործակցության մոդելներն ըստ հարաբերությունների ձևի

Հայրենիք-սփյուռք համագործակցության մոդելները, ըստ հարաբերությունների ձևի, կարելի է բաժանել կրկին երկու տեսակի, որոնք պայմանականորեն անվանում ենք «Միասնական ջանք» և «Միասնական օրակարգ».

1. *«Միասնական ջանք»* մոդելը կարելի է բնութագրել որպես կենտրոնացված համագործակցություն: Այս դեպքում հայրենիք-սփյուռք հարաբերությունները համակարգող կենտրոնից, որը, ենթադրվում է, պետք է լինի պետությունը, սփյուռքյան կառույցները բերվում են մի հարկի տակ, առաջ են քաշվում գործողությունների նպատակը, այդ նպատակներին հասնելու միջոցները, հաշվառվում են առկա և անհրաժեշտ ռեսուրսները, տեղի է ունենում գործառույթների և դերերի բաշխում՝ այդ նպատակին հասնելու համար: Ընդհանուր նպատակը և դրան հասնելու միջոցներն ունենում են հստակ ծրագրային ձևակերպում: Կարճ ասած՝ «Միասնական ջանք» մոդելը ենթադրում է պետության ղեկավարությամբ սփյուռքյան կառույցների սերտ համագործակցություն որևէ կոնկրետ ծրագրի (նպատակի) իրականացման ուղղությամբ:
2. *«Միասնական օրակարգ»* մոդելը կրկին ենթադրում է պետության կողմից ընդհանուր նպատակների սահմանում, սակայն չի ենթադրում սփյուռքյան կառույցների միջև սերտ համագործակցություն դրանց իրականացման համար: Դրա փոխարեն ենթադրվում է, որ վերջիններից յուրաքանչյուրն առանձին պետք է հասնի սահմանված նպատակին: Այս համատեքստում սփյուռքյան կառույցներից յուրաքանչյուրը պետք է ունենա դրված նպատակին հասնելու սեփական ծրագիրը: Այլ կերպ ասած՝ սույն մոդելի դեպքում պետությունը հանդես է գալիս միայն օրակարգ առաջադրողի դերում՝ վերջինից բխող կոնկրետ գործողությունների և ծրագրերի իրականացումը թողնելով սփյուռքյան առանձին կառույցներին:

«Միասնական ջանք» մոդելը կիրառելի է խոշոր (մեզա) նախագծերի իրականացման դեպքում, երբ դրված խնդրի լուծման համար անհրաժեշտ են մեծ միջոցներ: Նման նախագծերի իրականացումը սովորաբար վեր է լինում որևէ առանձին կազմակերպության հնարավորություններից և, հետևաբար, ենթադրում է ջանքերի և միջոցների մեկտեղման հրամայականը:

Հայ իրականության մեջ Հայրենիք-Սփյուռք համագործակցության «Միասնական ջանք» մոդելն ունեցել է դրսևորումներ ինչպես անցյալում (պատ-

մության մեջ), այնպես էլ ներկայում: Անցյալում սույն մոդելի դրսևորման լավագույն օրինակ կարելի է համարել 1946-48թթ. Մեծ հայրենադարձության որպես խոշոր (մեզա) նախագծի իրականացման համատեքստում Խորհրդային Հայաստանի համագործակցությունը Սփյուռքի համագգային կառույցների հետ, որի շնորհիվ վերջիններս իրենց միջոցներով մեծապես նպաստեցին այդ գործընթացի իրականացմանը: Սփյուռքի ավանդական կառույցներից Մեծ հայրենադարձությանն ամենամեծ նպաստը բերեց ՀԲԸՄ-ն, որի վրա ընկավ գործընթացի ֆինանսական ապահովման հիմնական ծանրությունը [մանրամասն տե՛ս 9, էջ 60-68]: Մյուս կառույցները (ՀՅԴ, ՌԱԿ, ՄԴՀԿ, ՀԱԵ և այլն) նույնպես իրենց կազմակերպչական, ֆինանսական և այլ հնարավորություններով մասնակիցը եղան այդ մեծ նախագծի իրականացմանը [տե՛ս 10, էջ 85-93; 11, էջ 75-84; 12, էջ 69-74; 13, էջ 380-391; 14, էջ 372-379]:

Նորագույն շրջանում «Միասնական ջանք» մոդելով Հայրենիք-Սփյուռք համագործակցության դրսևորումներ են «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա մարաթոնները, որոնք սովորաբար նվիրված են լինում որևէ կոնկրետ խնդրի լուծմանը: Առայսօր կարելի է առանձնացնել երեք հիմնական խոշոր (մեզա) նախագիծ, որոնք իրականացվել են հիմնադրամի ամենամյա դրամահավաք-մարաթոններով: Դրանք ՀՀ-ն Արցախի Հանրապետության հետ կապող, ինչպես նաև Արցախի ներքին հաղորդակցային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հետևյալ նախագծերն են.

ա) Գորիս-Բերձոր-Շուշի-Ստեփանակերտ ավտոմայրուղին, որը ՀՀ-ն Արցախի հետ կապող առաջին ցամաքային ուղին է և կենսական նշանակություն ունի Արցախի համար,

բ) Արցախի ողնաշարը համարվող Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին, որը վճռական նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության տնտեսության, ինչպես նաև անվտանգության համար,

գ) Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղին, որը ՀՀ-ն ԱՀ-ի հետ կապող երկրորդ կենսական հաղորդակցային ուղին է, անմիջական կապ է հաստատում ՀՀ-ի և ԱՀ-ի հյուսիսարևելյան շրջանի հետ և նույնպես կարևոր նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության տնտեսության զարգացման և անվտանգության ապահովման տեսակետից:

Թե ինչ նշանակություն ունեն վերոհիշյալ հաղորդակցային ուղիները ՀՀ-ի և Արցախի համար՝ կարելի է դատել ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի դերի մասին դեռևս 1997թ. տրված այն գնահատականից, որ եթե հիմնադրամն ուրիշ

ոչինչ արած չլինելը, միայն Գորիս-Բերձոր-Շուշի-Ստեփանակերտ ավտոմայրուղու կառուցումը բավարար է, որպեսզի նրա գոյությունն արդարացված լինի [տե՛ս 15, էջ 607]:

2017թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակված գումարն ուղղվել է Արցախի ռոտման ցանցի զարգացմանը, ինչը վճռական նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության գյուղատնտեսության և, ընդհանրապես, տնտեսության զարգացման համար:

Այսպիսով, քանի որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի մարաթոններին մասնակցում են կառույցներ ու անհատներ ինչպես Սփյուռքից, այնպես էլ ՀՀ-ից և ԱՀ-ից, ապա այդ մարաթոնների հանգանակություններով իրականացված վերահիշյալ խոշոր (մեզա) նախագծերը, հիրավի, կարելի է համարել Երրորդ հանրապետության պատմության ընթացքում «Միասնական ջանք» մոդելով Հայաստան-Սփյուռք համագործակցության ամենանշանակալի դրսևորումները:

«Միասնական օրակարգ» մոդելն ավելի կիրառելի է փոքր կամ միջին նախագծերի իրականացման դեպքում, որոնք չեն պահանջում հսկայական միջոցներ և կարող են իրականացվել առանձին կազմակերպությունների կողմից: Ավելին, այս դեպքում «Միասնական օրակարգ» մոդելը ոչ միայն կիրառական է, այլև ավելի նպատակահարմար: Եթե առաջ է քաշվում որևէ համեմատաբար փոքր խնդիր (օրինակ՝ դպրոցի հիմնում), ապա դրա միասնաբար իրականացումը կարող է ոչ միայն արդյունավետ չլինել, այլև ընդհանրապես տապալվել՝ սփյուռքյան կազմակերպությունների մրցակցության, հավակնությունների և այլ պատճառներով: Մինչդեռ «Միասնական օրակարգ» մոդելի կիրառման դեպքում սփյուռքյան կազմակերպություններից յուրաքանչյուրը (դիցուք՝ երեք կուսակցությունները) առանձին-առանձին հիմնում են սեփական դպրոցները: Այսինքն՝ խնդրի իրականացումը ոչ միայն չի տապալվում, այլև հաջողվում է բազմապատիկ արդյունավետությամբ:

Այսպիսով, «Միասնական օրակարգ» մոդելի պարագայում ընդհանուր նպատակի դերում հանդես է գալիս ընդհանուր գաղափարը կամ տեսլականը (օրինակ՝ դպրոցների հիմնում), մինչդեռ դրա իրականացման ծրագրերը լինում են առանձին և փոքր-ինչ յուրահատուկ յուրաքանչյուր կազմակերպության համար:

Հայ իրականության մեջ հայրենիք-սփյուռք համագործակցության «Միասնական օրակարգ» մոդելի ամենաթարմ դրսևորումներից է ՀՀ

Սփյուռքի նախարարության կողմից 2016թ. հոկտեմբերի 20-24-ը Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովում նախաձեռնված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժումը: Միասնական օրակարգի առաջադրմամբ և Սփյուռքի յուրաքանչյուր կազմակերպությանն ու անհատին այդ միասնական օրակարգի շրջանակներում անհատապես գործելու հնարավորություն տալով հնարավոր եղավ հասնել որոշակի արդյունքի: Շարժման շրջանակներում Սփյուռքում ոմանք փորձեցին դեղորայքով օգնել Արցախի հիվանդանոցներին, ոմանք՝ բժշկական սարքավորումներ և գույք գնելով և առաքելով, ոմանք՝ շտապ օգնության մեքենաներ ձեռք բերելով և ուղարկելով, ոմանք՝ մեքենաներ նվիրաբերելով Պաշտպանության բանակին, ոմանք՝ երաժշտական գործիքներ նվիրաբերելով Արցախի երաժշտական կրթական հաստատություններին, ոմանք՝ պարզապես գումարով և այլն: Այս բոլորը առանձին-առանձին վերցրած փոքր նշանակություն ունեցող աջակցություն են: Մակայն դրանց հանրագումարը զգալի նպաստ է Արցախի երիտասարդ պետականության կայացման համար:

Հայրենիք-Սփյուռք գործակցության միասնական օրակարգի ձևավորման լավագույն հարթակ կարող են լինել Հայաստան-Սփյուռք համաժողովները: Այդպիսի փորձ արդեն իսկ գոյություն ունի: Խոսքը 2006թ. տեղի ունեցած Հայաստան-Սփյուռք երրորդ համաժողովի մասին է, որի ընթացքում որպես հիմնական խնդիր ՀՀ իշխանությունների կողմից դրվեց Հայաստանի գյուղական, հատկապես սահմանամերձ համայնքների զարգացումը¹ [տե՛ս 16]: 2017թ. Հայրենիք-Սփյուռք վեցերորդ համաժողովին նախագահ Ս.Սարգսյանի ելույթում հնչեցված նպատակային դրույթը 2040թ. Հայաստանի բնակչությունը չորս միլիոնի հասցնելու մասին նույնպես կարելի է դիտել որպես Հայրենիք-Սփյուռք գործակցության միասնական օրակարգի ձևավորման փորձ:

Հայաստան-Սփյուռք համաժողովներում միասնական օրակարգի ձևավորումը, այնուամենայնիվ, ենթադրում է, որ այն պետք է վերածվի՝ ա) լուրջ խոսույթի (դիսկուրս) ինչպես համաժողովի ընթացքում, այնպես էլ դրանից հետո (տեսական հարթություն) և բ) լուրջ շարժման (գործնական հարթություն): Այս խնդրի լուծման համար նպատակահարմար կլինի այսուհետ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա մարա-

¹ Ենթադրվում է, որ համաժողովից հետո Սփյուռքի կառույցները և անհատ սփյուռքահայերը պետք է յուրաքանչյուրն իր կարողության չափով նպաստ բերեր այդ խնդրի իրականացմանը: Թե ինչ քայլեր են իրականացվել այդ համաժողովից հետո Հայաստանի գյուղական համայնքների զարգացման նպատակով Հայաստանի և Սփյուռքի կողմից այլ ուսումնասիրության նյութ է:

թոնների օրինակով Հայաստան-Սփյուռք համաժողովները կազմակերպել կոնկրետ խնդիրների շուրջ, որոնք էլ կլինեն այդ համաժողովների օրակարգը: Դրա համար անհրաժեշտ է.

1. նախօրոք սահմանել այն գաղափար-նպատակը, որը պետք է դրվի տվյալ համաժողովի օրակարգում, և այդ մասին իրազեկել համաժողովի մասնակիցներին համաժողովից նվազագույնը երեք ամիս առաջ,
2. համաժողովների խոսույթը (ելույթներ, քննարկումներ և այլն) կառուցել երկու հիմնական բաղադրիչի վրա.
 - հաշվետվություն նախորդ համաժողովում առաջադրված օրակարգային գաղափար-նպատակի իրականացման վերաբերյալ (թե կոնկրետ որ կառույցի կողմից ինչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ),
 - նոր համաժողովում առաջ քաշված օրակարգի իրականացման վերաբերյալ նախատեսվող քայլեր¹:

Այս կերպ Հայաստան-Սփյուռք համաժողովները, ինչպես նաև հայկական հանրությունը (Հայաստան, Սփյուռք) կշահեն հետևյալ առումներով.

1. Համաժողովների խոսույթը վերացականությունից անցում կկատարի կոնկրետ գործնական հարթություն, ինչի արդյունքում զգացմունքային հայրենասիրությունը, որը նույնպես կարևոր է և անհրաժեշտ, կգուզակցվի նպատակային-ծրագրային քայլերի վերաբերյալ դատողություններով:
2. Համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանը կդառնա կարճաժամկետ կամ միջնաժամկետ խնդիրների լուծման շրջան: Միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում (2-4 տարի) հնարավոր է իրականացնել միայն այդպիսի ծրագրեր: Կամ էլ՝ Հայաստան-Սփյուռք համաժողովների միջև ընկած ժամանակահատվածները կարող են լինել որևէ երկարաժամկետ ռազմավարական խնդրի առանձին փուլերի՝ մարտավարական խնդիրների իրականացման շրջաններ:

¹ Այս դրույթը չի նշանակում, որ նախատեսվող քայլերի վերաբերյալ հայտարարություններն ունեն հրամայական խոստման ուժ և պետք է անշեղորեն կատարվեն: Գործնականում նախատեսվող քայլերի իրականացման ժամանակ թույլատրելի են նաև որոշակի շեղումներ հնչեցված հայտարարություններից:

Ամփոփելով նշենք, որ տեսականորեն կա նաև որոշակի հարաբերակցություն մի կողմից՝ հայրենիք-սփյուռք հարաբերությունների (համագործակցության) ուղղահայաց ու հորիզոնական և մյուս կողմից՝ «Միասնական ջանք» ու «Միասնական օրակարգ» մոդելների միջև: «Միասնական ջանք» մոդելն ավելի կիրառական է պետություն-սփյուռք ուղղահայաց հարաբերությունների պարագայում: Եթե պետությունն ինքն է ուղղորդում սփյուռքի կառույցների գործունեությունը, ապա այն էլ կարող է որևէ կոնկրետ խնդրի լուծման նպատակով միասնական գործողությունների դաշտ բերել վերջիններիս, իրականացնել դերերի և գործառույթների բաշխում, համակարգել նրանց գործունեությունը տվյալ խնդրի իրականացման համատեքստում: Մինչդեռ պետություն-սփյուռք հորիզոնական հարաբերությունների դեպքում առավել կիրառական է «Միասնական օրակարգ» մոդելը: Եթե պետությունը չունի սփյուռքի կառույցներին հրահանգելու կամ նրանց գործունեությունը թելադրելու գործուն մեխանիզմներ, ապա առավել նպատակահարմար է առաջադրել օրակարգ՝ դրա իրականացումը թողնելով սփյուռքի կառույցներին, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը յուրովի իրականացնի առաջադրված խնդիրը:

Հուլիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Գերմանիոյ մէջ քրտական ծագումով երեսփոխանին որոշումը՝ Հայոց ցեղասպանութեան նիւթին շուրջ, Նոր Մարմարա, 31-ը մարտի, 2018:
2. *Միմավորյան Ա., Հովյան Վ., Վերանյան Գ.*, Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, Եր., «Հայկարիլ», 2017:
3. *Sassounian H.*, Azerbaijan Organizes its Own Diaspora To Compete With the Armenian Diaspora, The California Courier, July 24, 2018.
4. «Հայ սփյուռք» հանրագիտարան, գլխ. խմբ.՝ Հ.Այվազյան, Եր., «Տիգրան Մեծ հրատարակչություն», 2003:
5. *Հակոբյան Հ.Վ.*, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ասողիկ», 2002:
6. *Վրացյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993:
7. *Խատիսեան Ալ.*, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, տպարան «Համազգային», 1968:
8. *Մելիքեան Վ.*, Արևմտահայերի համագումարները և հայկական հարցի փուլերը 1917-1923թթ., Եր., «Զանգակ-97», 2007:
9. *Մելքոնյան Էդ.*, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը 1946-1948թթ. հայրենադարձության գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձու-

- թյունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
10. *Մաղաթեղյան Ի.*, 1946-1948թթ. հայրենադարձությունը և Հայ հեղափոխական դաշնակցությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
 11. *Առաքելյան Հ.*, Ռամկավար ազատական կուսակցության դերակատարությունը 1946-1948թթ. հայրենադարձության կազմակերպման գործընթացում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
 12. *Լեփեճեան Կ.*, Հայրենադարձությունը և ՄԴՀԿ-ի դերակատարությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
 13. *Պողոսյան Վ., Դավթյան Ա.*, 1946-1948թթ. հայրենադարձությունը և Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
 14. *Հարությունյան Լ.*, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքյանի դերակատարությունը 1946-1948թթ. հայրենադարձության կազմակերպման գործում, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:
 15. *Տեր-Պետրոսյան Լ.*, Ընտրանի. ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Եր., «Փրինթինֆո», 2006:
 16. *Հովյան Վ.*, Հայաստան-Սփյուռք երրորդ խորհրդաժողով. նախնական ամփոփում, Երկիր, 3-ը նոյեմբերի, 2006:

**ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Սույն հետազոտության մեջ հայրենիք-սփյուռք համագործակցության մոդելների դասակարգման համար օգտագործվել է երկու չափանիշ՝ հարաբերությունների բնույթը (կառավարման սկզբունքը) և ձևը: Առաջին չափանիշի դեպքում այդ մոդելները լինում են երկու տեսակ՝ ուղղահայաց և հորիզոնական:

Երկրորդի դեպքում նույնպես դրանք երկուսն են, որոնք պայմանականորեն անվանվել են «Միասնական ջանք» և «Միասնական օրակարգ»: Տեսականորեն կարող է լինել նաև որոշակի հարաբերակցություն վերոհիշյալ չափանիշներով դասակարգված մոդելների միջև: Հայրենիք-սփյուռք ուղղահայաց հարաբերությունները ավելի շատ համապատասխանում են «Միասնական ջանք», հորիզոնական հարաբերությունները «Միասնական օրակարգ» մոդելին:

О МОДЕЛЯХ СОТРУДНИЧЕСТВА АРМЕНИЯ-ДИАСПОРА

Ваграм Овян

Резюме

В данном исследовании для классификации моделей сотрудничества родина-диаспора использовались два параметра: тип отношений (принцип управления) и форма. По первому параметру эти модели бывают двух типов: вертикальные и горизонтальные. По второму параметру тоже два типа, которые можно условно назвать «Единые усилия» и «Единая повестка». Теоретически может быть также определенная корреляция между моделями, классифицированными по упомянутым параметрам. Вертикальные отношения «родина-диаспора» больше соотносятся с моделью «Единые усилия», а горизонтальные отношения – с моделью «Единая повестка».

ABOUT THE MODELS OF HOMELAND-DIASPORA COOPERATION

Vahram Hovyan

Resume

This study utilized two criteria to classify homeland-diaspora cooperation models: the nature (management principle) and form of the relations. For the first criteria there are two models: vertical and horizontal. There are two models for the second one, as well, which were conditionally named “Joint Effort” and “Common Agenda”. Theoretically, there could be also some interrelationship between the models classified based on the mentioned criteria. The vertical homeland-diaspora relations match to a greater extent to the “Joint Effort” model, whereas the horizontal relations are more compatible with the “Common Agenda”.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

*Մամվել Մանուկյան**

Բանալի բառեր՝ ինտերնետ, ինտերնետային լրատվական կայքեր, լսարան, լոգարիթմ, գլոբալ ազդեցություն, լոկալ ազդեցություն:

Խնդիրը

Հայաստանում ինտերնետի նշանակությունը որպես լրատվամիջոց ինտենսիվորեն աճում է, հատկապես երիտասարդության շրջանում: Հայաստանի հասարակությունում ինտերնետի դերի և ազդեցության համապարփակ և խոր գնահատումը բարդ և ռեսուրսատար խնդիր է: Այդ խնդրի լուծման ոլորտում ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է Հայաստանի լրատվական ինտերնետային կայքերի օգտագործման ծավալի նախնական գնահատում: Հողվածում ներկայացված են Հայաստանի ամենամեծ լսարանն ունեցող ինտերնետային լրատվական կայքերի մի քանի բնութագրերի նախնական գնահատման արդյունքները:

Տվյալները և մեթոդաբանություն

Ուսումնասիրության համար կիրառվել են *Alexa Internet, Inc.* կազմակերպությանը պատկանող <https://www.alexa.com/> կայքով Հայաստանի ինտերնետային լրատվական կայքերի վերաբերյալ հավաքագրված տվյալները՝ 2018թ. հուլիսի 16-ի դրությամբ:

alexa.com-ը ինտերնետային կայքերի կարգերը (ռանգերը) հաշվարկում է երկու ցուցանիշների միջոցով՝ 1. նախորդ ամսվա ընթացքում տվյալ կայքի այցելուների օրական միջին քանակը և 2. դիտած էջերի միջին քանակը: Ամենամեծ գնահատականը ստացած կայքին տրվում է 1 կարգը (ռանգը): Այսինքն, որքան ավելի փոքր է կայքի կարգը ներկայացնող թիվը, այնքան ավելի «հաճախելի» է այդ կայքը: Այդ գնահատականով հնարավոր է կարգեր սահմանել ինտերնետային կայքերի կամայական խմբում:

* «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, unq.գ.թ.:

Հայաստանի առավել մեծ լսարան ունեցող ինտերնետային լրատվական կայքերի բնութագրերը գնահատվել են տվյալների կոնսոլիդացման, ինդեքսավորման, մաթեմատիկական և ցանցային վերլուծության միջոցով:

Հայաստանի ինտերնետային լրատվական կայքերի լոկալ և գլոբալ ազդեցությունը

Կայքերի լոկալ և գլոբալ նշանակության գնահատումն ըստ կարգերի. Աղյուսակ 1-ում տրված են հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերի կարգերը Հայաստանում և տարբեր երկրներում: Աղյուսակի տողերում են հայաստանյան 17 առավել բարձր կարգեր ունեցող ինտերնետային լրատվական կայքերը, որոնք գտնվում են alexa.com-ի կազմած Հայաստանի 50 առավել բարձր կարգ ունեցող կայքերի ցուցակում:

Աղյուսակ 1

Հայկական առավել հաճախվող լրատվական կայքերի կարգերը տարբեր երկրներում


Կայքեր	ՀՀ	Ֆրանսիա	ՌԴ	Գերմանիա	Ադրբեյջան	ԱՄՆ	ՉԺՀ	Իսպանիա	Վրաստան
news.am	1 (7)	1 (1369)	2 (4052)	-	1 (378)	1 (18050)	-	-	-
mamul.am	2 (17)	2 (2803)	6 (13249)	1 (7181)	-	6 (83120)	-	-	-
lin.am	3 (18)	3 (3515)	-	3 (10091)	2 (587)	2 (31550)	-	-	-
shamshyan.com	4 (23)	12 (6593)	9 (23063)	9 (25131)	-	9 (119626)	-	-	-
armtur.am	5 (24)	9 (5543)	8 (20145)	11 (32318)	-	-	-	1 (23658)	-
azatutune.am	6 (25)	4 (3912)	5 (12621)	4 (11438)	-	3 (44685)	-	-	-
newstime.am	7 (26)	15 (7326)	7 (16593)	10 (26766)	-	5 (65502)	-	-	-
blognews.am	8 (27)	8 (5372)	3 (10496)	13 (40873)	-	7 (94302)	-	-	-
tert.am	9 (29)	6 (4694)	10 (24018)	-	5 (3217)	4 (55637)	-	-	-
hynews.ru	10 (36)	10 (6009)	4 (10906)	12 (34454)	-	-	-	-	1 (1062)
aravot.am	11 (37)	17 (14892)	11 (25660)	6 (13763)	-	-	1 (23190)	-	-
lragir.am	12 (40)	11 (6580)	-	5 (13382)	4 (846)	-	2 (29906)	-	-
lurer.com	13 (42)	14 (7322)	15 (39924)	14 (61414)	-	11 (265246)	-	-	-
armtimes.com	14 (43)	7 (5259)	12 (29058)	7 (13835)	-	10 (134995)	-	-	-
asekose.am	15 (46)	5 (4392)	13 (30191)	8 (15391)	-	-	-	2 (33568)	-
168.am	16 (47)	16 (8257)	14 (32095)	15 (68672)	-	8 (109303)	-	-	-
armeniasputnik.am	17 (49)	13 (7261)	1 (2002)	2 (9963)	3 (654)	-	-	-	-

Աղյուսակի յուրաքանչյուր սյունում *փակագծերում* տրված են հայաստանյան 17 ինտերնետային լրատվական կայքերի կարգերը (ռանգերը) տվյալ երկրի բոլոր կայքերի շրջանում, իսկ փակագծերից առաջ՝ կարգերը (ռանգերը) տվյալ երկրում *հայաստանյան* ինտերնետային լրատվական կայքերի շրջանում:

Աղյուսակում տվյալ երկրի սյունում այդ երկրում հինգ առավել բարձր կարգ ունեցող կայքերի վանդակները կարմիր են: ՉԺՀ-ում, Իսպանիայում և Վրաստանում ազդեցության գնահատական ստացած հայաստանյան կայքերի քանակը 5-ից փոքր է: Աղյուսակը թույլ է տալիս գնահատել հայաստանյան տվյալ ինտերնետային լրատվական կայքի նշանակությունը Հայաստանում և չորս երկրում, որոնցում այդ կայքն ունի իր ամբողջ լսարանի նշանակալի հատվածը:

Գծապատկեր 1

Հայաստանի ինտերնետային լրատվական կայքերի լոկալ և ընդհանրացված գլոբալ ազդեցություն



Հոդվածում կայքի լոկալ նշանակություն է անվանված Հայաստանում կայքի կարգի բնական հիմքով լոգարիթմը: Իսկ գլոբալ նշանակությունը գնահատելու համար կազմավորված է նոր գնահատական, որն իրենից ներկայացնում է այլ երկրներում տվյալ կայքի [հայաստանյան ինտերնե-

տային լրատվական կայքերի շրջանում] կարգերի գումարի բնական հիմքով լոգարիթմը: Հայաստանի 17 առավել բարձր կարգ ունեցող ինտերնետային լրատվական կայքերի լոկալ և գլոբալ նշանակությունը ներկայացված է Գծապատկեր 1-ում: Որքան ավելի աջ է տեղադրված կայքը ներկայացնող կետը, այնքան բարձր է կայքի լոկալ նշանակությունը: Որքան ավելի վեր է դիրքավորված կայքը ներկայացնող կետը, այնքան ավելի բարձր է կայքի գլոբալ նշանակությունը:

alex.com-ը բացահայտել է հայկական լրատվական կայքերի մեծ լսարաններ նախ և առաջ այն երկրներում, որտեղ բնակվում են մեծ քանակով հայեր, մասնավորապես՝ Ֆրանսիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Վրաստանում: Սակայն բացահայտվել են բավական մեծ լսարաններ նաև Ադրբեջանում, Իսպանիայում և ՉԺՀ-ում:

Դիտարկենք հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերի լոկալ և գլոբալ նշանակությունը:

news.am – Հայաստանում ամենամեծ և՛ լոկալ, և՛ գլոբալ նշանակություն ունեցող ինտերնետային լրատվական կայքն է: Կայքը 4 երկրներում գտնվում է հայաստանյան ազդեցիկ ինտերնետային լրատվական կայքերի հնգյակում, ընդ որում՝ այդ երկրներից յուրաքանչյուրում նույնպես իր ազդեցությամբ առաջինն է՝ բացի Ռուսաստանից: Այսպես, Ֆրանսիայում դիտվող հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերի կազմում այն 1-ին տեղում է (սակայն Ֆրանսիայում դիտվող կայքերի շրջանակում այն 1369-րդն է): Ռուսաստանում 2-րդն է (ռուսաստանյան կայքերի շրջանակում՝ 4052-րդը) armeniasputnik.am կայքից հետո, Ադրբեջանում 1-ինն է (ադրբեջանական կայքերի շրջանակում՝ 378-րդը), ԱՄՆ-ում՝ նույնպես 1-ինը (ԱՄՆ կայքերի շրջանակում՝ 18052-րդը):

lin.am – Կայքը երկրորդն է գլոբալ ազդեցությամբ և երրորդը՝ լոկալ ազդեցությամբ: Այն չորս երկրներում հայաստանյան ազդեցիկ կայքերի հնգյակում է, այդ թվում՝ Ֆրանսիայում՝ 3-րդը, Գերմանիայում՝ 3-րդը, Ադրբեջանում՝ 2-րդը և ԱՄՆ-ում՝ 2-րդը:

mamul.am – կայքը երկրորդն է լոկալ նշանակությամբ և երրորդը՝ գլոբալ նշանակությամբ: Այն 1-ինն է Գերմանիայում, 2-րդը՝ Ֆրանսիայում, 6-րդը՝ ԱՄՆ-ում և Ռուսաստանում:

Նշված երեք կայքերից հետո գալիս է կայքերի երեք խումբ, որոնք հստակ արտահայտած են Գծապատկեր 1-ում: Առաջին խմբում են համեմատաբար բարձր լոկալ և գլոբալ նշանակությամբ **azatutune.am** և **tert.am** կայքերը, երկրորդում՝ լոկալ նշանակությամբ առաջին խմբին համարժեք,

սակայն գլոբալ նշանակությամբ այդ խմբին զիջող՝ **blognews.am**, **news-time.am**, **shamshyan.com** և **armlur.am** կայքերը, իսկ երրորդում՝ համեմատաբար ցածր լոկալ և գլոբալ նշանակությամբ **armeniasputnik.am**, **lragir.am**, **armtimes.com**, **asekose.am**, **hynews.ru**, **aravot.am**, **168.am**, **lurer.com** կայքերը:

Այնուամենայնիվ, նշված խմբերում հարկ է առանձնացնել մի քանի կայքեր, որոնք ունեն կարևոր յուրահատկություններ:

azatutune.am - կայքը լոկալ ազդեցությամբ Հայաստանում 6-րդն է, սակայն ունի նշանակալի գլոբալ ազդեցություն, քանի որ այն **ազդեցիկ հնգյակում է չորս երկրներում**՝ Ֆրանսիայում՝ 4-րդը, Ռուսաստանում՝ 5-րդը, Գերմանիայում՝ 4-րդը և ԱՄՆ-ում՝ 3-րդը:

armeniasputnik.am - չնայած լոկալ ազդեցությամբ դիտարկված կայքերի շարքում ամենավերջին՝ 17-րդն է, սակայն նրա առանձնահատկությունն այն է, որ **ազդեցիկ հնգյակում է երեք երկրներում**, մասնավորապես՝ Ռուսաստանում իր ազդեցությամբ 1-ինն է, Գերմանիայում՝ 2-րդը, Ադրբեջանում՝ 3-րդը:

lragir.am - Հայաստանում իր ազդեցությամբ 12-րդն է, սակայն գլոբալ ազդեցությամբ 6-րդն է, իսկ երեք երկրներում ազդեցիկ կայքերի հնգյակում է. ՉԺՀ-ում՝ 2-րդը, Ադրբեջանում՝ 4-րդը և Գերմանիայում՝ 5-րդը:

Նշենք, որ Ադրբեջանում առավել դիտվող հայաստանյան կայքերն են՝ **news.am**, **1in.am**, **armeniasputnik.am**, **lragir.am**, **tert.am**: Ընդ որում՝ Ադյուսակ 1-ը վեր է հանում կարևոր փաստ:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Ադրբեջանում հայկական կայքերի լսարաններն ավելի մեծ են, քան Վրաստանում: Մեր կարծիքով, այս փաստի առավել հավանական մեկնաբանությունն այն է, որ alexa.com-ը կայքի պատկանելությունը որոշում է միջազգային ստանդարտներին համապատասխան, այսինքն՝ Արցախի բնակչությունը, որն ինտենսիվորեն օգտվում է հայաստանյան կայքերից, նույնականացվում է որպես Ադրբեջանի տարածքի բնակիչներ: Չի բացառվում նաև, որ Ադրբեջանի բնակչության շրջանում, որը ենթարկվում է հակահայկական հզոր ինֆորմացիոն ազդեցության, նույնպես բարձր է հետաքրքրվածությունը հայկական կայքերի բովանդակությամբ: Այս համատեքստում նշենք, որ Ադրբեջանում ամենից ավելի դիտվող հայաստանյան կայքը **news.am**-ն է, որն ադրբեջանական բոլոր կայքերի շարքում 378-րդն է (1in.am-ն՝ 587-րդը, armeniasputnik.am-ն՝ 654-րդը, իսկ lragir.am-ը՝ 846-րդը), իսկ Վրաստանում առավել դիտվող հայաստանյան կայքը՝ **haynes.ru**-ն, վրացական բոլոր կայքերի շարքում 1062-րդն է:

Հայաստանյան ինտերնետային կայքերի լսարանների բաշխումն ըստ երկրների. Հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերի լոկալ և գլոբալ ազդեցությունների մեկ այլ գնահատական է յուրաքանչյուր կայքի ամբողջ լսարանի բաշխումը Հայաստանի և այլ երկրների միջև: Այդ բաշխումները ներկայացված են Աղյուսակ 2-ում: Աղյուսակի սյուները ցույց են տալիս, թե տվյալ կայքի լսարանի որ տոկոսն է գտնվում տվյալ երկրում:

Աղյուսակ 2

Կայքերի լսարանների բաշխումները երկրներում

Կայք	ՀՀ	Ֆրան.	ՌԴ	Գերմ.	Ադրբ.	ԱՄՆ	ԶԺՀ	Իսպ.	Վրաս.	Շեդ.	Այլ
news.am	39.7%	14.4%	7.0%	-	12.0%	5.7%	-	-	-	78.8%	21.2%
mamul.am	51.3%	18.2%	5.1%	8.6%	-	3.0%	-	-	-	86.2%	13.8%
lin.am	41.0%	12.3%	-	6.5%	15.7%	7.3%	-	-	-	82.8%	17.2%
shamshtyan.com	64.3%	14.7%	5.1%	5.3%	-	3.6%	-	-	-	93.0%	7.0%
armhur.am	60.6%	19.4%	5.7%	3.1%	-	-	-	2.6%	-	91.4%	8.6%
azatutune.am	39.5%	17.1%	7.4%	7.6%	-	7.5%	-	-	-	79.1%	20.9%
newstime.am	57.2%	12.7%	6.9%	4.7%	-	6.1%	-	-	-	87.6%	12.4%
blognews.am	51.9%	15.1%	12.9%	2.6%	-	3.9%	-	-	-	86.4%	13.6%
tect.am	47.2%	17.3%	4.3%	-	5.6%	5.9%	-	-	-	80.3%	19.7%
hynews.ru	52.9%	20.9%	15.4%	4.6%	-	-	-	-	2.0%	95.8%	4.2%
aravot.am	50.3%	8.6%	4.5%	9.1%	-	-	13.1%	-	-	85.6%	14.4%
iragir.am	32.8%	13.4%	-	7.0%	22.0%	-	6.9%	-	-	82.1%	17.9%
hurez.com	63.7%	21.9%	4.7%	3.3%	-	2.6%	-	-	-	96.2%	3.8%
armtimes.com	46.3%	20.4%	4.9%	8.9%	-	4.0%	-	-	-	84.5%	15.5%
asekose.am	46.5%	27.0%	4.4%	8.8%	-	-	-	2.5%	-	89.2%	10.8%
168.am	57.8%	19.1%	5.4%	3.4%	-	6.0%	-	-	-	91.7%	8.3%
armeniasputnik.am	11.8%	6.6%	34.5%	7.0%	15.0%	-	-	-	-	74.9%	25.1%

Աղյուսակի առաջին սյունում տրված են կայքերի լսարանների ծավալները Հայաստանում: Սյունը առանձնացված է աղյուսակի մնացած երկրների հատվածից դրա և աղյուսակի այլ երկրների հատվածի վանդակների գունավորումների ընկալումները միմյանցից զատելու նպատակով: Հայաստանի սյունում որքան ավելի մուգ կարմիր է վանդակի գույնը, այնքան ավելի բարձր է տվյալ կայքի լսարանում հայաստանյան հատվածի ծավալը: Որքան ավելի մուգ կապույտ է վանդակի գույնը, այնքան ավելի փոքր է լսարանի հայաստանյան հատվածի ծավալը: Աղյուսակի այլ երկրներին վերաբերող ամբողջ հատվածում՝ Ֆրանսիայից մինչև Վրաստան, գունավորման մգությունը համադրելի է **ըստ երկրների**, որքան ավելի մուգ կարմիր է վանդակը, այնքան ավելի մեծ է տվյալ երկրում տվյալ կայքի լսարանի ծավալը: Տարբեր երկրների վանդակների գույների երանգները համադրելի չեն:

Աղյուսակի «Ընդ.» սյունում տրված է տվյալ կայքի Հայաստանում և բացահայտորեն նշված երկրներում լսարանի ընդհանուր ծավալը, իսկ «Այլ» սյունում՝ լսարանի այն ծավալը, որը բաշխված է աղյուսակում բացահայտորեն չնշված երկրներում:

Հայաստան. Սեփական լսարանի ամենամեծ ծավալը Հայաստանում ունեն shamshyan.com (իր լսարանի ամբողջ ծավալի 64.3%-ը), lurer.com (63.7%) և armtur.am (60.6%) կայքերը, իսկ ամենափոքր ծավալները՝ armeniasputnik.am (11.8%), lragir.am, (32.8%), azatutune.am (39.5), news.am (39.7%), lin.am (41.0%) կայքերը: Նշենք, որ իրենց լսարանի 50%-ից ավելին այլ երկրներում ունի դիտարկված 17 կայքերից 8-ը:

Ֆրանսիա. Հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերի Հայաստանից հետո ամենամեծ լսարանները Ֆրանսիայում են: Այդպիսի կայքերի քանակը 13 է: Ֆրանսիայում իրենց լսարանի ծավալի ամենամեծ հատվածն ունեն asekose.am (27.0%), lurer.am (21.9%), hynews.ru (20.9%), armtimes.com (20.4%) և armtur.am (19.4%) կայքերը:

Ռուսաստանում իր լսարանի ամենամեծ հատվածն ունի armeniasputnik.am (34.5%) կայքը: Դրա ռուսաստանյան լսարանի ծավալը գերազանցում է հայաստանյան լսարանի ծավալը, որը կազմում է 11.8%: Ռուսաստանում լսարանի նշանակալի ծավալներ ունեն նաև Haynes.ru (15.4%) և blognews.am (12.9%) կայքերը: Մնացած կայքերի լսարանների ծավալները Ռուսաստանում գտնվում են 4.4-7.4% միջակայքում: Նշենք, որ lragir.am և lin.am կայքերի դեպքում ռուսաստանյան լսարանը չի գտնվում երկրների առաջին հնգյակում (համապատասխան վանդակները դատարկ են):

Գերմանիայում համեմատաբար ավելի մեծ սեփական լսարաններ ունեն՝ aravot.am (9.1%), armtimes.com (8.9%), asekose.am (8.8%), mamul.am (8.6%) կայքերը: Մնացած կայքերի լսարանների ծավալները Գերմանիայում կազմում են 2.6-7.6%: Ընդ որում՝ news.am և tert.am կայքերի դեպքում գերմանական լսարանը չի մտնում երկրների առաջին հնգյակում: Հարկ է նշել, որ չնայած Գերմանիայում բնակվում է մոտ 50,000 հայ, սակայն այստեղ հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերի նկատմամբ հետաքրքրությունը համադրելի է Ռուսաստանի հետ, որտեղ բնակվում է շուրջ 2.5 միլիոն հայ և ակնհայտորեն գերազանցում է ԱՄՆ ցուցանիշներին, որտեղ բնակվում է շուրջ 1.3 միլիոն հայ:

Ադրբեջանում իրենց լսարանների ամենամեծ հատվածներն ունեն lragir.am (22.0%), lin.am (15.7%), news.am (12.0%) և armeniasputnik.am (15.0%) կայքերը: Մնացած կայքերի դեպքում լսարանի ադրբեջանական

հատվածը չի մտնում այդ կայքերի լսարանների բաշխման երկրների առաջին հնգյակում: Iragir.am-ի լսարանի շատ մեծ ծավալը Ադրբեջանում, որը, եթե ճիշտ է վերևում առաջարկված ենթադրությունը, որ «Ադրբեջանում» հայաստանյան կայքերի լսարանների գերակշիռ հատվածը Արցախում է, բացատրվում է նրանով, որ այդ կայքի հիմնադիրներն ու հիմնական լրագրողներն ունեն արցախյան ծագում, լավ են տիրապետում Արցախի ներքին կոնյունկտուրային, հաճախակի հրապարակում են Արցախի հարցի վերաբերյալ «Էքսկլյուզիվ» տեղեկություններ: news.am և lin.am կայքերի մեծ լսարաններն Արցախում կարելի է բացատրել նրանով, որ դրանք գտնվում են հայաստանյան առավել հեղինակավոր կայքերի շարքում, իսկ armeniasputnik.am կայքի մեծ լսարանը Արցախում կարող է բացատրվել նրանով, որ հավանաբար, արցախյան լսարանը համարում է, որ այդ կայքում է հնարավոր գտնել Արցախի հարցի վերաբերյալ ռուսաստանյան դիրքորոշումների առավել լայն և ադեկվատ տեղեկություններ:

ԱՄՆ. ԱՄՆ-ում իր լսարանի ամենամեծ ծավալներն ունեն azatune.am (7.5%) և lin.am (7.3%) կայքերը: Մնացած կայքերի լսարանների ծավալները ԱՄՆ-ում գտնվում են 2.6-6.1% միջակայքում: Եթե հաշվի առնենք, որ ԱՄՆ-ում բնակվող հայերի քանակը՝ 1.3 միլիոնի կարգի, թվաքանակով զիջում է միայն Ռուսաստանում բնակվող հայերի քանակին՝ 2.5 միլիոնի կարգի, ապա պետք է համարել, որ այստեղ հայկական ինտերնետային լրատվական կայքերի նկատմամբ ուշադրությունն ավելի ցածր է, քան Ֆրանսիայում, Ռուսաստանում և հատկապես Գերմանիայում: Հարկ է նշել նաև, որ դիտարկված 17 կայքերից 6-ի դեպքում ԱՄՆ-ը չի գտնվում առավել մեծ լսարան ունեցող երկրների հնգյակում:

ՉԺՀ – Այստեղ իր լսարանի նշանակալի ծավալն ունի aravot.am կայքը՝ 13.1%: Այս կայքի համար ՉԺՀ լսարանը ծավալով երկրորդն է: ՉԺՀ-ում է Iragir.am կայքի լսարանի 6.9%-ը: Դիտարկված 17 կայքերից 15-ի դեպքում ՉԺՀ-ն չի մտնում իր լսարանի մեծության երկրների առաջին հնգյակ:

Իսպանիա. Դիտարկված 17 կայքերից միայն երկուսի՝ armlur.am (2.6%) և aseko.se.am (2.5%) դեպքում է Իսպանիան մտնում իր լսարանի ծավալով երկրների առաջին հնգյակ:

Վրաստան. Ուշագրավ և անհանգստացնող պետք է համարել այն, որ չնայած Վրաստանում բնակվում է մոտ 170,000 հայ, սակայն դիտարկված 17 կայքերից միայն մեկի՝ haynes.ru (2.0%) դեպքում է Վրաստանը մտնում իր լսարանի ծավալով երկրների առաջին հնգյակ: Դժվար է գտնել այս երկույթի գիտականորեն հիմնավորված բացատրություն, սակայն կարելի է

առաջ քաշել ենթադրություն, որ, հավանաբար, հայաստանյան ինտերնետային լրատվական կայքերում վրացահայերը չեն գտնում իրենց համար հետաքրքիր տեղեկություններ:

Այլ երկրներ. Ադրուսակի «Այլ» սյան տվյալները թույլ են տալիս առաջ քաշել հիմնավորված ենթադրություն՝ որքան ավելի բարձր է կայքի «Այլ» երկրներ սյան ցուցանիշը, այնքան ավելի բարձր է հավանականությունը, որ մնացած հավասար պայմաններում այդ կայքն ավելի շատ երկրներում ունի նշանակալի լսարան: Այս ենթադրության պայմանական ընդունման դեպքում կարելի է առաջ քաշել հիպոթեզ, որ դիտարկված կայքերի շրջանակում, երկրների համեմատաբար ավելի մեծ քանակում ունեն նշանակալի լսարաններ՝ armeniasputnik.am (որի լսարանի 25.1%-ի դեպքում հասանելի չեն եղել alexa.com-ի տվյալները), news.am (21.2%), azatutune.am (20.9%) և tert.am (19.7%) կայքերը: Կայքերի անուններն անուղղակիորեն հիմնավորում են առաջ քաշած ենթադրությունը, քանի որ մեծ հավանականությամբ azatutune.am կայքը հեղինակավոր է բազմաթիվ երկրներում, armeniasputnik.am կայքը՝ հետխորհրդային երկրներում, իսկ news.am կայքը՝ իր ամենադիտվող կայքի կարգավիճակում:

Հղումներ կայքերին

Կայքերի այցելությունների և փոխազդեցության տեսակետից կարևոր է բացահայտել, թե ինչպես են այցելուները մուտք գործում տվյալ կայքը: Նկար 1-ում սոցիոգրամի տեսքով ներկայացված է, թե որ կայքերից են առավելապես անցում կատարում դեպի դիտարկվող 17 հայաստանյան ինտերնետային լրատվական կայքեր: Սոցիոգրամում այն կայքը, որից ավելի շատ և ավելի ինտենսիվ են անցում կատարում դեպի այլ կայքեր, ունի ավելի կենտրոնական դիրք՝ գտնվում է ավելի փոքր շառավղով շրջանագծի վրա: Որքան ավելի ինտենսիվ է կատարվում անցումը, այնքան ավելի հաստ է գազաթները միացնող սլաքը: Սոցիոգրամում կայքերը համարակալված են, իսկ դրա աջ կողմի ադրուսակում տրված են կայքերի անունները:


Սոցիոգրամը ցույց է տալիս, որ դեպի դիտարկվող ինտերնետային լրատվական կայքեր անցումներն առավել ինտենսիվ կատարվում են google.com (18) որոնողական համակարգից, որից դիտարկված 17 կայքերը, որպես կանոն, ստանում են իրենց հոսքի 7-9%-ը¹: Ընդ որում՝ azatutune.am (6) կայքը ստանում է իր հոսքի 15.6%-ը: Դիտարկված կայքերը youtube.com

¹ Տվյալ դեպքում միջին արժեքները կիրառելի չեն, քանի որ հայտնի չէ ընդհանուր հոսքում յուրաքանչյուր կայքի ստացած մասնաբաժինը (կշիռը):

(19) նույնպես որոնողական համակարգից ստանում են իրենց հոսքի 4-7%-ը: Այս դեպքում նույնպես առանձնանում է azatutune.am-ը, որը youtube.com-ից ստանում է իր հոսքի 9.3%-ը: Ինտերնետային անցումների երրորդ կարևոր բաշխիչը ոչ թե որոնողական համակարգ է, այլ հայաստանյան առավել նշանակալի news.am (1) կայքը, որից մնացած կայքերը ստանում են մոտավորապես նույնպիսի հոսք, ինչպիսին youtube.com-ից: Այս կայքից առավել շատ հղումներ է ստանում shamshyan.com կայքը՝ 9.1% և tert.am-ը՝ 7.3%: facebook.com-ից կայքերը ստանում են իրենց հոսքի մոտ 3%-ը: Այս դեպքում առանձնանում է newstime.am-ը՝ որը facebook-ից (20) ստանում է իր հոսքի 5.6%-ը: Հայաստանյան լրատվական կայքերին նշանակալի հղումներ են ուղղորդում նաև lin.am-ը (3) և mamul.am-ը (2):

Նկար 1

Հայաստանի ինտերնետային լրատվական կայքերի անցումների սոցիոգրամը: Մլաքները ցույց են տալիս անցումների ուղղությունը: Մլաքի հաստությունը ուղիղ համեմատական է անցումների ինտենսիվությանը



Նկարում գազաթների համարներին համապատասխանող կայքերը

- | | |
|-----------------------|------------------|
| 1. news.am | 2. mamul.am |
| 3. lin.am | 4. shamshyan.com |
| 5. armlur.am | 6. azatutune.am |
| 7. newstime.am | 8. blognews.am |
| 9. tert.am | 10. hynews.ru |
| 11. aravot.am | 12. fragir.am |
| 13. lurer.com | 14. armtimes.com |
| 15. aseko.se.am | 16. 168.am |
| 17. armeniasputnik.am | 18. google.am |
| 19. youtube.com | 20. facebook.com |
| 21. ok.ru | 22. yandex.ru |
| 23. google.ru | 24. google.com |


Ռուսական yandex.ru (22) որոնողական համակարգից իր հոսքի նշանակալի հատվածն է ստանում armeniasputnik.am-ը՝ (17) 15.2%: Առանձնահատուկ կերպար ունի ok.ru (21) կայքը, որից իր հոսքի 49%-ն է ստանում haynews.ru (10) կայքը:

Կայքերն ըստ «հեղինակության աստիճանի»

alexa.com-ը տվյալներ է ներկայացնում, թե որոնք են տվյալ կայքի լսարանի հետ ամենամեծ ընդհանուր լսարան ունեցող առաջին հինգ կայքերը: Լրատվական կայքերը սոցիալական ցանցերի տեսության շրջանակներում ուսումնասիրելիս, այդ տվյալները կարող են կիրառվել՝ հաշվարկելու համար սոցիալական ցանցի տվյալ գագաթի (լրատվական կայքի) «հեղինակության աստիճան» (*Degree Prestige*) ցուցանիշը: Ցուցանիշն իրենից ներկայացնում է տվյալ գագաթը մտնող կապերի քանակը: Ցուցանիշի բովանդակությունը բխում է նրանից, որ որքան շատ կայքերի լսարաններն են տեղեկություններ ստանում նաև տվյալ կայքից, այնքան ավելի մեծ է տվյալ կայքի «հեղինակությունը» դիտարկվող կայքերի լսարանների շրջանում:

Նկար 2

Հայաստանի լրատվական կայքերի սոցիալական ցանցն ըստ լրատվական կայքերի «հեղինակության աստիճան» ցուցանիշի



Նկար 2-ում ներկայացված է դիտարկվող ինտերնետային լրատվական կայքերի սոցիալական ցանցն ըստ կայքերի «հեղինակության աստիճան» ցուցանիշի: Որքան ավելի շատ սլաքներ են մտնում տվյալ կայք, այնքան ավելի բարձր է նրա «հեղինակության աստիճանը» և այնքան ավելի կենտրոնական դիրք է գրավում կայքը սոցիալական ցանցում:

Այս ցուցանիշը հաշվարկելիս հայաստանյան ամենահաճախվող 17 լրատվական կայքերին ավելացվել է ևս 5-ը, որոնք հայաստանյան առավել հաճախվող 50 կայքերի ցանկում չեն, սակայն ունեն բարձր հաճախելիություն: Դրանք են՝ hrparak.am, hetq.am, newsarmenia.am, aysor.am, panorama.am, armenpress.am:

Պատկերից երևում է, որ դիտարկվող 22 կայքերի շրջանում ամենամեծ «հեղինակության աստիճան» ունի aravot.am (10) կայքը, այն լսարանի վերաձածկումներ ունի 22 դիտարկված կայքերից 19-ի հետ: Դրան հետևում են armtimes.am (13) և 168.am (16) կայքերը, որոնք լսարանի վերաձածկումներ ունեն 15-ական այլ կայքերի հետ: Չորրորդը lin.am (3) կայքն է, որը լսարանի վերաձածկումներ ունի 11 այլ կայքերի հետ:

Եզրակացություն

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է, թե ռեսուրսների սղության պայմաններում, տարբեր ուղղորդված հետազոտությունների համար, հայաստանյան որ լրատվական կայքերն է նպատակահարմար կիրառել՝ հնարավորինս նվազագույն քանակով:

Աղյուսակ 3

Հայաստանյան ինտերնետ լրատվության մասնագիտացված հետազոտությունների համար խորհուրդ տրվող կայքերի նվազագույն ցանկ

Հետազոտական ուղղություն	Կայքերի նվազագույն ցանկ
Հայաստանի ինտերնետային լրատվական տիրույթի խորացված հետազոտություններ	news.am, lin.am, azatutune.am, armeniasputnik.am
Ազդեցություն Ռուսաստանի և ԱՊՀ տարածքի լսարանների վրա	armeniasputnik.am, news.am
Ազդեցություն Ֆրանսիայի և ԱՄՆ լսարանների վրա	news.am, azatutune.am
Ազդեցություն Գերմանիայի լսարանի վրա	mamul.am, lragir.am
Ազդեցություն Արցախի լսարանի վրա	news.am, armeniasputnk.am, lragir.am
Հայաստանյան ինտերնետ տարածքի ընդհանուր արժեքային-մշակութային ազդեցություն	blognes.am
Ազդեցություն ՉԺՀ լսարանի վրա	aravot.am, lragir.am
Ազդեցություն Վրաստանի լսարանի վրա	Անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություն:

Հուլիս, 2018թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Մամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հայաստանում ինտենսիվորեն աճում է ինտերնետի՝ որպես լրատվամիջոցի նշանակությունը: Հայաստանյան հասարակությունում ինտերնետի դերի և ազդեցության համապարփակ և խոր գնահատումը բարդ և ռեսուրսատար խնդիր է: Այդ խնդրի լուծման ոլորտում ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է Հայաստանի լրատվական ինտերնետային կայքերի օգտագործման ծավալի նախնական գնահատում: Հոդվածում ներկայացված են մեր երկրի ամենամեծ լսարանն ունեցող լրատվական կայքերի մի քանի բնութագրերի նախնական գնահատման արդյունքները:

**ИССЛЕДОВАНИЕ ВЛИЯНИЯ
ИНФОРМАЦИОННЫХ САЙТОВ АРМЕНИИ**

Самвел Манукян

Резюме

В Армении стремительно растет значение интернета в качестве средства массовой информации. Комплексная и глубокая оценка роли и воздействия интернета на общество Армении – сложная и ресурсоемкая задача. Для эффективного использования ресурсов при решении этой задачи необходима предварительная оценка объема использования информационных интернет-сайтов Армении. В статье представлены предварительные результаты оценки нескольких характеристик информационных сайтов с наибольшей аудиторией.

A STUDY OF INFLUENCE OF THE ARMENIAN NEWS WEBSITES

Samvel Manukyan

Resume

The significance of internet as mass media rapidly grows in Armenia. The comprehensive and deep study of the role and influence of internet on the Armenian society is a hard and resource-consuming task. The efficient utilization of the resources in resolving this problem requires a preliminary assessment of Armenia news websites usage. The article presents the results of preliminary evaluation of several characteristics for the news websites that have the largest audiences in Armenia.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ «ԹԱՎՇՅԱ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նվարդ Մելքոնյան՝ Էլինա Ասրիյան՝

Բանալի բառեր՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, գունավոր հեղափոխություններ, բրենդինգ, մեդիա և վիրտուալ տիրույթ, հերոս, հակահերոս, բրենդ-ինքնություն:

Ժամանակակից սոցիալ-քաղաքական գործընթացներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հաճախ դառնում են այն հիմնական ցուցիչները, որոնք տարբերում են ներկա գործընթացներն անցյալի քաղաքական և սոցիալական ոլորտների դինամիկ փոփոխություններից: Ինչպես նշում է ռուս հասարակագետ Դ.Եվստաֆևը. «Հասարակությունում հաղորդակցության դերի և դիրքի փոփոխությունը նշանակում է քաղաքական վարքի նոր օրինակների՝ պատեռնների առաջացում» [1, с. 342]: Հասարակական հաղորդակցությունների զարգացումը և որակական փոփոխությունն, ըստ էության, իր ներգործությունն ունեցավ «գունավոր հեղափոխությունների» իրագործման տեխնոլոգիաների վրա:

Մեր օրերում երկրագնդի տարբեր կետերում տեղի ունեցած այսպես կոչված «գունավոր հեղափոխություններն» ունեն իրենց յուրահատկությունները, բայց եթե մինչ տեղեկատվական դարաշրջանի զարգացումը դրանք որոշակիորեն այլ սցենարներով են իրագործվել, ապա այսօր հեղափոխությունների ծրագրավորումն ու իրականացումն առանձնանում են կորպորատիվ մարքեթինգից և բրենդինգից փոխառած մի շարք տեխնոլոգիաների համատարած և համակարգված կիրառմամբ: Այսօր քաղաքական մարքեթինգում և բրենդինգում հեղափոխության բրենդի ձևավորումը դարձել է առանձնահատուկ և պահանջված տեխնոլոգիա [2]:

¹Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետ, Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ:

²Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Հանրային քաղաքականության փոխակերպման ժամանակակից փուլում իշխանական ռեսուրսների համար մրցապայքարը սահուն անցնում է մեղիա և վիրտուալ տիրույթներ: Քաղաքական բրենդները՝ որպես ինստրումենտալ ռեսուրս, հաճախ հանդես են գալիս «փափուկ ուժի»՝ «soft power»-ի տեսքով, քաղաքական տարածության մեջ քաղաքական ինստիտուտների, սուբյեկտների, տարածքների, ազգերի և պետությունների դիրքերն ամրապնդելու նպատակով:

«Գովազդի հայր», բրիտանացի մասնագետ Դևիդ Օգիլվիի սահմանման համաձայն՝ բրենդը կարող ենք դիտարկել որպես ոչ շոշափելի հատկությունների՝ անվանման և գնի, պատմության և հեղինակության, ինչպես նաև դրա առաջնիման միջոցների հանրագումար [3]:

Քաղաքական բրենդների կառուցակցումն անընդհատ գործընթաց է, և եթե բրենդը դադարում է երևալ հասարակության մեծամասնության տեսադաշտում, այն ուղղակի դադարում է գոյություն ունենալ: Ուստի, հատուկ կարևորություն են ստանում ոչ միայն բրենդի ձևավորման տեխնոլոգիաները, այլև ավելի շուտ և ավելի շատ՝ դրա կառավարման երկարաժամկետ ռազմավարությունը [4]:

Հանդիսանալով առաջադրված քաղաքական հիմնախնդիրների լուծման հիմնական գործիքներից մեկը՝ յուրաքանչյուր քաղաքական բրենդ պետք է համապատասխանի լսարանի և հետևորդների ակնկալիքներին, պահանջմունքներին և պատկերացումներին, ապահովի արդյունավետ համաչափ հաղորդակցություն: Բրենդի ուժը, հաջողությունը, արդյունավետությունն ու պահանջվածությունն ուղղակիորեն կախված են հետևորդների ընկալման առանձնահատկություններից: Այսինքն՝ քաղաքական բրենդի ձևավորման և առաջնիման փուլերում առավել կարևոր է դառնում դրա գրագետ ու հստակ դիրքավորելու հմտությունը: Քաղաքական բրենդի՝ ֆիրմային ռճի և դրա տարրերի անհրաժեշտությունը համապատասխան ինքնանույնականացման ձևավորման անհրաժեշտությունից է բխում և, ըստ էության, քաղաքական պլատֆորմի ծրագրի փոխարինող է դառնում հեղափոխական ուժերի համար: Բրենդը այստեղ դառնում է և՛ քաղաքական հաղորդակցման պայման, և՛ ինքնին քաղաքական հաղորդակցման գործընթաց, և՛ համապատասխան ընկալումների ձևավորման պարագայում՝ քաղաքական հաղորդակցման արդյունք:

Բրենդ-ինքնության ձևավորման գործընթացի հիմնական տարր են հանդիսանում անվանադրման՝ նեյմինգի (անգլ.՝ *naming*) գործընթացն ու բրենդային անունի (*brand name*) ընտրությունը: Հեղափոխական գործողու-

թյունների համար ընտրված անվանումը, բացի նրանից, որ պետք է հեշտ արտաբերվի, հիշվի, տրամադրվածություն և վերաբերմունք ձևավորի, պետք է ճանաչելի և համապատասխան լինի նմանատիպ քաղաքական ընդվզման ակցիաների շարքում հենց որպես հեղափոխություն, մինևույն ժամանակ պետք է ընդգծի կոնկրետ հենց այս մեկի յուրահատկությունը:

Այսպիսով, հեղափոխության համար պետք է անվանում ընտրվի: Եթե նախկինում հեղափոխությունները պատմության մեջ ամրագրվում էին իրենց աշխարհագրական անվանումներով կամ այն ամսվա անվանումով, որի ընթացքում իրագործվել են, ապա այսօր նեյմինգը թիրախային լսարանի համար հանգուցային հաղորդագրության դեր է կատարում: Այսպես, Հայաստանում ապրիլ-մայիս ամիսներին իրագործված հեղափոխությունը կոչեցին «թավշյա» (*velvet revolution*)՝ իմաստային հղում կատարելով 1989թ. Լեհաստանում, Հունգարիայում, Բուլղարիայում, Չեխոսլովակիայում և այլ վայրերում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխություններին, որոնք արդյունքում բերեցին այդ երկրներում քաղաքական համակարգի փոփոխմանն ու, ըստ էության, սոցիալիստական ճամբարի վերացմանը և, ինչպես 1992թ. ասել էր ճապոնական արմատներով ամերիկացի քաղաքագետ Ֆրենսիս Ֆուկույաման՝ պատմության ավարտին [5]:

Անվանումն ինքնին թույլ է տալիս երևույթը կատեգորիզացիայի ենթարկել, այլ երևույթների դասի մեջ տեղավորել, և տվյալ դեպքում «թավշյա» հասկացությունը ածանցված էր Ջին Շարփի [6] հեղափոխություններ իրագործելու մեթոդաբանությունից, որտեղ հիմնաքարային է հանդուրժողականության գաղափարը, իսկ թավիշն ինքնին զուգորդությունների մակարդակում առաջ է բերում փափուկ ուժի և պասիոնար ըմբոստության կիրառման երանգը: Հեղափոխությունների «թավշյա» բնույթն ընդգծում էր դրանց տարբերությունը դասական (կամ նույնիսկ դասակարգային) հեղափոխություններից. սցենարն անարյուն էր, խաղաղ, բռնություն չենթադրող, դրանք իրագործվում էին զանգվածային բողոքների և անհնազանդության խաղաղ ակցիաների միջոցով, և ինչպես ներքին և արտաքին ՁԼՄ անդրադարձերից մեծամասնության մեջ էր ասված՝ «առանց մեկ ապակի կոտրելու»:

«Թավշյա» բնորոշումը հստակ ուղերձ էր պարունակում թե՛ միջազգային, թե՛ տեղի հանրության համար, թեպետ այլ առանձնահատուկ անուն կիրառելուց զերծ մնալը, խուսափելը մինևույն ժամանակ տարանջատում էր հայաստանյան հեղափոխությունը ժամանակակից այլ բնույթի հեղաշրջումներից, որոնք նոր հազարամյակում հաջորդեցին «թավշյա» հեղափո-

խություններին և դասվում էին «գունավոր» հեղափոխությունների շարքին¹:

Ուշագրավ է, որ բրենդինգի շրջանակներում գրեթե բոլոր մանրուքները հաշվի առած, միասնական հայեցակարգի շրջանակներում գործող հեղաշրջման մասնակիցները, այնուամենայնիվ, որևէ հատուկ անվանում չէին մտածել քաղաքացիական անհնազանդության համար: Առավել հավանական է, որ դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ անցանկալի գուգորդություններ չստեղծվի հետխորհրդային տարածքում իրականացված մի շարք «գունավոր» հեղափոխությունների հետ, որոնք որպես նպատակ դնում էին նաև աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխությունը՝ հակադրվելով ՌԴ ազդեցությանը (Ուկրաինա՝ նարնջագույն հեղափոխություն, 2004թ., Վրաստան՝ վարդերի հեղափոխություն, 2003, Ղրղզստան՝ կակաչների հեղափոխություն, 2005):

Հետաքրքրական է, որ երբ իշխանափոխությունն ըստ էության տեղի էր ունեցել և հռչակվել էր հեղափոխական ուժերի հաղթանակը, ՉԼՄ-ում տարաբնույթ անվանումների կիրառման ոչ այդքան արդյունավետ փորձեր էին արվում. հեղափոխությունն անվանեցին «սպիտակ» (մի կողմից ընդգծելով դրա խաղաղ ու ոչ բռնի լինելը, մյուս կողմից հակադրվելով «գունավոր» որակավորմանը, քանի որ այստեղ «սպիտակ»-ը նշանակում էր անգույն), հիմք ընդունելով հեղափոխության մի շարք սիմվոլիկ գործողություններ և իմֆային ստատիկ տարրեր՝ այն անվանեցին «ուսապարկերի» հեղափոխություն, «բաց ձեռքերի» հեղափոխություն, ինչպես նաև «լայվերի»², քանի որ դա հեղափոխության առաջնորդի հետևորդների հետ հաղորդակցվելու հիմնական ձևն ու հարթակն էր:

Պատմության բեկումնային պահերին, երբ մարդիկ համախմբող խորհրդանիշների պահանջ են զգում, զգալիորեն ուժեղանում է քաղաքական բրենդի սիմվոլիկ բաղադրիչը: Հետևաբար, այդ բրենդները ձևավորելիս անհրաժեշտ է օգտագործել լսարանի համար նշանակալի սիմվոլներ՝ պահպանելով դրանց իմաստը՝ սեմանտիկան: Նոր սիմվոլները ներմուծվում են միայն անհրաժեշտության դեպքում, երբ արդեն հայտնի սիմվոլների օգնությամբ այլևս անհնար է արտահայտել բրենդի համար նշանա-

¹ «Գունավոր» հեղափոխությունների դասակարգումն իրականացվում է ըստ տարբեր հիմքերի. գույնի՝ նարնջագույն, մանուշակագույն, վարդագույն և այլն, ըստ բույսերի՝ վարդ, շագանակ, կակաչ, ծիրան, մայրի և այլն, ըստ շրջապատող աշխարհի օբյեկտների՝ բուլդոզեր, կոմինդր, բուրգ, ֆեյսբուք, թվիթեր և այլն: Դասակարգումը Մ.Բուդիանյի, տե՛ս «Символы цветных революций в составе их именовании» // Концепт, 2014, № 8.

² Անգլ. *live* - կենդանի, սոցիալական ցանցերում առկա գործառույթ, որը մեկ սուբյեկտին հնարավորություն է տալիս դեմ առ դեմ հաղորդակցվել այլ օգտատերերի հետ այստեղ և հիմա սկզբունքով:

կալի տեղեկատվությունը [7, c. 11]: Ինչպես գրել է Յու. Լոտմանը. «Միմվոլը երբեք չի պատկանում մշակութային ինչ-որ կոնկրետ համաժամանակյա կտրվածքի. այն միշտ ուղղահայաց է հատում այդ կտրվածքը՝ գալով անցյալից և գնալով դեպի ապագան» [8, էջ 129-130]:

Սոցիալական փոխգործողության ծագման գործընթացը կապված է խորհրդանիշներին տրված արձագանքի հետ: Միմվոլի ուսումնասիրության տվյալ համատեքստը միավորում է իրականության երկու կողմ՝ նշանային և սոցիալական: Այն երկրորդային նշան է և դրա հետ մեկտեղ՝ սոցիալական և քաղաքական գործողությունների կատալիզատոր, որը միաժամանակ կատարում է սոցիալական ինտեգրացիայի (համախմբման) և նույնականացման գործառույթ:

«Թավշյա» հեղափոխության բրենդինգի ընթացքում խորհրդանիշների կիրառման առումով մի քանի կարևոր խնդիր էր դրված.

- իրագործվող անհնագանդության ակցիաները ճանաչելի դարձնել որպես հենց հեղափոխություն, հիմնականում տարբեր երկրներում իրականացված նմանատիպ գործողությունների հետ զուգորդությունների ձևավորման միջոցով;
- «Թավշյա» հեղափոխությունը ներկայացնել որպես երկրում վերջին տարիների տարաբնույթ բողոքի գործողությունների շարունակություն և հանգուցալուծում՝ նպատակ ունենալով համախմբել երկրի ողջ պրոտեստային ներուժը,
- միավորել և թիրախավորել, համախմբել տարբեր սոցիալական շերտերի, սեռի, տարիքի, տարբեր շահեր ունեցող մարդկանց մեկ միասնական գաղափարի շուրջ:

Բրենդի հիմնական գործառույթներից է նույնականացումը, այսինքն՝ անհրաժեշտ է, որ այս կամ այն ապրանքը, ծառայությունը կամ երևույթը լինեն ոչ միայն յուրահատուկ ու տարբերվող, այլև նույնականացվեն և ճանաչվեն որպես այդպիսին: Երևույթի ճանաչման համար ընկալողին անհրաժեշտ է դրա էական հատկանիշների և տարրերի գիտակցումը: Գիտակցել առարկան կամ երևույթը՝ նշանակում է մտովի անվանել այն, կատեգորիզացիայի ենթարկել, ընդհանրացնել և սահմանել երևույթների կոնկրետ դասի մեջ: Երևույթի գիտակցումը զուգորդվում է անձի կամ հասարակության էմպիրիկ փորձի հետ: Ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցող քաղաքական ակցիաները կարող էին ճանաչելի լինել որպես հեղափոխություն միայն հասարակության կենսափորձում առկա որոշակի

Էմպիրիկ փորձի հետ զուգորդման և արդեն տեղի ունեցած հեղափոխությունների տարրերի վերարտադրման միջոցով: Նման տարրերի թվին կարելի է դասել.

1. Ժամանակակից հեղափոխությունները սովորաբար տեղի են ունենում ընտրություններից հետո [9, c. 145], որոնց լեգիտիմության հարցի քննարկումը կատարվում է դառնում սոցիալական համախմբման՝ մոբիլիզացիայի համար: Դա է պատճառը, որ նման հեղափոխություններն անվանում են էլեկտորալ: Հայաստանում հեղափոխությունը նույնպես տեղի ունեցավ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի՝ ԱԺ-ի կողմից որպես վարչապետ ընտրվելուց հետո, չնայած այն հանգամանքին, որ նախապատրաստվել էր շատ ավելի վաղ: Նորընտիր վարչապետ Ս.Սարգսյանի լեգիտիմության հարցը ընդդիմության կողմից բարձրացվում էր դեռևս 2008 և 2013թթ. ընտրություններից հետո: Կարևոր փաստ է, որ բոլոր երկրներում, որտեղ իրագործվեցին հեղափոխություններ, տեղի էր ունեցել իշխանության հիմնական նախապայմանի՝ լեգիտիմության թիրախավորումը:
2. ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխության ոչ բռնի բնույթը, որը համապատասխանում էր դրան տրված սիրո և համերաշխության հեղափոխություն անվանմանը, այն հիմնական ճանաչելի տարրն էր, որը միավորում էր բոլոր հետխորհրդային պետություններում տեղի ունեցած հեղափոխությունները: Առաջին նման օրինակն ութսունականների վերջին մերձֆալթյան երկրներում տեղի ունեցած հեղափոխություններն էին, որոնք հզոր ԽՍՀՄ-ին հակադրվելու գործընթացում կարող էին պայքարել միայն ոչ բռնի, բայց զանգվածային ուժով:
3. Խաղաղ անհնազանդության ակցիաներ՝ կենդանի շղթաներ՝ սպոնտան պոռթկում թվացող միմյանց ձեռքեր բռնած մարդկանցից, հիմնականում երիտասարդներից բաղկացած շղթաներ, որոնք ծառայում էին որպես միասնականությունն արտահայտելու, ճանապարհները փակելու, երթևեկությունը խոչընդոտելու միջոց: Նմանատիպ բազմաթիվ ակցիաների շարքում կարելի է հիշատակել Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում 1989թ. ամռանը կազմակերպված 600 կմ երկարություն ունեցող կենդանի շղթան, որը ԽՍՀՄ տարածքում առաջին նման փորձերից էր, նաև 2012թ. Մոսկվայում տեղի ունեցած սպիտակ շրջանը, որը, սակայն, ի տարբերություն առաջին նախադեպի, տարբեր պատճառներով արդյունք չտվեց:

4. Վիզուալ հաղորդակցությունների գերակայում՝ ծաղրանկարների, ֆեաբուքյան դեմոտիվատորների, լուսանկարների, պաստառների և տարբեր վիզուալ ինստալյացիաների կիրառումը նույնպես բնորոշ է վերջին ժամանակների հեղափոխություններին, որոնց ընթացքում ողջ համացանցն ու ժամանակակից մեդիա-դաշտը՝ տեղի և միջազգային, ողողվում է տարաբնույթ վիզուալ պատկերներով, որոնք կայուն գուգորդություններ են ստեղծում այդ իրադարձությունների հետ ու դրանք տարբերվող և ճանաչելի դարձնում: Այդ վիզուալ պաստառներում սովորաբար պատկերված էին անհնազանդության գործողություններին մասնակցող մարդկանց տարբեր խմբեր՝ տարբեր տարիքի, սեռի, զբաղմունքի: Օրինակ՝ այդ օրերի ամենահիշվող լուսանկարներից էր երեխաների սայլակներով մայրիկների փակած փողոցը կամ հենց փոքրիկ երեխաների խաղալիքներով՝ հեծանիվներով, մեքենաներով երթևեկության խոչընդոտումը: Տարածվում էին հանրահավաքների կամ երթերի պատկերներ՝ շեշտը դնելով մասնակիցների քանակի վրա՝ դրոշմների օգնությամբ. վերևից նկարած մարդաշատ հրապարակն ու մարդկանց գլխավերևներում ծածանվող ահռելի եռագույն դրոշմն ամենատպավորիչ պատկերներից էին:
5. Ճանաչելիությունն ապահովող կարևորագույն տարրն էր երիտասարդների ներգրավումը բոլոր գործընթացների մեջ, ինչպես Չեխոսլովակիայում, Ուկրաինայում էր, այդպես էր նաև Հայաստանում: Չեխոսլովակիայի հեղափոխությունը տեղի է ունեցել կոմունիստական կուսակցության միակուսակցական կառավարման դեմ, որին մասնակցում էին ինչպես տարիքով քաղաքացիներ, այնպես էլ ուսանողներ: Սակայն «թավշյա հեղափոխության» նախաբանն է դառնում իշխանությունների կողմից արտոնված ուսանողական ցույցը 1989-ի նոյեմբերի 17-ին: Ցույցն ավարտվում է ոստիկանության հետ բախումներով և զանգվածային ձերբակալություններով: Նոյեմբերի 20-ին Չեխոսլովակիայի ուսանողները հայտարարում են դասադուլի մասին: Ըստ էության, հայաստանյան հեղափոխական գործողությունների մեկնարկը նույնպես տրվեց դրանցում ուսանողության ակտիվ ներգրավմամբ՝ 2018թ. ապրիլի 13-ին Գյումրիից Երևան եկած Ն. Փաշինյանի ակցիային իրենց հավատարմությունը հայտնած ԵՊՀ և մի շարք այլ բուհերի ուսանողները դասադուլ հայտարարեցին և միացան անհնազանդության գործողություններին:

Քաղաքական բրենդ-հաղորդակցությունների հաջորդ խնդիրն էր «թավշյա» հեղափոխությունը ներկայացնել որպես երկրում վերջին տարիների տարաբնույթ պրոտեստային գործողությունների շարունակություն և հանգուցալուծում՝ նպատակ ունենալով համախմբել երկրի ողջ պրոտեստային ներուժը:

Ապրիլ-մայիսյան հայաստանյան քաղաքական անհնազանդության այս գործողությունները ներկայացվեցին որպես վերջին տասնամյակում կուտակված հիմնախնդիրների դեմ բողոք, որպես շարունակություն և հանգուցալուծում հաջողություն չունեցած նախորդ շարժումների՝ մոբիլիզացնելով վերջիններիս մասնակիցներին, համախմբելով նրանց: Երթերի և ցույցերի ընթացքում հաճախ հնչում էին նախորդ շարժումներից («Դեմ եմ», «Էլեկտրիկ Երևան», բնապահպանական շարժումներ) ժառանգած կարգախոսներ, օրինակ՝ «Մենք ենք տերը մեր երկրի», «Ոստիկանը մերն է» և այլն:

Այս շարժումն ի սկզբանե տարբերվում էր ՀՀ-ում վերջին տարիներին տեղի ունեցած բոլոր քաղաքական գործողություններից՝ ցույց-բողոքներից, չկային խոստումներ և ծրագրեր, չկային թվեր և փաստարկներ, քաղաքական առաջարկներ: Ըստ էության, նախորդ բոլոր շարժումների ակտիվիստներին և առհասարակ մասնակից քաղաքացիներին միավորող միասնական գաղափարը մեկն էր՝ գործող իշխանությունների դեմ ընդվզումը, մերժումը: Այս շարժումը կազմակերպված էր՝ հստակ հաշվի առնելով նախորդ տարիների որոշ չափով հաջողված և չհաջողված պրոտեստային շարժումների փորձը. այստեղ հստակ գիտակցված էր այն փաստը, որ մարդիկ դուրս են գալիս փողոց հիմնականում ոչ թե հանուն, այլ՝ ընդդեմ: «Քայլ արա՛, մերժի՛ր Մերժին» կարգախոսը դարձավ այն հիմնական ուղերձը, որն ընկալելի ու ողջունելի էր հեղափոխական գործողությունների բոլոր մասնակիցների համար:

«Հակահերոսի» (անտագոնիստի) առասպելի ակտուալացումն առհասարակ իմիջային և բրենդային հաղորդակցությունների հիմնական տեխնոլոգիաներից է. եթե ուզում ես ընդգծել առաջարկիդ առանձնահատուկ, տարբերվող որակները, պետք է առաջարկես համեմատական: Ընդհանրապես, թշնամու կերպարն այս կամ այն չափով անհրաժեշտ է ցանկացած հասարակությանը սեփական ինքնության ձևավորման, ինքնանույնականացման և համախմբման համար: Թշնամու հետ պայքարի առասպելը ազգային առաջնորդության հիմքում է ի սկզբանե, քանի որ առանց հաղթանակի չկա նաև երկրի, հասարակության՝ սոցիումի վերածնունդ: Հակահերոսը կամ թշնամին կարող է նաև լինել թաքնված՝ լատենտ, անանուն:

Թշնամիներն առաջին հերթին սոցիալ-հոգեբանական կոնստրուկտ են, քանի որ իբրև այդպիսիք կարող են հանդես գալ և՛ առանձին գործիչներ, քաղաքական կամ այլ սոցիալական խմբեր, երկրներ, և՛ թշնամիները կարող են իրականում նույնիսկ գոյություն չունենալ [8, էջ 129-130]:

Սովորաբար թշնամու կերպարի կառուցակցման տեխնիկան որոշ չափով տարբերվում է առասպելում հերոս-փրկչի հաղթահարման համար նախատեսված փորձությունների կառուցակցումից: Ինչպես նշում է ամենախոշոր PR-ընկերություններից մեկի (*Edelman*) հիմնադիր, ամերիկացի PR-մասնագետ Դենիել Էդելմանը. «Հասարակության մեջ, ինչպես և ողջ աշխարհում, մշտապես պահպանվում է որոշակի ոչ բարեկեցիկ վիճակ: Բայց և այնպես, քաղաքական գործչի նպատակներից է կախված՝ արդյո՞ք նա կնկատի այդ անբարեկեցիկ վիճակը, արդյո՞ք դա կհամարի հիմնախնդիր և որքանով լուրջ կգնահատի» [10]: Հայաստանյան «Թավշյա» հեղափոխության ընթացքում այդ հիմնախնդիրները ոչ միայն նկատվեցին և մատնանշվեցին, այլև ամբողջությամբ պատճառաբանվեցին գործող իշխանությունների մեղավորությամբ, ավելին՝ անձնավորվեցին՝ պերսոնիֆիկացվեցին մեկ հակահերոսի՝ ՀՀ երրորդ նախագահ և իշխանափոխության ակցիաների ընթացքում դեռ գործող վարչապետ Սերժ Սարգսյանի կերպարով, որին մերժելով, ըստ էության, մերժվում էր արատավոր ողջ համակարգը:

Հեղափոխական բրենդինգի սիմվոլիկ դաշտում «հակահերոսի» առասպելը հմտորեն համադրվեց «հերոս-փրկչի» մասին առասպելի հետ: «Հերոսի» մասին առասպելը հատկապես կարևորություն է ստանում հասարակության ծայրահեղ անկայունության ժամանակաշրջաններում՝ սոցիալ-տնտեսական բազում պրոբլեմների առկայության, գոյություն ունեցող կարգերի, իշխանության նկատմամբ անվստահության պայմաններում: Այսպիսով, ձևավորվում է ուժեղ հերոսի, առաջնորդի, խարիզմատիկ լիդերի պահանջը: Նման առաջնորդին են վերագրվում հասարակության մեջ իրականում առկա բոլոր դրական փոփոխությունները, նաև նորերն իրականացնելու կարողություններն ու հնարավորությունը: «Հերոս-փրկչի» առասպելը որոշակի խարիզմատիկ հատկություններ է վերագրում կոնկրետ կերպար-պերսոնաժներին. հերոսը պետք է օժտված լինի հրամանատարի անգերազանցելի տաղանդով, բարձր բարոյական հատկանիշներով և այլ որակներով: «Թավշյա» հեղափոխության համատեքստում արդիականացվեցին հետևյալ արժեքները՝ ճշմարտություն, արդարություն, ազատություն բռնապետից, հանդուրժողականություն, որոնք էլ դարձան «Թավշյա» հեղափոխության հիմնական խորհրդանիշները:

Ըստ սիմվոլների այս շարքի, խորհրդանիշ անձը՝ սիմվոլ-պերսոնը, անշուշտ, հեղափոխության բրենդի կարևոր մաս կազմող, այդ հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանն էր՝ իր իմիջային ռազմավարությամբ հանդերձ: Առաջնորդի իմիջը հակադրվում էր իշխանության ներկայացուցիչների իմիջին՝ ստեղծելով կոնտրաստի սոցիալ-հոգեբանական էֆեկտը և նմանության զուգորդությունն առաջացնելով հեղափոխության և պայքարի խորհրդանիշ անձանց հետ, օրինակ՝ շարժման ողջ ընթացքում Փաշինյանին համեմատում էին Մահաթմա Գանդիի, Նելսոն Մանդելայի, Էռնեստո Չե Գևարայի հետ:

Ըստ շարժման ժամանակագրության՝ այն սկսվեց ավելի վաղ, քան ժողովրդական ահնազանդությունը: Փաշինյանը մարտի 31-ին Գյումրիի Վարդանանց հրապարակից սկսեց «Իմ քայլը» ակցիան: Հայաստանի տարբեր քաղաքներում ոտքով շրջելուց հետո նա եկավ Երևան՝ առանց կոստյումի, զինվորականի հագուստով և ուսապարկով: Տպավորություն էր, թե նա ուղղակի և անուղղակի առումներով երկար ճանապարհ անցած, տարբեր իրավիճակներում եղած, դժվարություններ տեսած, անարդարություններից հոգնած մարդ է, և կիրառված սիմվոլիկան հասանելի և հասկանալի էր լայն զանգվածների համար:

Առհասարակ, արտաքին պատկերումը սիմվոլում կապվում է դրաներքին գաղափարական բովանդակության հետ, այդ պատկերումը կարող է լինել աննշան, սխեմատիկ և այլն, սակայն այն անպայման պետք է լինի էական և մշտապես ընդգծի, որ արտաքինն այստեղ ներքին էությունն է [11]: Այս տեսանկյունից Փաշինյանի արտաքին իմիջում կիրառված խորհրդանիշները շատ խոսուն էին և ընթեռնելի, դրանք հստակ ինտերպրետացիայի էին ենթարկվում. մեկնաբանվում էին ընկալող լսարանի կողմից և համապատասխան արձագանք առաջացնում: Փաշինյանի վիզուալ կերպարը պետք է ընդգծեր անցած բարդ ուղին, հասունությունն ու փորձը: Մորուքն այդ հարցերը լուծում էր՝ տարիք և առնականություն հաղորդելով, միաժամանակ հիշեցնում էր դարաբաղյան շարժման հերոսներին: Զինվորական շապիկը բանակի, անվտանգության խորհրդանիշ է, մորուքը՝ ֆիդայու կերպարի ասոցիացիա, ինչն ավելի ուշ հստակ հղում բերեց ազգային ամենասիրված ու ընդունելի հերոս Մոնթեի կերպարին: Հատկանշականն այն է, որ տեղի ունեցան Մոնթեի կերպարի՝ որպես խորհրդանիշի, վերընթերցումն ու մեկնաբանումը, նա այստեղ ընկալվեց ոչ թե որպես Արցախյան պատերազմի, այլ պայքարի և ինքնագոհության հերոս-սիմվոլ:

«Հերոսի» առասպելում հաճախ առաքելության իրականացման ընթացքում նրան օգնության են գալիս կախարդական գործիքները. այս դեպքում քաղաքացիական ըմբոստության գործընթացում Փաշինյանի համար նման ատրիբուտ էր ուսապարկը, որը նրա հետ միասին ներկա էր (առ այսօր էլ այդպես է) ամենակարևոր իրադարձություններին՝ Ս.Սարգսյանի հետ ձախողված բանակցություններին, երթերին, հրապարակային ելույթներին և այլն: Ֆեյսբուք սոցիալական ցանցում նույնիսկ հայտնվեց «Փաշինյանի ուսապարկ» էջը, որն այսօր ունի հազարավոր հետևորդներ: Նման երևույթը քաղաքական բրենդինգում և իմիջմեյքինգում նոր չէ, այն կարելի է անվանել իմիջի ստատիկ ատրիբուտ, որն ինքնին այնքան ճանաչելի է դառնում, որ ընդամենը այդ ատրիբուտի վիզուալ ներկայացումը բավական է, որպեսզի ի հայտ գա և արդիականանա ըստ տարածքային առընթերության գուգորդության վրա հիմնված կապը (օրինակ՝ Ու.Չերչիլի սիգարը, Մ.Թեթչերի պայուսակը, Ի.Ստալինի չիբուխը և այլն): Նման ատրիբուտի դեր էր խաղում նաև «Դուխով» գրառամբ գլխարկը (որը միանգամից մասսայականացվեց)¹, որը Փաշինյանը կրեց 24-ժամյա ազատագրկումից դուրս գալու հաղթական օրը:

Հեղափոխական գործողությունների շուրջ պրոտեստային ներուժը համախմբելու նպատակով կիրառված «հերոսի» և «հակահերոսի» առասպելների հակադրման հետ մեկտեղ արդիականացվեց նաև «Մենք-Նրանք» դիխոտոմիան, որն, ըստ էության, մերօրյա բոլոր գունավոր հեղափոխությունների կառավարման հիմքում է ընկած: «Մենք»-ի մեջ համաժողովրդական ըմբոստության ներկայացուցիչներն են, «Նրանք»՝ մնացած բոլորը: ՀՀ հեղափոխության պարագայում «Նրանք»-ի մեջ մտնում էին ոչ միայն գործող իշխանության ներկայացուցիչները, այլև բոլոր նրանք, ովքեր չէին գտնվում գործողությունների հրապարակում և բացահայտ չէին սատարում հեղափոխականներին: Հեղափոխության կիզակետում գտնվող մարդկանց վարքի հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ նրանց մեջ ի հայտ էր եկել կոնֆլյուենսիա հոգեբանական երևույթը: Կոնֆլյուենսիան իրականության ընկալման աղճատման տեսակ է, որը որակավորում է անհատի և շրջապատի միջև առկա սահմանների բացակայության ընկալումը, անձի ընկալմամբ՝ նա և արտաքին շրջապատը դառնում են մեկ

¹ «Դուխով» բրենդային գրառման հեղինակը *Bet Construct* ընկերության արթ-տնօրեն Արա Մսակյանն է, որի խոսքերով՝ «դուխով»-ը հատուկ ֆուտբոլի աշխարհի առաջնության համար ստեղծված գովազդային արշավի կոնցեպտի հիմքն էր, սակայն շարժման հենց սկզբում որոշվեց «դուխով»-ը նվիրել հեղափոխությանը:

ամբողջություն: Նման միավորումը տեղի է ունենում ծիսական գործողությունների ժամանակ, և անհատը խմբի մեջ ամբողջական միավորման պարագայում զարմանալիորեն զգում է, որ ինքը հենց այդ ժամանակ է այնպիսին, ինչպիսին որ կա: Հենց սահմանների բացակայության ընկալմամբ է պայմանավորված էկզալտացաված հույզերի և խորքային ապրումների առկայությունը: Կոնֆլուենսիայի մեջ գտնվող մարդը պահանջում է միանմանություն և չի հանդուրժում որևէ տարբերություն, իսկ եթե նկատում է դրանք, ապա ագրեսիայով է պատասխանում:

Հայաստանյան «Թավշյա» հեղափոխությունն ուղեկցվում էր սոցիալական ցանցերում իրագործվող ոչ պակաս ակտիվ թվային հեղափոխական գործողություններով, նախ և առաջ՝ Ֆեյսբուքում: Համացանցային այս հարթակում ստեղծվեց պատրանքային մեծամասնության գաղափարը, վիզուալ և վերբալ կոչեր էին արվում, հեղափոխական սլոգաններ ու կարգախոսներ տեղադրվում, որոնք փոփոխվում էին արագ փոփոխվող իրողություններին համահունչ: Այլ տեսակետը դարձավ աննկատ և անտեսվող, ինչի համար կար մի քանի պատճառ՝ կոնֆորմիզմ, մեծամասնության մեջ գտնվելու հոգեբանական անվտանգություն, որի մասին խոսել էին դեռևս Ս.Աշը [12], Է.Նոյեյ-Նոյմանը [13] և այլք: Այլակարծությունը ծաղրի էր ենթարկվում, ագրեսիա էր առաջացնում և ընկալվում որպես դավաճանության հոմանիշ: Աշխարհի ընկալումը, ինչպես հաճախ է լինում անցումային և ճգնաժամային փուլերում, հանգեցվեց դիխոտոմիկ պատկերացումների՝ սևի և սպիտակի, չարի և բարու հակամարտության. արդիականացվեց և սկսեց տարածվել «Մենք-Նրանք» առասպելային՝ քաղաքական հաղորդակցություններում արթնացնելով և ակտիվացնելով մի շարք առասպելներ, որոնց միջոցով էլ փորձ արվեց լուծելու քաղաքական բրենդինգում սիմվոլիկայի կիրառման տեսանկյունից երրորդ կարևոր խնդիրը՝ մեկ միասնական գաղափարի շուրջ տարբեր սոցիալական շերտերի, սեռի, տարիքի, տարբեր շահեր ունեցող մարդկանց միավորումը և համախմբումը:

«Թավշյա» հեղափոխության համատեքստում արդիականացվեց նաև միավորման՝ «միասնության» առասպելը, որը նույնականացման մասին առասպելի տեսակ է: Այն պահից, երբ սոցիալ-մշակութային ճգնաժամը տատանում է նույնականացման համակարգի կայունությունը, մարդն անմիջապես փնտրում է հենարան այս կամ այն խմբի կամ էթնոսի հետ նույնացման մեջ: Շատ հաճախ խոսքը ռեֆերենտային խմբի հետ միավորման մասին է: Նման օրինակներից է ուկրաինական ճգնաժամը, որի լուծման հնարավորությունը ուկրաինացիները տեսնում էին Եվրամիությանն

անդամակցելու գործում: Ինչ վերաբերում է հայաստանյան թավշյա հեղափոխությանը, ապա միավորման միջին աշխատեց հոգուտ ներքին համախմբանը «Մենք»-ի ներքո:

Առասպելական աշխարհընկալման դիտանկյունից արդիականացվեց նաև «ժողովրդի իշխանության» մասին առասպելը, որը, մի կողմից, վկայում էր այն մասին, թե ինչ գիտի և ինչ է մտածում ու երագում ժողովուրդը: Մա նման է այն դեպքերին, երբ հեքիաթներում թագավորը որոշում է այցելել հասարակ ժողովրդին և իմանալ, թե որն է ժողովրդի ցանկությունը, և հետո պայքարել հանուն այդ ցանկության: «ժողովրդի կամքի» մասին առասպելը ներառում է ճշմարտության գաղտնիքը, որը պետք է փնտրել ու հայտնաբերել: Այսպես Փաշինյանն իր գրեթե բոլոր ելույթներում դիմում էր ժողովրդին անձամբ՝ «ինչպես ժողովուրդը կորոշի, ինչպես ժողովուրդը կասի»: Մա կարելի է դիտարկել և՛ որպես «թավշյա» հեղափոխության պատասխանատվությունը ժողովրդի հետ կիսելու փորձ, և՛ որպես հենց ժողովրդական առաջնորդի, հետագայում՝ ժողովրդի ընտրած վարչապետի կերպարի ամբողջացում:

Ժողովրդական առաջնորդի կեպարի կառուցակցումն ինքնին ենթադրում է նման կոչ-դիմումներ, որոնցով նա հիմնավորում է իր հետագա քայլերը՝ ցույց տալով, որ իրականացնում է ժողովրդի սպասումները, հասկանում նրա հոգսերը, կիսում խնդիրները: Ի դեպ, ժողովրդին դիմելու հաջող փորձը նախկինում կիրառել են նաև Մանդելան, Գանդին և ուրիշներ: Ժողովրդին հղվելով՝ նա ցույց է տալիս, որ պատրաստ է լսել և հաշվի նստել յուրաքանչյուրի կարծիքի հետ:

Հենց այս առասպելների ակտիվացման գործընթացում էլ իրականացվում էր բավական արդյունավետ թիրախավորում՝ մասնակիցների տարբեր լսարանների սեգմենտացիա: Հեղափոխական գործողությունների ընթացքում կիրառվող սիմվոլիկան հիմնականում հստակ հասցեագրված էր տարբեր թիրախային լսարաններին: Տարածքային առումով «Քայլ արա՛» կարգախոսին համահունչ հեղափոխության ողջ ընթացքը նման էր մի մեծ ճանապարհորդության. այն լոկալիզացված չէր որևէ վայրում, ավելին՝ հեղափոխությունը քայլում էր Հայաստանով՝ տարբեր մարզերով, մայրաքաղաք Երևանի տարբեր համայնքներով, փողոցներով՝ որոշ առումով անխուսափելի դարձնելով այդտեղ բնակվող մարդկանց մասնակցությունը:

Մյուս կողմից՝ և՛ հայաստանյան քաղաքական պատմությունից վերցված, և՛ այլ երկրների հեղափոխական մշակույթներից փոխառած սիմվոլիկ գործողությունները, կարգախոսները, վանկարկումները, ծեսերը հստակ

ուղղված էին հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչներին՝ ներգրավելով նրանց դրանցում և միավորելով:

Օրինակ՝ հեղափոխության ընթացքում կիրառված ֆուտբոլային սիմվոլիկան. իսլանդական ֆուտբոլասերների ծափի ձայնն ու «հո՛ւ» վանկարկումը, վուլուգելների աղմուկն ապահովում էին ազարտը և առավել ուղղված էին երիտասարդներին: «Դեմ ես Մերժին, սիգնալ տուր» ակցիայի թիրախային լսարանը հիմնականում մեքենա վարող տղամարդիկ էին, իսկ, օրինակ՝ կաթասների և շերեփների գիշերային աղմուկի լսարանը՝ կանայք: Առավել վառ թիրախավորումն արտահայտվում էր հեղափոխական բրենդինգի սիմվոլ-հնչյուն հանդիսացող երգերում՝ հեղափոխության ռոքային հիմնը՝ Փաշինյանի խոսքի հիման վրա գրված Հայկ Ստվերի «Իմ քայլը», փոփ-երգիչներ Թաթա Սիմոնյանի «Հայաստան, բարն՛», Արամեի «Հայի կողքին» երգերի, Հրագի «Դուխով» երգի հասցեատերերը տարբեր լսարաններ ու սոցիալական խմբեր էին:

Քաղաքական սուբյեկտների միջև հաղորդակցությունը համարվում է հաջողված, եթե ստացողն ընկալում է ուղարկողի հաղորդած տեղեկատվությունն այն իմաստով, որն ի նկատի ունենում ուղարկող կողմը: Այդ հաղորդակցությունը տեղի է ունենում որոշակի քաղաքական համատեքստում՝ որոշակի փոխկապակցված սիմվոլների և դրանց համակարգերում, որոնք օժտված են նշանակությամբ: Եվ այս առումով քաղաքական բրենդ-հաղորդակցման իրականացման ընթացքում հստակ կարելի է նկատել հեղափոխական բրենդի, բրենդի սիմվոլիկայի ընկալման ողջ դինամիկան և դրա փուլայնությունը.

- հեղափոխության ամբողջական պատկերի գիտակցում,
- կատեգորիզացիա, անվանում (անվանակոչում),
- կառուցվածքային տարրերի՝ տարբեր խորհրդանիշների և անձանց անվանում և կատեգորիզացիա,
- մեկնաբանում [14, c. 145-150]:

Նախ՝ սկսվեցին որոշակի քաղաքական գործընթացներ, որոնք որոշ ժամանակ անց գիտակցվեցին որպես հեղափոխություն կամ հեղափոխական, քանի որ ճանաչվեցին էմպիրիկ փորձում առկա հեղափոխությունների որոշակի տարրեր, այնուհետև տրվեց անվանում արդեն որպես հեղափոխություն ճանաչված երևույթին, և երրորդ փուլում արդեն հեղափոխություն իրագործողները ճանաչվեցին որպես առաջնորդներ, իսկ Ն.Փաշինյանը հասարակության կողմից ընկալվեց որպես վարչապետ: Ավելին,

տվյալ օրերին միմյանց հետ կապ չունեցող երևույթներն ու ակցիաները միավորվեցին միևնույն հեղափոխության համատեքստում, և ցանկացած նոր քաղաքական կամ քաղաքացիական գործողություն տեղադրվում էր «երկրում իրողություններ են փոխվել» շրջանակի ներքո: Մա արդեն երևույթի ընկալման չորրորդ՝ մեկնաբանման փուլն էր: Այս վերջին փուլում մարդկանց և փորձագետների կողմից որոնվում էին այս կամ այն տեղի ունեցածի և իրենց կողմից որպես հեղափոխություն գիտակցված գործողության մեկնաբանությունները: Մեկնաբանման փուլն արդիական է և շարունակվում է մինչև այսօր:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թավշյա հեղափոխության՝ որպես բրենդի, հաջողությունն ու պահանջվածությունը պայմանավորված էին.

- անձի ընկալման հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելու հանգամանքով,
- տվյալ հեղափոխության՝ որպես երկրում առկա քաղաքական հիմնախնդիրների լուծման միակ հնարավորություն, ներկայացման և մատնանշման հաջողված բանալի հաղորդագրություններով,
- թիրախային լսարանի պահանջմունքներին, սոցիալական սպասումներին, ակնկալիքներին ու ապագայի մասին պատկերացումներին համապատասխանության փաստով,
- թիրախային լսարանի հետ արդյունավետ և համաչափ հաղորդակցության ապահովման մեխանիզմներով:

Մեպտեմբեր, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Евстафьев Д.*, Интегрированные коммуникации как глобальная реальность XXI века, М., 2013.
2. *Юраков М.*, Брендинг «цветных революций», 2015, <http://www.politonline.ru/comments/22881415.html>
3. *Огилви Д.*, Огилви о рекламе, М., Издательство Эксмо, 2003.
4. *Казимирчик Л.*, Политический бренд как инструмент современной публичной политики на федеральном и региональном уровнях, автореферат диссертации, М., 2015.
5. *Фукуяма Ф.*, Конец истории и Последний человек, М., 2004.
6. *Шарп Д.* (2005), От диктатуры к демократии: Стратегия и тактика освобождения, М., с. 76-77.

7. *Лотман Ю.М.*, Символ в системе культуры, Труды по знаковым системам, журнал “Ученые записки Тартусского государственного университета”, вып. 754, Тарту, 1987.
8. *Մելքոնյան Ն.*, Քաղաքական իմիջ. մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ: Դասընթաց հասարակագետների համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2007թ., էջ 129-130:
9. *Ситнова И.*, Сравнительный анализ «цветных революций» в странах постсоветского пространства, «Власть», 05, 2011, с. 144-147.
10. *Edelman M.*, 1971: Politics as Symbolic Action: Mass Arousal and Quiescence, N.Y., Academic Press, 1971.
11. *Մելքոնյան Ն.*, Քաղաքական PR և իմիջմեյքինգ, Երևան, 2012, էջ 36-40:
12. *Asch S.E.*, 1952: Asch, S. E., Social psychology. Englewood Cliffs, NJ: Prentice-Hall, 1952.
13. *Noelle-Neumann E.*, The Theory of Public Opinion: The Concept of the Spiral of Silence. In J. A. Anderson (Ed.), Communication Yearbook 14, 256-287, Newbury Park, CA: Sage, 1991.
14. *Асриян Э.В.*, Особенности восприятия визуальной информации в учебном процессе, Развитие личности в контексте стандартизации образования: обновление смыслов, Сборник научных статей по итогам проведения международного круглого стола, 2017.

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ «ԹԱՎՇՅԱ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԲՐԵՆԴԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նվարդ Մելքոնյան, Էլինա Ասրիյան

Ամփոփագիր

Աշխարհի տարբեր անկյուններում մեր օրերում տեղի ունեցող բոլոր հեղափոխություններն ունեն իրենց առանձնահատկությունները: Հայկական թավշյա հեղափոխության բրենդինգի գործընթացում մի քանի կարևոր խնդիր էր առաջադրված՝ անհնազանդության ակցիաները ճանաչելի դարձնել որպես հեղափոխական գործողություններ, թավշյա հեղափոխությունը ներկայացնել որպես երկրում վերջին տասնամյակի ընթացքում տեղի ունեցող պրոտեստային ակցիաների շարունակություն և արդյունք: Վերջին խնդիրը վերաբերում էր ընդհանուր գաղափարի շուրջ տարբեր սոցիալական սեգմենտներ միավորելու անհրաժեշտությանը:

ОСОБЕННОСТИ БРЕНДИНГА АРМЯНСКОЙ БАРХАТНОЙ РЕВОЛЮЦИИ

Нвард Мелконян, Элина Асриян

Резюме

Все революции, которые в наши дни происходят в разных точках мира, имеют свои особенности. В процессе брендинга армянской бархатной революции было поставлено несколько важных задач: сделать акции неповиновения узнаваемыми в качестве революционных действий, представить бархатную революцию как продолжение и итог протестных акций, которые проводились в стране на протяжении последних десяти лет, и последняя задача касалась необходимости объединить разные социальные сегменты вокруг общей идеи.

THE PECULIARITIES OF ARMENIAN VELVET REVOLUTION BRANDING

Nvard Melkonyan, Elina Asriyan

Resume

Any of the revolutions taking place nowadays in different parts of the world has its own peculiarities. In the process of branding the Armenian Velvet Revolution, several important objectives were set: to make actions of disobedience and protests recognizable as revolutionary actions, to present the velvet revolution as a continuation and result of the protest actions that took place in the country over the past ten years, and finally, the need to unite different social segments around a common idea.

ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

*Վաչիկ Բրուտյան**

*Բանալի բառեր*¹ էթնոմանկավարժություն, իրավադաստիարակչական ներուժ, էթնոգիտելիք, էթնոհոգեբանական, էթնոիրավական, մանկավարժական մշակույթ, անձի ձևավորում:

Հասարակության առաջընթացի կարևորագույն պայմաններից մեկը սերունդների պատմական ժառանգորդության պահպանումն է: Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, համարվել է դարերով կուտակված մարդկային փորձի փոխանցման միջոց, որը յուրաքանչյուր ժողովրդի մեջ դրսևորվում է անկրկնելի և յուրօրինակ բնութագրով: Ժողովրդական մանկավարժությունը, արտացոլելով մանկավարժական գիտելիքի որոշակի մակարդակ, մարդկության հոգևոր առաջընթացի որոշակի պատմական փուլում հանդիսացել է այն հիմքը, որի վրա ծագել ու զարգացել է մանկավարժական գիտությունը: Սակայն այնպես, ինչպես պատմական զարգացման ընթացքում գեղարվեստական գրականության ծագմամբ չվերացան բանահյուսական ստեղծագործությունները, այդպես նաև մանկավարժական գիտությունը ժողովրդի առօրյա կյանքից ամբողջովին դուրս չմղեց ավանդույթի ուժ ստացած նրա մանկավարժական հայացքները և գիտելիքները: Մանկավարժական գիտությունը և ժողովրդական մանկավարժությունը, մտնելով բարդ փոխգործակցության մեջ, փոխադարձաբար նպաստել են մեկը մյուսի հարստացմանը՝ ստեղծելով մի միասնական ոլորտ, որը կարելի է կոչել մանկավարժական մշակույթ:

Հասարակական զարգացման արդի փուլում կուտակվել են բազմաթիվ հիմնախնդիրներ՝ պայմանավորված սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման դժվարություններով: Ամենից առաջ դա միջէթնիկական և միջկրոնական հարաբերություններում, ինչպես նաև մարդու և էկոհամակարգերի միջև լարվածության աճն է: Դա նաև միջսերն-

* Մանկավարժական գիտությունների դոկտոր:

դային կապերի ձևախեղումն է: Այս բոլորը կապված են սոցիալ-մշակութային ավանդական նորմերի և արժեքների կերպափոխությունների հետ:

Արդի պայմաններում հասարակություններում սրությամբ ծառայած է այնպիսի անձի ձևավորման հիմնախնդիրը, որն ունակ է իր համար ընտրել հանրորեն նշանակալից նորմեր ու արժեքներ՝ հայրենասիրություն, քաղաքացիականություն, մարդասիրություն և այլն, և ունակ է տիրապետելու սոցիալ-մշակութային որոշակի պաշարների ու էթնոմշակութային փորձի, ինչը թույլ կտա նրան հաջողությամբ կողմնորոշվելու և ինքնորոշվելու բազմամշակութային միջավայրերում, հանդուրժողականությամբ վերաբերվելու այլ մշակույթների և կրոնների ներկայացուցիչների:

Ազգամշակութային ավանդույթների հանդեպ մանկավարժների ցուցաբերած հետաքրքրությունը, այսպիսով, պատահական չէ: Ազգային ավանդույթներում կուտակված է մանկավարժական նշանակալից ներուժ, որը կարող է ծառայել իբրև գործուն միջոց հոգևոր և բարոյական դաստիարակության համար [1, c. 11]:

Էթնոմանկավարժությունը մարմնավորում է հասարակական հարաբերությունների մարդասիրական և սոցիալ-բարոյական նորմերի կարգավորված ամբողջությունը, մանկավարժական գիտելիքները և դաստիարակչական փորձը, որոնք արտացոլված են ժողովրդական բանավոր ստեղծագործություններում, սովորույթներում, ծեսերում և այլն: Դրանք տարբեր ազգերի ժողովրդական մանկավարժության տեսական իմաստավորումներն են, բազում սերունդների միասնական ստեղծագործությունը, դաստիարակության մշակույթը՝ ժողովրդի հազարամյա փորձով հղկված:

Ժողովրդական ավանդույթների, կրոնական մշակույթներում ամրագրված բարոյախոսությունների, բանահյուսության, նախնիների վարքով և գործունեությամբ ձևավորված իրավական փորձի միջոցով էթնոմանկավարժական գիտելիքներն էական ազդեցություն են գործում դաստիարակչական բազմաթիվ խնդիրների լուծման, իրավունքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորման վրա: Դրանցում խտացված կերպով արտահայտված են անձի լավագույն գծերը և որակները, հասարակության մեջ ընդունված բարոյա-իրավական չափանիշները [2, c. 94]:

Էթնոմանկավարժության դաստիարակչական ներգործությունը դրսևորվում է նախորդ սերունդների գիտելիքների, ավանդույթների և սոցիալական վարքի ձևավորված սովորույթների յուրացմամբ: Այս կապակցությամբ վերջին ժամանակներում ավելի ու ավելի հաճախ է գործածվում «էթնոգիտելիք» հասկացությունը: Մեր ըմբռնմամբ՝ «էթնոգիտելիք» հասկա-

ցությանը կարող է վերաբերել ցանկացած այլ հասկացություն, որը կապ ունի էթնիկական երևույթների հետ: Այնուամենայնիվ, կախված այն բանից, թե ինչ տեսանկյունից է ուսումնասիրվում այդ գիտելիքը, ինչպիսի կողմեր են բացահայտվում, էթնոգիտելիքը կարող է լինել էթնոգրական, էթնոմանկավարժական, էթնոհոգեբանական, էթնոիրավական և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ հատկապես ավանդույթներում և սովորույթներում են ամրագրված լինում պատմականորեն ձևավորված իրավական սկզբունքներն ու նորմերը, հարաբերություններն ու փոխհարաբերությունները, ինչպես նաև այն իդեալները, որոնք հաստատված են հանրության ներսում և ապահովում են նրա գոյատևումն ու ակտիվ գործառնումը պատմական երկար ժամանակի ընթացքում [3, c. 43]:

Էթնոգիտելիքի իմաստի ըմբռնման և էության մեկնաբանությանը կարող է օգնել հոգեկանի զարգացման վերաբերյալ Լ.Ս. Վիգոտսկու մշակութա-պատմական տեսությունը: Դիտարկելով մարդու հոգեկանի զարգացումը որպես միջնորդավորված գործընթաց՝ նա ապացուցեց, որ անձի կողմից մշակութա-պատմական արժեքների յուրացումը, ինչպես նաև հոգեկան գործընթացների ձևավորումն իրականանում են երկու անգամ և տարբեր մակարդակներում. սկզբում՝ սոցիալական մակարդակում (միջհոգեբանական գործառնություն), այնուհետև՝ անհատական մակարդակում (ներհոգեբանական գործառնություն). սկզբում՝ մարդկանց հետ շփումներում, այնուհետև՝ անձի ներսում: Հետևաբար, բոլոր հոգեկան բարձրագույն գործընթացների հիմքում ընկած են հասարակական, այն է՝ մարդկանց, խմբերի, էթնոսների հարաբերությունները [4]:

Սոցիալ-մանկավարժական առումով վերոնշյալ երևույթները դրսևորվում են որպես որոշակի տեղեկատվություն կամ միջոց, որն անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել: Բացի այդ՝ նշված երևույթներն իրենց մեջ ամփոփում են ոչ միայն նախորդ սերունդներից փոխանցված գիտելիքները, այլև մտածողության եղանակները և անհատի բնակության վայրի՝ ազգամշակութային որոշակի միջավայրի առանձնահատկությունները:

Ավանդույթներում, սովորույթներում, բարքերում առանձնապես ուժեղ և կենսադիմացկուն է սոցիալական հիշողության գործառնությունը. դա նոր սերնդին տեղեկատվության, սոցիալական փորձի փոխանցման գործառնություն է: Այս առումով ավանդույթները, սովորույթները, բարքերը կողմնորոշված են յուրաքանչյուր մարդու հիմնական պահանջմունքներից մեկի՝ աշխարհի ինտելեկտուալ ընկալման պահանջմունքի բավարարմանը: Էթնոմանկավարժության դաստիարակչական ներգործությունն իրականա-

նում է պատմականորեն ստեղծված իրավական տեղեկատվության յուրացման միջոցով, որն ունի կարևորագույն նշանակություն ինչպես անձին իրավական տարբեր համակարգերի համեմատական վերլուծության դրդելու, այդպես նաև նրա մեջ դրական պատմական փորձն օգտագործելու ունակություն և օրինասեր վարքի սովորույթ ձևավորելու առումով:

Էթնոմանկավարժության մեջ ոչ պակաս կարևոր նշանակություն ունի կողմնորոշիչ-նորմատիվ գործառույթը, որը մարդուն նպատակամղում է դեպի որոշակի արժեքներ. այն դրսևորվում է նրանով, որ հասարակության անդամին պատվիրում է հետևել որոշակի կանոնների և գերապատվությունների, որոնցից շատերն ամրագրված են օրենսդրական ակտերում: Հարկ է նկատի ունենալ, որ ցանկացած ավանդույթ գոյություն ունի և կենսունակ է այնքան ժամանակ, քանի դեռ նրանում պարունակված գաղափարները, նորմերը, կանոնները սերունդներին փոխանցվում ու ընդօրինակվում են անառարկելիորեն: Դրանում է ավանդույթի պահպանողականությունը, գործնական ներուժը, ինչը չափազանց էական է իրավագիտակցության և օրինապահ վարքի սովորույթի ձևավորման համար: Հենց իրավագիտակցությունը և սովորույթներն են ամենից հաճախ բերում նրան, որ անձը բացասականորեն է վերաբերվում չափազանց արագ ընթացող սոցիալ-տնտեսական և իրավական բարեփոխումներին, հեղափոխական գաղափարներին, հատկապես եթե վերջիններս արմատապես հակասում են ժողովրդի պատմական փորձին [2, c. 94]:

Էթնոմանկավարժության հնարավորություններն իրավական դաստիարակության տեսության մեջ և գործնականում կենսագործելու համար անհրաժեշտ է նրա ներուժի ներառումը անձի իրավագիտակցության ձևավորման մյուս միջոցների համակարգ:

Ժամանակակից իրավական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից շատերի հիմքում ընկած են ժողովրդական մանկավարժության հավերժական դրույթները՝ մարդկանց ի բնե հավասարության ճանաչումը, յուրաքանչյուր անհատի եզակիությունը և անկրկնելիությունը, այլասերման, խոշտանգման և ինքնախոշտանգման բացառումը ցանկացած ոլորտում, Աստծո և օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությունը, բնության և մարդու կողմից ստեղծված արժեքների նկատմամբ հոգաձու վերաբերմունքը և այլն: Ժողովրդական մանկավարժությանը միշտ ներհատուկ և բնական է եղել բացասական երևույթների բացարձակ անընդունելիությունը ոչ միայն հասարակության, այլև բնության մեջ՝ լինի ապօրինի հատված ծառ, թե վանդակ նետված երգեցիկ թռչուն կամ վայրի կենդանի,

որոնք վերածվում են իրենց իսկ խրտվիլակների: Բնության գեղեցկություններով հիանալու և դրանք վայելելու մշակույթը, որպես կանոն, ձևավորվում է վաղ մանկությունից՝ այնտեղ, որտեղ աճում և բնակվում են կենդանի բնության օբյեկտները: Այսօր ժողովրդական մանկավարժության մեջ ամրագրված դրույթներից շատերն իրենց զարգացումն են գտել բնապահպանական իրավունքի նորմերում:

Միննույն ժամանակ, օրենսդրական գործընթացը ժամանակակից պայմաններում ունի էական հնարավորություններ՝ կապված էթնոմանկավարժության պատմական-իրավական կողմերի առավել նպատակաուղղված օգտագործման հետ:

Էթնոմանկավարժությունը, հենվելով այնպիսի բարոյա-իրավական հասկացությունների վրա, ինչպիսիք են, օրինակ, պատասխանատվությունը, պարտքը, պատիվը, խիղճը, համբերությունը, ապրումակցումը մերձավորին, ստեղծարար գործունեության պահանջմունքը և այլն, ապահովում է յուրահատուկ մանկավարժական միջավայր, որը դառնում է կարևորագույն միջոց քաղաքացու իրավական դաստիարակության համար: Անձի բարոյա-իրավական ձևավորումը տվյալ դեպքում իրականանում է մարդկության հասարակական-պատմական փորձը վերջինիս փոխանցելու ճանապարհով: Այդ փորձը հանդես է գալիս որպես այնպիսի օրինակ, որն իր մեջ խտացրել-մեկտեղել է բարոյա-իրավական չափանիշները՝ ընդունված հասարակության կողմից: Անշուշտ, այդ փորձը լայնորեն օգտագործվում է իրավական դաստիարակության գործընթացում, թեև, ինչպես ցույց է տալիս գործնական կյանքը, դրա հաշվառումը և իրացումը հաճախ կատարվում է տարերայնորեն, առանց իրավագիտակցության ձևավորման ու նորագույն տեխնոլոգիաների հետ անհրաժեշտ առնչության:

Հատուկ պետք է ընդգծել էթնոմանկավարժության դերը և նշանակությունն ազգամիջյան բարդացող հարաբերություններում կուտակված հիմնախնդիրների լուծման առումով: Դարավոր կենսափորձը ցույց է տալիս, որ սեփական էթնոսի հոգևոր-մշակութային ավանդույթների իմացությունը նպաստում է հետաքրքրությունների ձևավորմանը այլ էթնոսների մշակութային ավանդույթների նկատմամբ, ինչը հիմք է հանդիսանում ինչպես սոցիալ-էթնիկական, այնպես էլ մշակութային առումով բարձր վարք ձևավորող իրավական նորմերի համար միջանձնային հաղորդակցության և ազգամիջյան հարաբերությունների բնագավառներում:

Հուլիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Латышина Д.И.*, Этнопедагогика: учебник для СПО, М., Издательство Юрист, 2018, 394 с.
2. *Аминов И.И.*, Основы юридической педагогики: учебник для аспирантов, М., Просвещение, 2017, 272 с.
3. Юридическая педагогика. Учебник. Под ред. В.Я. Кикотя, проф. А.М. Столяренко, М., НИТИ-ДАНА. Закон и право, 2004, 895 с.
4. *Выготский Л.С.*, Собр. соч., в 6 т. М., 1982-1984, т. 3.

ԷԹՆՈՍՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Վաչիկ Բրուսյան

Ամփոփագիր

Արդի պայմաններում բացառիկ նշանակություն է ստացել էթնոմանկավարժության կուտակած հազարամյա փորձի արդյունավետ օգտագործումն այնպիսի կարևոր հիմնախնդրի լուծման համար, ինչպիսին հանրորեն նշանակալից նորմեր և արժեքներ կրող անձի ձևավորումն է՝ խարսխված սեփական էթնոսի իրավական-մշակութային ժառանգության վրա, ինչը թույլ է տալիս նրան հաջողությամբ կողմնորոշվելու և ինքնորոշվելու ժամանակակից բազմամշակութային միջավայրերում, հանդուրժողականությամբ վերաբերվելու այլ մշակույթների և կրոնների ներկայացուցիչներին:

Ազգային ավանդույթներում, սովորույթներում, բարքերում կուտակված է մանկավարժական հսկայական ներուժ, որը կարող է ծառայել իբրև գործուն միջոց իրավական դաստիարակության համար:

ВОСПИТАТЕЛЬНО-ПРАВОВОЙ ПОТЕНЦИАЛ ЭТНОПЕДАГОГИКИ

Вачик Брутян

Резюме

В современных условиях важное значение приобрело эффективное использование накопленного тысячелетнего опыта этнопедагогике для формирования личности, несущей в себе общественно значимые и нормы и ценности на основе

культурно-правового наследия собственного этноса. Это позволяет ей успешно ориентироваться и самоопределяться в современной мультикультурной среде, толерантно относиться к представителям других культур и религий.

В национальных традициях и обычаях накоплен огромный педагогический потенциал, который может послужить действенным средством для правового воспитания.

THE LEGAL-EDUCATIONAL POTENTIAL IN ETHNO-PEDAGOGY

Vachik Brutyan

Resume

In the modern conditions the millennial experience accumulated in ethno-pedagogy is gaining special importance for the solution of such important issues as the formation of the person, who has significant norms and values based on one's ethnic cultural legacy. This allows a person to successfully orientate and self-determine in modern multicultural environments and develop tolerance towards the representatives of the other cultures and religions.

There is a huge pedagogical potential contained in the national traditions, customs and mores, which may serve as an effective means of legal education.

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ՀՀ-ՈՒՍ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վահե Պողոսյան՝

Բանալի բառեր՝ ՀՀ սահմանադրություն, սոցիալական նշանակություն, պատգամավոր, մանդատ, ԱԺ կանոնակարգ, սահմանադրա-իրավական կարգավիճակ, ընտրազանգված, անձեռնմխելիություն:

Ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող պետությունում պատգամավորի սոցիալական նշանակությունն ու դերը սահմանվում են իր կողմից պետական համակարգում ժողովրդի ներկայացուցչի, նրա անունից լիազորված պետական իշխանության իրականացման գործառույթի պահպանման միջոցով [1]:

ՀՀ-ն, լինելով խորհրդային նախկին 15 հանրապետություններից մեկը, ժառանգել է այդ «կայսրության» բնորոշ առանձնահատկություններն օրենսդիր իշխանության գլխավոր դեմք համարվող պատգամավորների անձնական որակների առումով: Առ այսօր Հայաստանի երրորդ Հանրապետությունն ունեցել է Ազգային ժողովի 6 գումարում, որոնց ընթացքում պատգամավորների չնչին տոկոսն է օգտվել պատգամավորական լայն իրավունքներից և պահպանել իր պարտականությունները: Հայացք նետելով նախկին և ներկա պատգամավորների որակյալ մեծամասնության վրա՝ պետք է ընդգծենք, որ նրանք ունեցել են և ունեն անհամապատասխանություն Ազգային ժողովի կանոնակարգի 2-րդ գլխի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և այլ կետերի նկատմամբ, այսինքն՝ հաճախ այդ պարտականությունները պարզապես անտեսվել են կամ չեն կատարվել պատշաճ մակարդակով [2]: Հայ հասարակությունում առկա է այնպիսի քաղաքական մշակույթ, որը ենթադրում է պատգամավոր դառնալուց հետո պարփակվել օլիգարխիկ-կուսակցական կլանի մեջ և մոռանալ ժողովրդավարական գլխավոր սկզբունքներից մեկի՝ ընտրազանգվածի և սեփական ժողովրդի հետ անմիջական կապի պահպանման մասին: Տեղին է խոսել մինչև այսօր խորհրդարանում տեղ գտած մի շարք պատգամավորների կերպարների

¹ ԵՊՀ ուսանող:

մասին, որոնք այս կամ այն կերպ աղավաղել և աղավաղում են իրական պատգամավորի քաղաքական կերպարը: Այդպիսին են այնպիսի կերպարներ, որոնք Հայաստանով մեկ երթևեկում են ճոխ մեքենաների շքախմբերով, ունեցել են պատգամավորին ոչ հարիր վարքագիծ և Ազգային ժողովը շփոթել են ներկուսակցական անմիջական հավաքատեղիների և տոնախմբությունների համար նախատեսված սրահների հետ [3]:

5-րդ գումարման խորհրդարանի 9-րդ նստաշրջանի պատգամավորների գույքի և եկամուտների 2012-2016թթ. հայտարարագրերի դիտարկման արդյունքների համաձայն՝ խորհրդարանում եղել են 16 դուլարային միլիոնատերեր [4]: Մեր կարծիքով՝ իհարկե, լավ է, որ պատգամավորը լինի նյութապես ապահովված, քանզի դա գերծ կպահի պաշտոնեական այլ չարաշահումներից, սակայն ոչ բոլորն են գիտակցում, որ հենց իրենց՝ պատգամավորների գիտակցությունն է որոշում հասարակության կեցությունը:

Հիշարժան դիտարկում է նաև այն, որ 5-րդ գումարման խորհրդարանում առկա էին այնպիսի պատգամավորներ, որոնք չունեին խոսելու տարրական էթիկա, մայրենի լեզվի տիրապետման պարզագույն մակարդակ, ինչն անդրադառնում էր խորհրդարանական ուժերի նկատմամբ հասարակական անվստահության մակարդակի բարձրացման վրա: Ազգային ժողովը նաև երգիչ-երգչուհիների անհատական կայացման կամ ձևավորման վայրը չէ, դրա մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ թեկնածուն կտիրապետի քաղաքականության մասին տարրական գիտելիքների, քաղաքական մշակույթին հատուկ որոշակի առանձնահատկությունների: Հայ հայտնի կինոռեժիսոր Ռոման Բալայանը հետաքրքիր դիտարկում է արել այս առիթով՝ նշելով, որ իշխանական, կուսակցական բառերն արվեստի հետ որևէ կապ չունեն, երբ արվեստագետը պատգամավոր է դառնում, արվեստի հետ որևէ առնչություն այլևս ունենալ չի կարող:

Ներպետական մակարդակում կարևոր է ձևավորել այնպիսի քաղաքական մտածողություն, որ պատգամավորական գործունեությունը լինի միայն պետականամետ, պատգամավորական մանդատը լինի ծառայողական, ոչ թե իշխողական: Հարկ ենք համարում մեջբերել պատգամավոր Էդմոն Մարուքյանի խոսքերը: Ըստ նրա՝ պատգամավորին չպետք է ասել «բարով կառավարեք», այլ պետք է մաղթել, որ բարով ծառայի պետությանը, սեփական ժողովրդին: Կարևոր է նաև քաղաքացիական հասարակության կողմից ուղղակի վերահսկողության սահմանումն իր ընտրատարածքի պատգամավորի նկատմամբ, քանի որ նա պատասխանատու է միայն իր ընտրագանգվածի առջև: Այս իմաստով, ժողովրդական ներկայացուցիչների դերը

հասարակության քաղաքական կյանքում դժվար է գերազանահատել: Ժողովուրդը պետք է ունենա իր հատուկ ներկայացուցիչները՝ արտահայտելու որոշակի մեծամասնության կարծիքը: Միննույն ժամանակ, պետք է հիշել, որ ընտրողները հենց նույն ժողովրդի անբաժանելի մասն են կազմում: Մակայն պետք է նաև նշել, որ պատգամավորների լիազորությունների իրականացման մեխանիզմը ՀՀ-ում դեռևս մնում է բավականաչափ չզարգացած:

Մինչև սույն թվականի մայիսին երկրում տեղի ունեցած իրադարձությունները և իրավիճակի փոփոխությունը՝ քաղաքացիները մեծ ցանկություն ունեին քաղաքականությունը «լցնել» նոր դեմքերով, որոնք մասնագիտորեն օժտված կլինեն նոր բովանդակությամբ: Մա պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր հին իր հետ բերում է միօրինակություն և քաղաքական ապատիա, իսկ նոր դեմքերի ի հայտ գալը քաղաքականությանը տալիս է նոր շունչ, մոտիվացիա և հույսեր՝ ստեղծագործելու և արարելու սեփական պետության ներսում:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիներին, նրանք պատգամավոր ընտրելիս ավելի քիչ հաշվի են առնում նրա նախկին քաղաքական գործունեությունը, քան հետագա ծրագրերը, ընթացիկ գործելաոճը և հրատապ խնդիրներին լուծում տալու մասնագիտական տեխնիկան: Այս ամենից եզրակացնենք, որ պատգամավոր դառնալու համար անհատը պետք է օժտված լինի ֆունկցիոնալ-գործառնական և բարոյական բարձր հատկանիշներով, քանի որ հենց նրանք են սեփական քաղաքացիների հետ անմիջական կապի հաստատման վառ օրինակները [5]:

2016-2018թթ. Հասարակական կարծիքի ուսումնասիրման համառուսական կենտրոնի հետազոտությունների արդյունքում ի հայտ բերվեց «Պատգամավորի թեկնածուի իդեալական օրինակը», որի արդյունքում առանձնացվեցին այնպիսի գործառնական բնութագրիչներ, ինչպիսիք են խոսքի և գործունեության համապատասխանությունը, խոստումների իրականացումը, դրական և բացասական արդյունքների նկատմամբ պատասխանատվությունը, պրոֆեսիոնալիզմը, կարգապահությունը և այլն [6]: Հայաստանյան իրականության համար, այս ամենից բացի, հարկ է ավելացնել պետական շահերի պաշտպանության, ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու կարողության, արդարության, և որպես հիմնական չափանիշներ, հավատարմության ու բնակչությանն իրական ծառայություն մատուցելու հատկանիշները:

Վերոշարադրյալից ենթադրենք, որ պատգամավորները, լինելով օրենսդիր գործառույթներ իրականացնող քաղաքական պաշտոնյաներ,

պարտավոր են զգալ Ազգային ժողովի՝ որպես պետականակերտման հզոր կառույցի, մեծ դերակատարման ողջ պատասխանատվությունը:

Իրական պատգամավորին շարքային պատգամավորից տարբերելու համար հարկ է առանձնացնել հետազոտության արդյունքում պատգամավորին հատուկ անցանկալի հատկանիշները քաղաքացիների համար: Դրանք են՝ պոպուլիզմը, պասիվությունը, կոմպետենտ չլինելը, անինքնուրույնությունը, իշխանությունից կախված լինելը, անվճռականությունը և շոունենին հատուկ այլ հատկանիշներ: ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնության մեջ, թերևս, ամենատարածված բացասական հատկանիշներն են՝ պոպուլիզմը, կոմպետենտությունից զուրկ լինելը և ինքնուրույն չլինելը: Պոպուլիզմը ժամանակակից միջազգային հարաբերություններում առկա մեծագույն հիվանդություններից մեկն է, որից աշխարհը չի կարողանում ձեռքբազատվել: Կոմպետենտության մասին խոսելիս պատգամավորի յուրաքանչյուր թեկնածու նախքան մանդատ ստանալը պետք է ունենա սեփական ինքնագիտակցության բարձր մակարդակ՝ հասկանալու համար, թե արդյոք իր ուժերի սահմանում է՝ ստանձնել այդպիսի պատասխանատվություն և բարեխղճորեն ծառայել սեփական պետությանը: **Կախվածություն տերմինը հումանիտական հոգեվերլուծության համատեքստում նշանակում է անինքնուրույնություն, կապվածություն մի բանին, ինչը մարդուն հնարավորություն է տալիս բավարարված զգալ իրեն՝ ջանքեր չթափելով հասնելու այդ բավարարվածությանը: Այդ անինքնուրույնությունն արտահայտվում է հենց այլ՝ առողջ միջոցներով բավարարվածության հասնելու անընդունակությամբ: Բանն այն է, որ մասնակի անինքնուրույնությունը քաղաքականապես կարելի է հասկանալ և ըմբռնել, քանի որ, օրինակ, ընտրված լինելով համամասնական ընտրահամակարգով՝ պատգամավորը քաղաքական պատասխանատվություն է կրում սեփական կուսակցության նկատմամբ, սակայն երբ այդ անինքնուրույնությունը հասնում է բավական բարձր մակարդակի, այն դառնում է քաղաքական հիվանդություն տվյալ անձի համար: Տվյալ դեպքում պատգամավորը լիակատար կախվածության մեջ է ընկնում կուսակցությունից, իշխանական կերակրամանին առավել մոտ գտնվող անձանցից և զրկվում է ցանկացած որոշում միանձնյա ընդունելու հնարավորությունից:**

Վերոշարադրյալից գերծ մնալու համար ՀՀ խորհրդարանի պատգամավորները պետք է լինեն անկախ, ինքնուրույն և հավատարիմ սեփական ընտրագանգվածին, սեփական հասարակությանը և պետական շահերին, որոնք վեր են ամեն ինչից:

Այս ամենի բացասական հետևանքները հաշվի առնելով՝ առանձնացնենք պատգամավորի իդեալական թեկնածուի 3 տեսակ.

1. Իշխանության և բնակչության միջև հավատարիմ միջնորդ, որը հավաքագրում է խնդիրների մասին կապված ինֆորմացիան ներքնից վերև և լուծում է տալիս դրանց:
2. Վերահսկող, որը խիստ վերահսկողություն է իրականացնում հանձնարարությունների արդյունավետ կատարման նկատմամբ:
3. Պաշտպան, որը ներկայացնում է իր ընտրագանգվածի շահերը, կամայականություններից պաշտպանում է հասարակ մարդկանց:

Կարծում ենք, որ պատգամավորի իդեալական թեկնածուի վերոնշյալ երեք տեսակներն էլ հույժ անհրաժեշտ են երկուստեք՝ ներքնից վերև կամ հակառակը, արդար և ճիշտ համագործակցության հարցում:

ՀՀ Ազգային ժողովի արդյունավետ գործառնման խնդրում կարևոր է լուծել ևս մեկ խնդիր, որն անմիջականորեն վերաբերում է պատգամավորների: ԱԺ կանոնակարգում ամրագրված է, որ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, ինչը նշանակում է, որ խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում կամ հանձնաժողովի կազմից դուրս է գալիս միայն խմբակցության որոշմամբ [7]: Այլ կերպ ասած՝ հանձնաժողովների անդամների բաշխումը տեղի է ունենում ազատ ընտրության սկզբունքի վրա, ինչը ներկայում մեծ խնդիրներ է առաջացնում տվյալ հանձնաժողովի որակյալ աշխատանքի իրականացման գործընթացում: Խնդրի անկյունաքարային հարցն այն է, որ հանձնաժողովի անդամ է դառնում այն մարդը, որը թե՛ մասնագիտորեն և թե՛ գաղափարապես որևէ կապ չունի տվյալ հանձնաժողովի հովանու ներքո դրված հիմնահարցերի հետ (օր.՝ Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է դառնում այն մարդը, որը ոչ միայն տեղյակ չէ, թե ինչ է մարդու իրավունք հասկացությունը, այլև դրա անմիջական խախտողն է): Որպես խնդրի լուծում առաջարկում ենք ԱԺ խմբակցություններին և քաղաքական ուժերին առաջնորդվել պետական շահի սկզբունքով և յուրաքանչյուր հանձնաժողով պատվիրակել տվյալ հանձնաժողովի հիմնահարցերին քաջատեղյակ և կոմպետենտ պատգամավորների [8]:

ՀՀ խորհրդարանում մեկ այլ հիմնախնդիր է հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մշակույթի բացակայությունը: Մա պայմանավոր-

վում է այն հանգամանքով, որ երբեմն իշխող կուսակցություններն իշխանությունը և պետական ղեկը համարում են հարատև մասնավոր սեփականություն, ինչն, իր հերթին, բացասաբար է ազդում միջկուսակցական կայուն հարաբերությունների հաստատման գնով պետության զարգացմանը նպաստելու գործընթացի վրա: Այս իմաստով, միջկուսակցական կայուն կապերի ստեղծման գործում մեծ դերակատարում ունեն ինչպես ԱԺ պատգամավորները, այնպես էլ իրենց քաղաքական կուսակցությունները, որոնք պետք է բացառեն.

1. Իշխանական ինստիտուտի նկատմամբ բացարձակ հակակրանք տածելը:
2. Ընդդիմադիր պատգամավորների և քաղաքական ուժերի իզոլացումը, նրանց առաջարկ/օրինագծերի անհիմն անտեսումը և մերժումը:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ հակակրանք պետք է զգալ անձի, այլ ոչ թե իշխանական ինստիտուտի նկատմամբ, խորհրդարանում պետք է լսելի լինեն ընդդիմադիր ուժերի խելամիտ առաջարկները, եթե դրանք միտված են հասարակական և պետական շահերի պաշտպանությանը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում պետք է բացառվեն նաև պատգամավորների անհիմն բացակայությունները կամ ԱԺ գլխավոր դահլիճում հատուկ հանձնարարությամբ նրանց ներկայությունը՝ կողմ կամ դեմ քվեարկելու համար, պետք է բացառվեն այնպիսի պատգամավորների կերպարներ, որոնք մի շարք օրինագծերի տակ գրել են տալիս իրենց անունը՝ հետագայում դրանք որպես քաղաքական դիվիդենդներ օգտագործելու նպատակով: Այսպիսով, եզրակացնենք, որ անկախ ցանկացած քաղաքական պատկանելությունից՝ խորհրդարանում պետք է աշխատել բարեխղճորեն և ունենալ բարձր պատասխանատվության զգացում, քանի որ պատգամավորների խորհրդարանական պատասխանատվությունը խորհրդարանական կարգավիճակի, խորհրդարանի աշխատանքների կազմակերպման առնչությամբ առանձին իրավական պատասխանատվության, պատգամավորների վարքագծի և կարգապահության կարևոր բաղադրիչն է: Այդ պատասխանատվությունը փոխկապակցված է պատգամավորների պատասխանատվության այլ տեսակների հետ, ինչպիսին է, օրինակ, խորհրդարանական անձեռնմխելիությունը:

Դիխոտոմիայի տեսքով հանդես եկող մեկ այլ հիմնախնդիր է պատգամավորի օգնականի ինստիտուտը, քանի որ Ազգային ժողովի պատգամավորը օրենքով սահմանված կարգով իրավունք ունի ունենալու երկու

օգնական՝ մեկը հասարակական, մյուսը վճարովի հիմունքներով [7]: Տվյալ հիմնախնդրի պարզաբանման համար մեզ անհրաժեշտ է պատգամավորի կերպարը բաժանել երկու տեսակի.

1. Աշխատող իրական պատգամավոր, որի համար հույժ կարևոր է ունենալ օգնականի ինստիտուտ, քանի որ առանց լրացուցիչ օգնության պատգամավորը միայնակ չի կարող հասցնել ոչինչ անել խիստ զբաղված լինելու պատճառով:
2. Չաշխատող կեղծ պատգամավոր. սրանք այն պատգամավորներն են, որոնք այս կամ այն ճանապարհով ինչ-որ կերպ հասել են պատգամավորական մանդատի, սակայն չեն տիրապետում մասնագիտական որևէ գիտելիքի և չունեն ինքնագիտակցության բավարար մակարդակ դա ընկալելու համար: Նմանատիպ պատգամավորների համար նույնպես անչափ կարևոր է ունենալ արհեստավարժ օգնականներ, որոնք իրենց վրա կվերցնեն աշխատանքի ողջ պատասխանատվությունն ու պատգամավորի օրակարգին հատուկ ծանրությունը:

Այստեղից եզրակացնենք, որ պատգամավորների վերոնշյալ երկու տիպերի դեպքում էլ բավական կարևոր է ունենալ օգնականներ, որոնք ահռելի մեծ օժանդակություն են ցուցաբերում պատգամավորներին հնգամյա մանդատի ընթացքում: Սակայն, մեր կարծիքով, վերոնշյալ երկու օրինակներից առավել ընկալելի և ընդունելի է պատգամավորի առաջին տեսակը, քանի որ պատգամավորը հենց ինքը պետք է աշխատի, իսկ օգնականները չպետք է իրենց վրա վերցնեն ողջ աշխատանքի ծանրությունը, այլ պարզապես օժանդակեն պատգամավորներին:

Հուլիս, 2018թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Богданова Н.А.*, Статус народного депутата: новые нормы и практика // Вестник Московского Университета, Сер. 11, Право, 1990, № 6, с. 12.
2. <http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm>
3. *Etyka parlamentarysty a konflikt interesow w postępowaniu ustawodawczym* // Etyka i polityka / Ed. E.M. Marciniak, T. Moadawa, K.A. Wojtaszczyk. Warszawa, 2001.
4. <https://www.youtube.com/watch?v=vsykHBrQxNw>
5. *Sutor B.*, Etyka polityczna, Warszawa, 1994.
6. <https://wciom.ru/index.php?id=236&uid=115725>
7. <http://www.parliament.am/parliament.php?id=bylaw&lang=arm>
8. *Franke Joseph*, National Interest, London, Pall Mall, 1970.

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վահե Պողոսյան

Ամփոփագիր

ՀՀ-ն, լինելով խորհրդային նախկին 15 հանրապետություններից մեկը, ժառանգել է այդ «կայսրության» բնորոշ առանձնահատկություններն օրենսդիր իշխանության գլխավոր դեմք համարվող պատգամավորների անձնական որակների և առանձնահատկությունների առումով, ինչն իր հերթին բացասաբար է ազդում Ազգային ժողովի և առհասարակ օրենսդիր իշխանության լեգիտիմ ընկալման վրա: Ազգային ժողովը պետք է դառնա այն վայրը, որտեղ իրենց գործունեությունը կծավալեն արհեստավարժ, բարեխիղճ և կոմպետենտ անհատականություններ, իսկ պատգամավորները, լինելով ժողովրդի պատվիրակված անձինք խորհրդարանում, պարտավոր են այնտեղ ներկայացնել և լուծում տալ իրենց ընտրագանգվածի խնդիրներին, ընդունել պետականամետ և ժողովրդամետ օրենքներ և պրոֆեսիոնալիզմի ու հայրենիքի հանդեպ մեծ պատասխանատվության հաշվին զարգացնել և հզորացնել սեփական պետությունը:

СТЕРЕОТИПЫ ДЕПУТАТА НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РА И НЫНЕШНЯЯ СИТУАЦИЯ

Варе Погосян

Резюме

Будучи одной из бывших 15 советских республик, РА унаследовала определенные особенности относительно личных качеств депутатов, считающихся главными лицами законодательной власти, что в свою очередь отрицательно влияет на восприятие Национального Собрания и особенно законодательной власти в качестве легитимных. Национальное Собрание должно стать тем местом, где профессионалы, добропорядочные и компетентные личности будут развивать свою деятельность, а депутаты, будучи делегированными со стороны народа, обязаны в полной мере давать огласку, представлять и решать проблемы избирателей, принимать законы, защищающие интересы государства и народа, развивать и укреплять собственное государство за счет высокой степени ответственности к профессионализму и любви к Родине.

**THE STEREOTYPES OF PARLIAMENT MEMBER
IN ARMENIA AND THE CURRENT SITUATION**

Vahe Poghosyan

Resume

As one of the 15 former Soviet republics, the Republic of Armenia has inherited certain features with regards to personal qualities and specificities of MPs characterizing the Soviet “empire’s” main figures of the legislative body, which in turn, negatively impact the perception of legitimacy of the National Assembly and the legislative body in general. The National Assembly should become the place where proficient, honest and competent individuals work; and MPs, as persons in the Assembly delegated by the people, are obliged to fully voice, present, and solve the issues of their electorate, establish pro-state and pro-national laws, and develop and strengthen their own country with their professionalism and high sense of responsibility towards the homeland.

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 05.10.2018թ.
Թիվ 4 (80), 2018թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում